

«ԵՐԵՎԱՆ ԶՈՒՐ», «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՈՒ-
ԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ՇԻՐԱԿ-ԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ
ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԶՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ
ԱՅԼ ԳՈՒՅՔԻ

Վարձակալության Պայմանագիր

**Հայաստանի Հանրապետության կառավարության՝
ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարության
Ջրային տնտեսության պետական կոմիտեի
(այսուհետ՝ Վարձատու)**

և

**«.....» փակ բաժնետիրական ընկերություն
(այսուհետ՝ Վարձակալ)**

և

**«.....»
(այսուհետ՝ Հայտատու)**

միջև

**ք. ԵՐԵՎԱՆ
[ամիս] [օր], 2016 թ.**

Բովանդակություն

1.	Գործարքի ձևը	1
	Հոդված 1. Պայմանագիրը	2
1.1.	Պայմանագրի մասերը	2
1.2.	Գերակայության կարգը	2
1.3.	Սահմանումներ	3
	Հոդված 2. Վարձատրություն և վճարման պայմանները	4
2.1	Բաժանորդներից վճարների գանձման իրավունքը	4
2.2	Վարձակալության վճար	4
2.3	Վարձակալության վճարի վճարման պայմանները	4
2.	Պայմանագրի Ընդհանուր պայմաններ	5
	Հոդված 1. Պայմանագիրը և նրա մեկնաբանությունը	5
1.1	Սահմանումներ	5
1.2	Պայմանագրի փաստաթղթերը	11
1.3.	Մեկնաբանություն	11
1.3.1.	Լեզուն	11
1.3.2.	Անձինք	11
1.3.3.	Վերնագրերը	11
1.3.4.	Եզակի կամ հոգնակի թվի օգտագործումը	11
1.3.5.	Հղումներ արժույթին	12
1.3.6.	Հղումներ	12
1.3.7.	Քերականական ձև	12
1.3.8.	Ամբողջի մասերը	12
1.3.9.	Օրենսդրություն և իրավասություն	12
1.3.10.	Համապարտ և առանձին պատասխանատվություն	12
1.3.11.	Փաստաթղթերում փոփոխությունները	13
1.3.12.	Մեկնաբանում և կիրառում	13
1.3.13.	«Ներառյալ» բառի օգտագործումը	13
	Հոդված 2. Հավաստիացումներ և երաշխիքներ	14
2.1.	Վարձակալի հավաստիացումները և երաշխիքները	14
2.2.	Վարձատուի հավաստիացումները և երաշխիքները	16
2.3.	Վարձակալի և Հայտատուի հավաստիացումները, հրաժարումները և երաշխավորությունները	17
2.4.	Ներկայացված փաստաթղթերի վրա հիմնվելը	20
2.5.	Երաշխիքների բացառումը	20
	Հոդված 3. Պայմանագրի սկիզբը, ավարտը և պայմանագրի ընդհատումը ..	21
3.1.	Ուժի մեջ մտնելը	21
3.2.	Պայմանագրի ժամկետի ավարտը	22
3.3.	Ծառայությունների իրականացման ժամկետը	22
3.4.	Ծառայությունների իրականացումն Ավարտման օրվանից հետո ..	22

3.5.	Փոխանցում/Ընդունում	23
3.6.	Պայմանագրի երկարաձգումը.....	24
3.7.	Անհաղթահարելի ուժ	24
3.7.1.	Ընդհանուր դրույթներ	24
3.7.2.	Պայմանագրային պարտավորությունների կատարումը	25
3.7.3.	Ձեռնարկվելիք միջոցառումները	25
3.7.4.	Ժամկետների երկարաձգումը.....	26
3.7.5.	Խորհրդակցում	26
3.8.	Պայմանագրի վաղաժամկետ լուծում և փոփոխություններ.....	26
3.8.1.	Պայմանագրի լուծումը Վարձատուի կողմից	26
3.8.2.	Պայմանագրի պատճառաբանված լուծման մասին ծանուցման պահանջը.....	29
3.8.3.	Պայմանագրի չպատճառաբանված (նպատակահարմարության պատճառով) լուծման մասին ծանուցման պահանջը	29
3.8.4.	Պայմանագրի լուծումը Վարձակալի կողմից	30
3.8.5.	Լուծման մասին ծանուցում Վարձակալի կողմից	30
3.8.6.	Ծառայությունների մատուցման դադարեցումը.....	30
3.8.7.	Կիրառվող օրենսդրության փոփոխություն	31
3.8.8.	Տնտեսական հավասարակշռության խախտում	33
	Հոդված 4. Գույք	36
4.1.	Վարձատուի կողմից տրամադրվող Գույքը	36
4.2.	Սեփականության իրավունքը	36
4.3.	Հողը	37
4.4.	Օգտագործման իրավունքը	37
4.5.	Հետ հանձնումը.....	37
	Հոդված 5. Ներդրումների իրականացումը վարձակալության ժամկետի ընթացքում	38
5.1	Ընդհանուր դրույթներ	38
5.2	Օժանդակ սարքավորումների վերաբերյալ Վարձակալի պարտավորությունները.....	40
5.3	Կապիտալ ծախսերի իրականացումը	41
5.3.1	Ընդհանուր դրույթներ	41
5.3.2	Վարձակալը որպես ՄՖԿ-ների ներդրումային ծրագրերի գնումների սուբյեկտ	41
5.4	Այլ ներդրումներ	42
	Հոդված 6. Վարձատուի իրավունքները և պարտավորությունները	43
6.1.	Աջակցությունը և ազատումը.....	43
6.2.	Հողի, Գույքի և դրանց առնչվող տեղեկատվության մատչելիությունը.....	43
6.3.	Սարքավորումներ, նյութեր, գույք.....	44
6.4.	Ներկայացված փաստաթղթերի քննարկումն ու հաստատումը ...	45
6.5.	Մտավոր սեփականություն	45
6.5.1.	Մտավոր սեփականության երաշխիքները.....	45

6.5.2.	Նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության պատկանելությունը (սեփականությունը).....	46
6.5.3.	Այլ մտավոր սեփականության պատկանելությունը.....	46
6.5.4.	Ենթա-լիցենզիայի տրամադրումը.....	47
6.5.5.	Մասնակիցների կողմից երաշխավորումը.....	47
6.6.	Պայմանագրի վերահսկողությունը.....	47
6.7.	Անկախ Տեխնիկական Աուդիտոր.....	48
6.7.1.	Անկախ Տեխնիկական Աուդիտորի վարձումը.....	48
6.7.2.	Տեխնիկական, շահագործման և պահպանման, կառավարման տարեկան աուդիտ.....	49
6.8.	Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունը.....	50
	Հոդված 7. Վարձակալի հիմնական իրավունքներն ու պարտականությունները.....	51
7.1.	Հիմնական իրավունքները.....	51
7.1.1.	Տևողությունը.....	51
7.1.2.	Հարակից իրավունքներ.....	51
7.1.3.	Վարձակալի կողմից Սակագների կիրառման իրավունքի ճանաչումը.....	51
7.1.4.	Օգտագործման բացառիկությունը.....	52
7.2.	Վարձակալի պարտականությունները.....	52
7.2.1.	Ծառայությունները և Կատարողական չափանիշները.....	52
7.2.2.	Սպասարկման տարածքը.....	54
7.2.3.	Գույքը.....	54
7.2.4.	Հանրային ճանապարհների վրա տեղաբաշխված խողովակաշարերը և այլ ծառայություններ մատուցողների հետ աշխատանքների համակարգումը.....	54
7.3.	Ծառայությունները կարգավորող օրենքը.....	55
7.4.	Շահերի բախում.....	55
7.4.1.	Հակասող գործունեության արգելում.....	55
7.4.2.	Գործունեության հատուկ տեսակների արգելումը.....	55
7.4.3.	Շահագործման բոլոր կարևոր ցուցանիշների բացահայտումը պարբերական հաշվետվություններում.....	56
7.5.	Գաղտնիության պահպանում.....	57
7.6.	Վարձակալի պատասխանատվությունը և փոխհատուցման պարտականությունը.....	57
7.6.1.	Հայտատուի և Վարձակալի պատասխանատվությունը.....	57
7.6.2.	Հայտատուի և Վարձակալի փոխհատուցման պարտականությունը.....	58
7.7.	Վարձատուի պատասխանատվությունը.....	58
7.8.	Վարձակալի կողմից իրականացվող ապահովագրությունը.....	59
7.9.	Պայմանագրի գրառումները, հաշվապահություն և աուդիտ.....	60
7.9.1.	Պայմանագրի գրառումներ.....	60
7.9.2.	Հաշվապահություն.....	61

7.10.	Կապալառուներ	61
7.11.	Հանդիպումներ	61
7.12.	Հաշվետվություններ	61
7.12.1.	Հաշվետվությունների նպատակը	61
7.12.2.	Հաշվետվություններ ներկայացնելու պահանջները	62
7.12.3.	Պայմանագրի հաշվետվությունների ներկայացում	62
7.13.	Կատարողական երաշխիք	62
7.13.1.	Տրամադրում	62
7.13.2.	Թարմացումը և համալրումը	62
7.13.3.	Կատարողական երաշխիքի վերացումը	63
7.13.4.	Գանձված գումարների վերադարձման դեպքերը	63
7.14.	Վթարներ	64
7.14.1.	Վթարների Արձագանքման Ծրագիր	64
7.14.2.	Վթարների մասին տեղեկացում	64
7.14.3.	Ծախսերը	64
7.14.4.	Վթարների առաջացման պատասխանատվությունը	65
7.14.5.	Վեճեր	65
7.14.6.	Խմելու ջրի որակի ստանդարտներին անհամապատասխանությունը	65
7.15.	Հայտատուի պարտավորություններ	66
7.16.	Վարձակալի ֆինանսական սահմանափակումներ	66
	Հոդված 8. Վարձակալության վճար	68
8.1	Վճարվելիք գումարը	68
8.2	Վճարումների կարգը	68
	Հոդված 9. Սակագներ և շահույթ	69
9.1.	Սակագների սահմանում	69
9.2.	Սակագնի առանձնահատուկ ճշգրտումներ	69
9.3.	Գերշահույթ	69
	Հոդված 10. Կատարողական չափանիշները չապահովելու համար նախատեսված տուժանք	70
10.1	Տուժանքի կիրառում	70
10.2	Կիրառվող Օրենսդրության համաձայն տուժանքի կիրառման ազդեցությունը	70
10.3	Բաժանորդներին տուգանքների վճարում	70
10.4	Բացառիկ միջոց	70
	Հոդված 11. Տեղական աշխատակազմ	72
11.1.	Ընդհանուր դրույթներ	72
11.2.	Վերապատրաստում	72
	Հոդված 12. Վեճերի կարգավորում	73
12.1.	Բարյացակամություն	73
12.2.	Պայմանագրի գործողությունը	73
12.3.	Միջնորդ	73
12.4.	Արբիտրաժի իրավունք	74

12.5.	Արբիտրաժի կարգավորումը	74
12.6.	Արբիտրաժի կանոնները	75
12.7.	Գործի քննման վայրը, լեզուն	75
Հոդված 13. Այլ դրույթներ		76
13.1.	Համապարփակ համաձայնագիր	76
13.2.	Փոփոխություններ	76
13.3.	Վարձակալի անկախ լինելը	76
13.4.	Պարտականությունների կատարումը	77
13.5.	Պայմանագրի մասնակի խախտում	77
13.6.	Ծանուցումներ	77
13.7.	Լիազոր ներկայացուցիչներ	78
13.8.	Հարկեր, տուրքեր, մաքսատուրքեր, գանձումներ և վճարներ	79
13.9.	Փոխանցում	79
13.10.	Պարտականությունների շարունակելիությունը	80
13.11.	Կոռուպցիոն գործարքներ	81
13.12.	Պայմանագիրը կառավարող օրենսդրություն	81
13.13.	Գործարքի ձևը և Պայմանագիրը	81
13.14.	Բաժնեմասի փոխանցման սահմանափակում	81
13.15.	Այլ վեճեր	82

1. Գործարքի ձևը

Հաշվի առնելով.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության՝ Բաժանորդներին մատուցվող ծառայությունների արդյունավետությունը, կենսունակությունը և որակը, ինչպես նաև սույն Պայմանագրի առարկա հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, արդյունավետությունը բարելավելու նպատակը, և այն որ՝
2. Վարձատուն ստացել է բոլոր անհրաժեշտ հաստատումները և գործում է Կիրառվող օրենսդրության համաձայն, ըստ այնմ, որպեսզի Վարձատուն հնարավորություն ունենա սույն պայմանագիրը կնքել, և
3. Վարձատուն իրավասու է կնքել սույն պայմանագիրը, Պայմանագրի գործողության ժամկետում դրանում փոփոխություններ և/կամ լրացումներ կատարելու մասին համաձայնագրերը՝ Կիրառվող օրենսդրության համաձայն, և
4. Հայտատուն Վարձատուին ներկայացրել է փաստարկներ, որ Վարձակալն ունի Սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի արդյունավետ և տնտեսական շահութաբերության առավել բարձր մակարդակով և ծառայությունների որակով շահագործման, պահպանման և զարգացման համար անհրաժեշտ կարողություններն ու ունակությունները, և
5. Հայտատուն, ի պատասխան Հայաստանի Հանրապետության _____ կողմից 2016թ. _____ հրավերի, ներկայացրել է իր հայտը և ընտրվել է որպես Վարձակալի միջոցով Հավելված 2-ում («Ծառայությունների նկարագրություն») նշված Ծառայություններն իրականացնող, և
6. Վարձակալը և Հայտատուն ունեն սույն Պայմանագիրը ստորագրելու համապատասխան իրավասություններ և լիազորություններ,
[և]
7. Հայտատուն երաշխավորում է Վարձատուին Վարձակալի կողմից Պայմանագրի դրույթների իրականացումը,

ինչպես նաև հաշվի առնելով փոխադարձ պայմանավորվածությունները և ստորև ներկայացված համաձայնությունները, Վարձատուն, Վարձակալը և Հայտատուն համաձայնվում են հետևյալի մասին.

Հողված 1. Պայմանագիրը

1.1. Պայմանագրի մասերը

Սույն պայմանագրի մաս են հանդիսանում սույն 1.1 կետում նշված հետևյալ տարրերը, և դրանք բոլորը պետք է կարդացվեն և մեկնաբանվեն որպես Պայմանագրի բաղկացուցիչ մասեր.

- (1) Գործարքի ձև,
- (2) Պայմանագրի Ընդհանուր պայմաններ,
- (3) Պայմանագրի Ընդհանուր պայմանների հետևյալ հավելվածներ, որոնք են.

Հավելված 1	Պայմանագրի հատուկ պայմաններ,
Հավելված 2	Ծառայությունների նկարագրություն,
Հավելված 3	Գույքի նկարագրություն,
Հավելված 4	Հողի և դրա նկատմամբ իրավունքների նկարագրություն,
Հավելված 5	Սպասարկման տարածքի նկարագրություն,
Հավելված 6	Կատարողական չափանիշները, որակի նկատմամբ ներկայացվող պահանջներ և տույժեր,
Հավելված 7	Հաշվետվություններ,
Հավելված 8	Հայտատուի առաջարկ (հայտ),
Հավելված 9	Կատարողական երաշխիք,
Հավելված 10	Հայտի գնի ձև, որը լրացրել է Հայտատուն իր առաջարկի մեջ:
Հավելված 11	Հանդիպումների արձանագրություններ

1.2. Գերակայության կարգը

(1) Գործարքի ձևի 1.1 կետում նշված Պայմանագրի մասերի միջև տարակարծությունների կամ հակասությունների դեպքում 1.1(3) կետում նշված Հավելվածները գերակա են Պայմանագրի Ընդհանուր պայմանների նկատմամբ, բացառությամբ սույն՝ 1.2 (3) կետում նախատեսված դեպքի:

(2) Սույն Պայմանագրի Ընդհանուր պայմանների դրույթների կամ մասերի կամ 1.1.(3) կետում նշված Հավելվածների դրույթների կամ մասերի միջև հակասությունների դեպքում առավել մանրամասնող դրույթները կգերակայեն ընդհանուր բնույթի դրույթներ պարունակող կետերի նկատմամբ և ընդհանուր առմամբ կգերակայեն այն կետերը, որոնք բխում են տվյալ իրավական ակտի

էութունից կամ սույն Պայմանագրով կարգավորային իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի սկզբունքներից:

(3) Եթե Հավելված 8-ի («Հայտատուի հայտը») որևէ դրույթ կամ մաս չի համապատասխանում կամ հակասում է Պայմանագրի մյուս մասերում նշված որևէ դրույթի կամ պայմանի, ապա գերակա է համարվում Պայմանագրի մնացած մասերում նշված դրույթը:

1.3. Սահմանումներ

Սույն Պայմանագրում մեծատառով բերված բառերն ու արտահայտություններն ունեն այն իմաստը, որը նշված է սույն Պայմանագրի Ընդհանուր պայմաններում (ԸՊ) և Ընդհանուր պայմանների Հավելվածներում:

Հողված 2. Վարձատրություն և վճարման պայմանները

2.1 Բաժանորդներից վճարների գանձման իրավունքը

Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցելու ընթացքում Վարձակալն իրավունք ունի Բաժանորդներից գանձել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման դիմաց վճարները:

2.2 Վարձակալության վճար

Գույքի վարձակալման դիմաց Վարձակալը պետք է Վարձատուին վարձակալության վճար վճարի՝ սույն պայմանագրով գույքի օգտագործման և տիրապետման իրավունքի դիմաց:

2.3 Վարձակալության վճարի վճարման պայմանները

Վարձակալի կողմից Վարձատուին վճարվող վարձակալական վճարի վճարման պայմաններն ու ընթացակարգը նկարագրված են Պայմանագրի Ընդհանուր պայմաններում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Վարձատուն և Վարձակալը կնքեցին սույն Համաձայնագիրն՝ իրենց կողմից լիազորված ներկայացուցիչների միջոցով:

Կնքված է՝ [ամսաթիվ, վայր]:

ՎԱՐՁԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեի

Հայաստանի Հանրապետության
էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության
Ջրային տնտեսության պետական կոմիտեի
նախագահ

ՎԱՐՁԱԿԱԼ

Անուն, ազգանուն

_____ փակ բաժնետիրական ընկերության
Պաշտոն՝ լիազորված անձ

ՀԱՅՏԱՏՈՒ

Անուն, ազգանուն՝ _____

_____ *Պաշտոն՝*

2. Պայմանագրի Ընդհանուր պայմաններ

Հոդված 1. Պայմանագիրը և նրա մեկնաբանությունը

1.1 Սահմանումներ

Սույն Պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

Փոխկապակցված անձն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, մեկ կամ մի քանի միջնորդների միջոցով մեկ այլ անձի վերահսկող կամ նրա կողմից վերահսկվող անձն է, կամ այդ անձի հետ միասին վերահսկողության տակ գտնվող անձն է: Սույն սահմանման իմաստով «վերահսկել» նշանակում է բաժնետիրական կապիտալում 50 տոկոսից ավելի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն կամ որևէ այլ մասնակցություն, որը տալիս է սովորական ձայնի կամ կառավարումն որևէ ուղղությամբ տանելու իրավունք:

Կիրառվող օրենսդրությունը Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական ուժ ունեցող իրավական այլ ակտերն են՝ այնպես ինչպես դրանք կարող են ընդունվել ու փոփոխվել ժամանակ առ ժամանակ:

Լիազոր ներկայացուցիչները Վարձատուի և Վարձակալի կողմից ԸՊ 13.7 կետի համաձայն նշանակված անձինք են, որոնք պատասխանատու են Պայմանագրի կողմերի միջև հարաբերություններն ապահովելու և կարգավորելու համար:

Բազիսային տարին մեկ տարվա ժամանակահատվածն է, որը սկսվում է 2017 թվականի հունվարի 1-ին և ավարտվում է 2017 թվականի դեկտեմբերի 31-ին:

Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունը ԸՊ 6.8 կետում նկարագրված հաշվետվությունն է:

Հայտատուն Պայմանագրի կապակցությամբ ներկայացված Հայտում նշված՝ Պայմանագրի կնքման օրվա դրությամբ Վարձակալի բաժնետերը կամ բաժնետերերը և նրանց հետ Փոխկապակցված անձինք են:

Աշխատանքային օրը շաբաթ, կիրակի և «Տոների և հիշատակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ոչ աշխատանքային օրերից բացի ցանկացած օրն է:

Կապիտալ աշխատանքները Սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման նպատակով իրականացված աշխատանքների արդյունքում ժամկետի ընթացքում ստեղծված Գույքն է, ինչպես նաև այն աշխատանքները, որոնց արդյունքում ՖՀՄՍ-ների համաձայն տեղի է ունենում Գույքի արժեքի ավելացում:

Փոփոխություն վերահսկողների կազմում նշանակում է որևէ Անձի նկատմամբ ուղղակի կամ անուղղակի վերահսկողություն իրականացնող Անձի փոփոխություն: Սույն սահմանման համաձայն «վերահսկողություն» տերմինը

(ներառյալ «վերահսկվում է», «վերահսկողության ներքո») որևէ Անձի առնչությամբ նշանակում է ուղղակի կամ անուղղակի կերպով վերահսկվող Անձի կառավարման մեջ ուղղություն տալու կամ դրա համար պատճառ հանդիսանալու իրավունքը բաժնեմասերի սեփականության, քվեարկության իրավունքի կամ որևէ այլ իրավունքի հիման վրա:

Օրենսդրության փոփոխությունը՝

- ա) նոր Կիրառվող օրենսդրությունն է, որը գոյություն ունեցող Կիրառվող օրենսդրության այնպիսի լրացում կամ փոփոխություն է նախատեսում, որն ազդում է Գույքի շահագործման վրա, կամ
- բ) Կիրառվող օրենսդրության կիրառման և մեկնաբանման կարգի փոփոխությունն է, որը
 1. տեղի է ունենում հայտի ներկայացման օրվան նախորդող 30-րդ օրվանից հետո,
 2. Վարձակալը պարտավոր է կատարել դրա պահանջները,
 3. մինչև Պայմանագրի կնքումը Վարձակալը դրա մասին տեղյակ չէր կամ չէր կարող ողջամտորեն ակնկալել, որ այդպիսի փոփոխություն պետք է լինի, և
 4. անմիջականորեն և բացասաբար կերպով էապես ազդում է Վարձակալի կողմից սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների իրականացման վրա:

Ընկերությունը սույն պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ Սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող ընկերություններ՝ ներառելով «Երևան ջուր» և «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունները:

Պայմանագիրը սույն պայմանագրի Գործարքի ձևը և Ընդհանուր պայմանները և Ընդհանուր պայմանների Հավելվածներն են, ինչպես նկարագրված է Գործարքի ձևի 1.1 կետում:

Պայմանագրի գրառումները Ծառայություններն իրականացնելու ընթացքում համաձայն ԸՊ 7.9.1 կետի Վարձակալի կողմից պատրաստվելիք տվյալները և փաստաթղթերն են:

Պայմանագրային տարին Պայմանագրային առաջին տարին Մեկնարկային օրվանից սկսվող և 2017 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող ժամանակահատվածն է, երկրորդից /2/ մինչև տասնհինգերորդ /15/ պայմանագրային տարիները՝ համապատասխանաբար հաջորդող օրացուցային տարիներն են:

Բաժանորդների հետ պայմանագրերը Վարձակալի և Բաժանորդների միջև կնքված Սպասարկման տարածքում ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերն են:

Բաժանորդները Պայմանագրի իմաստով՝ Վարձակալից ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայություններ ստացող Անձինք են:

Վարձակալության պայմանագիր

Օրը հայաստանյան ժամանակով կեսգիշերից մինչև հաջորդ կեսգիշեր օրացուցային օրն է:

Բացահայտված տեղեկատվությունը Վարձակալի, Հայտատուի կամ նրանց Փոխկապակցված անձանց, Ընկերության կամ Վարձատուի կողմից կամ նրանց անունից ստացված ցանկացած բնույթի (բանավոր, տեսողական, գրավոր, կամ որևէ կերպ գրանցված կամ որևէ միջոցով փոխանցված) տեղեկատվությունն է:

Ուժի մեջ մտնելու օրն ԸՊ 3-րդ հոդվածում նկարագրված օրն է:

Վթառը ժամանակավոր և հանկարծահաս երևույթն է, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ Սպասարկման տարածքում Ծառայությունների մատուցման էական ընդհատումների:

Վթարների արձագանքման ծրագիրը Վարձատուի կողմից ներկայացված և Վարձակալի կողմից համաձայն ԸՊ 7.14.1 կետի վերանայման ենթակա ծրագիրն է:

Ավարտման օրը Մեկնարկային օրվա 15-րդ տարելիցի օրն է, որը կարող է հետաձգվել համաձայն ԸՊ 3.6 կետի:

Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը (ՊԿԱԾ) Վարձակալի միջոցների հաշվին Հավելված 2-ի համաձայն Վարձակալի կողմից իրականացման ենթակա պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրն է:

Բաժնեմասը Վարձակալի կանոնադրական կապիտալում Հայտատուի կատարած ներդրման արդյունքում Հայտատուի ունեցած մասն է:

Գույքը նշանակում է ստորագրման օրվա դրությամբ գոյություն ունեցող Գույքի ցանկում ներառված ամբողջ գույքը, որի ամբողջական ցուցակը տրված է Հավելված 3-ում, ինչպես նաև ժամկետի ընթացքում Գույքի ցանկում ներառված Կապիտալ աշխատանքները:

ԸՊ Պայմանագրի Ընդհանուր պայմանների հապավումն է, իսկ ԸՊ հապավմանը հետևող թվագրումները վերաբերում են Պայմանագրի Ընդհանուր պայմանների համապատասխան հոդվածին կամ այդ հոդվածի մասին կամ ենթակետին:

ՀՀ կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությունն է:

Լավագույն արդյունաբերական պրակտիկա նշանակում է այն պրակտիկան կամ գործառույթները, մեթոդները և ակտերը, որոնք ընդհանրապես կիրառվում են կամ ընդունվում են ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում և լավագույն արդյունք ունեցող երկրներում, որոնք տվյալ պահին առկա փաստերի լույսի ներքո ողջամիտ դատողությունների կիրառման դեպքում կամ որոշումների կայացման պահին պետք է, որ հայտնի լինեին, և որոնց արդյունքում կարելի է սպասել, որ Կիրառվող օրենսդրությանը համապատասխան կերպով հնարավոր կլինի հասնել ցանկալի արդյունքների, ներառյալ այնպիսի ողջամիտ քայլերի ձեռնարկումը, որոնք կապահովեն հետևյալը.

- (1) համապատասխանությունը Հայաստանում այս ոլորտում սովորաբար կիրառվող բոլոր տեխնիկական ստանդարտներին և Խելամիտ Ինժեներական պրակտիկայի պահանջներին,
- (2) նորմալ պայմաններում և խելամտորեն կանխատեսելի ոչ նորմալ պայմաններում, Ծառայությունների մատուցման համար պահանջվող համապատասխան նյութերի, միջոցների և մասերի առկայությունը,
- (3) բավարար քանակով և համապատասխան որակավորմամբ (այնքանով, որքանով պահանջվում է Կիրառվող օրենսդրությամբ), համապատասխան փորձառություն ունեցող և ուսուցումներ անցած, ինչպես նաև ոչ նորմալ պայմաններին արձագանքելու կարողություն ունեցող անձնակազմի առկայությունը, որպեսզի հնարավոր լինի պատշաճ կերպով իրականացնել Ծառայությունների մատուցումը՝ հաշվի առնելով բոլոր ուղեցույցերն ու պահանջները,
- (4) կանխարգելիչ, պլանային և ոչ-պլանային պահպանման և վերանորոգման աշխատանքների իրականացում այնպես, որ ապահովվի Գույքի երկարաժամկետ հուսալի և անվտանգ շահագործումը. այդ աշխատանքները պետք է կատարվեն համապատասխան գիտելիքներ ունեցող, ուսուցում անցած և փորձառու անձնակազմի միջոցով, որն ունի համապատասխան թույլտվություններ կամ լիցենզիաներ (եթե այդպիսիք պահանջվում են Կիրառվող օրենսդրությամբ) և կիրառում են համապատասխան սարքավորումներ, գործիքներ և ընթացակարգեր, և
- (5) Ծառայությունների իրականացում աշխատողների, հանրության և շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակներով և ջերմաստիճանի, խոնավության և քիմիական բաղադրության պահանջների պահպանմամբ:

ԱՄՊ Առևտրի Միջազգային Պալատն է:

ՄՖԿ ցանկացած միջազգային և/ կամ տարածաշրջանային ֆինանսական կազմակերպություն է, դոնոր կազմակերպություն և/կամ երկկողմանի դոնոր կազմակերպություն, որը վարկային կամ դրամաշնորհային ֆինանսավորում է տրամադրում Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Սպասարկման տարածքի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերում ներդրումների և այլ միջոցառումների համար:

ՄՖԿ գնումների ընթացակարգը գնումների ընթացակարգ ՄՖԿ կիրառելի կարգավորումների շրջանակներում՝ այնքանով, որքանով դրանք չեն հակասում Կիրառելի օրենսդրությանը:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները (ՖՀՄՍ) Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (IASB) կողմից հրապարակված և Կիրառվող օրենսդրության համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներն են և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքները:

Անկախ տեխնիկական աուդիտորը ԸՊ 6.7.1 կետի համաձայն վարձված ընկերությունը կամ անհատն է, որը պետք է անցկացնի Կատարողական չափանիշների ապահովման ընթացքի մոնիտորինգ, ինչպես նաև իրականացնի ԸՊ 6.7 և 6.8 կետերում նշված առաջադրանքները:

Մտավոր սեփականությունը նշանակում է մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները, ինչպես նաև այդ միջոցների նկատմամբ իրավունքները (ներառյալ Կիրառվող օրենսդրության համաձայն գոյություն ունեցող իրավունքները):

Հողը Հավելված 4-ում նկարագրված հողն է:

Վարձակալության վճարը Հատուկ Պայմաններում և ԸՊ 8-րդ հոդվածում նկարագրված վճարն է:

Վարձակալը ... ընկերությունն է:

Վարձակալի կողմից Պայմանագրի լուծման ծանուցումը Վարձակալի կողմից համաձայն ԸՊ 3.8.5 կետի Պայմանագրի լուծման մասին զգուշացումն է:

Վարձակալի աշխատակազմը Ծառայությունների մատուցման մեջ ներգրավված Վարձակալի կողմից վարձված և արտասահմանից եկած անձինք են:

Վարձատուն ՀՀ գյուղատնտեսության նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտե:

Տեղական արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է:

Պահպանումը Պայմանագրի համաձայն Բաժանորդներին Ծառայությունների մատուցման, դրանց շարունակականության և հուսալիության ապահովման նպատակով Գույքի տեխնիկական վիճակի պահպանմանն ուղղված պարբերական և շարունակական աշխատանքներն են: «Պահպանում» տերմինը վերաբերում է շտկողական, կանխարգելիչ և ընթացիկ աշխատանքների միջոցով պահպանմանը:

Պայմանագրի պատճառաբանված լուծման ծանուցումը Կողմերից մեկի կողմից համաձայն ԸՊ 3.8.2 կետի Պայմանագրի լուծման մասին ծանուցումն է:

Պայմանագրի չպատճառաբանված լուծման ծանուցումը Վարձատուի կողմից համաձայն ԸՊ 3.8.3 կետի Պայմանագրի լուծման մասին ծանուցումն է:

Մայր ընկերություն(ներ)ը այն Հայտատուն է, որը հանդիսանում է Վարձակալի հիմնադիրը կամ այն Հայտատուներն են, որոնք միմյանց հետ միացել են Վարձակալի հիմնադրման համար՝ Ծառայությունների մատուցման նպատակով և հանդիսանում են Վարձակալի բաժնետերերը:

Կողմը Պայմանագրի կողմն է, իսկ Կողմերը՝ Պայմանագրի բոլոր Կողմերը միասին կամ նրանց համակցությունը՝ ըստ հանգամանքների:

Կատարողական երաշխիքը Վարձակալի կողմից համաձայն ԸՊ 7.13 կետի տրամադրվող երաշխիքն է:

Կատարողական չափանիշները Հավելված 6-ով սահմանված ծառայության որակի ցուցանիշներն են, որոնց միջոցով համեմատվում է Վարձակալի Վարձակալության պայմանագիր

գործունեությունը Վարձակալության պայմանագրով նախատեսված ծառայության որակի հետ:

Թույլտվությունը ջրօգտագործման ու ջրային համակարգերի կառավարման թույլտվությունների ամբողջությունն է՝ թույլտվությունների, լիցենզիաների կամ համաձայնեցումների տեսքով ինչպես սահմանվում է Կիրառելի օրենսդրությամբ և ինչպես դրանք կարող են փոփոխվել օրենսդրական բարեփոխումների շրջանակներում պայմանագրի գործողության ժամկետում:

Լիցենզիան ՀԾԿ-ի որոշմամբ, վարձատուին տրամադրված փաստաթուղթ է, որով սահմանված են խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզավորված անձի իրավունքը և պարտականությունը:

Անձը ֆիզիկական կամ իրավաբանական անձն է:

ՀԾԿ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն է

Նորոգումները Ծառայությունների մատուցման համար համակարգում առաջացած տեխնիկական անսարքությունների կամ համակարգում առկա թերությունների և վթարների վերացման միջոցառումներն են:

Հողի նկատմամբ իրավունքները բացի սեփականության իրավունքից բոլոր իրավական իրավունքներն ու շահերն են՝ կապված հողի հետ, որոնք բխում են Կիրառվող օրենսդրությունից և շարադրված են Հավելված 4-ում («Հողի և դրա նկատմամբ իրավունքների նկարագրություն»):

Գույքի ցանկը Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ Վարձատուի կողմից Վարձակալին սույն Պայմանագրի համաձայն Վարձակալությամբ տրամադրված և Հավելված 3-ում ներառված և սույն Պայմանագրի համաձայն լրացվող գույքի ցանկն է:

Սպասարկման տարածքը Ծառայությունների մատուցման տարածքն է, որը սահմանված է Հավելված 5-ում:

Ծառայությունները Պայմանագրի շրջանակներում Հավելված 2-ի համաձայն Վարձակալի կողմից մատուցվող ծառայություններն են:

Խելամիտ ինժեներական պրակտիկան ինժեներական նորմերի վրա հիմնված կանոնակարգերի, ստանդարտների և ուղեցույցերի միջոցով լրացվող մասնագիտական դատողությունների կիրառումն է:

Մեկնարկային օրն Ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող, սակայն Ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 28 Օր հետո ընկնող, օրացուցային ամսվա առաջին Օրն է, կամ Հավելված 1-ում նշված որևէ այլ Օրն է:

Կապալառուն այն անձն է, որին Վարձակալը կապալային հիմունքներով պատվիրում է Ծառայությունների որևէ մասի մատուցումը:

Հաջորդող օպերատորն այն անձն է, որը պետք է շարունակի Ծառայությունների մատուցումը Պայմանագրի լուծման կամ ավարտից հետո:

Սակագները Բաժանորդների կողմից ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարման ենթակա վճարներն են, որոնք հաստատվել են ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից և որոնց վերաբերյալ կողմերը համաձայնություն են ձեռք բերել դրանք Պայմանագրի ժամկետի ընթացքում կիրառելու վերաբերյալ:

Ժամկետը Մեկնարկային օրվանից մինչև Ավարտման օրը (նաև ԸՊ 3.6 կետով նախատեսված երկարաձգման դեպքում) ընկած կամ Պայմանագրով նախատեսված կարգով լուծման օրն ընկած ժամանակահատվածն է (կախված, թե այս երկուսից որն ավելի շուտ տեղի կունենա):

Երրորդ անձը Վարձատուից, Հայտատուից կամ Վարձակալից բացի ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձն է:

Աջակցություն անցումային աշխատանքներին նշանակում է այն աջակցությունը, որը ենթակա է իրականացման (ինչպես նշված է ԸՊ 3.4 կետում) Վարձակալի կողմից Պայմանագրի Ավարտման օրվանից հետո մինչև Հաջորդող օպերատորի նշանակվելը:

1.2 Պայմանագրի փաստաթղթերը

Սույն Պայմանագիրը կազմված է «Գործարքի ձևը» կետի դրույթներում ներկայացված փաստաթղթերից:

1.3. Մեկնաբանություն

1.3.1. Լեզուն

Սույն Պայմանագիրը կնքվել է հայերեն և անգլերեն լեզուներով՝ տարակարծությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն լեզվին: Վարձակալի բոլոր ներկայացուցիչները պետք է ունենան հայերեն գրավոր և բանավոր հաղորդակցվելու լիարժեք հնարավորություն՝ ինքնուրույն կամ իր կողմից վարձված թարգմանիչների միջոցով:

1.3.2. Անձինք

«Անձ» և «Կողմ» բառերը ունեն նաև ֆիզիկական անձ, ընկերություն կամ ընկերակցություն կամ համատեղ ձեռնարկություն կամ հասարակական կազմակերպություն կամ կորպորացիա կամ այլ կազմակերպություն կամ պետական հիմնարկ իմաստը:

1.3.3. Վերնագրերը

Վերնագրերն ու թավ տառերով գրված տեքստը չպետք է սահմանափակեն կամ փոխեն Պայմանագրի բովանդակությունը կամ ազդեցություն ունենան դրա վրա:

1.3.4. Եզակի կամ հոգնակի թվի օգտագործումը

Պայմանագրում ընդհանրացումներն արվում են եզակի կամ հոգնակի թվով,

բացառությամբ այն դեպքերի, երբ տեքստի բովանդակությունից այլ բան է բխում:

1.3.5. Հղումներ արժույթին

Բացառությամբ սույն Պայմանագրում նշված դեպքերի՝ արժույթը նշված չլինելու դեպքում դրամական միավորներին արվող հղումները վերաբերում են Տեղական արժույթին:

1.3.6. Հղումներ

Սույն Պայմանագրում «ԸՊ» հապավման նշված լինելու դեպքում կատարված հղումները վերաբերում են Ընդհանուր պայմանների բաժիններին և հոդվածներին, այլապես՝ Գործարքի ձևին:

1.3.7. Քերականական ձև

Խոսքի մասերը կամ բառերը կամ արտահայտությունների քերականական դարձվածքները Պայմանագրում կիրառվելիս ունեն համապատասխան նշանակությունը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

1.3.8. Ամբողջի մասերը

Որևէ երևույթի (ներառյալ որևէ իրավունքի) մասին նշումը ներառում է նաև դրա մասը՝ առանձին-առանձին և բոլոր մասերը՝ միասին, սակայն այն չի կարող մեկնաբանվել այնպես, որ պարտականության մի մասի կատարումը համարվում է ամբողջ պարտականության պատշաճ կատարում:

1.3.9. Օրենսդրություն և իրավասություն

(1) Իրավական ակտի վերաբերյալ նշումը ներառում է նաև այն իրավական ակտը կամ ակտերը, որով կամ որոնցով փոփոխություն(ներ) կամ լրացում(ներ) է(են) կատարվել արդեն գոյություն ունեցող ակտում: Սրա հետ մեկտեղ որևէ օրենքին հղումը վերաբերում է նաև այդ օրենքի համաձայն ընդունված բոլոր այլ իրավական ակտերին:

(2) Սույն Պայմանագրի Կողմ հանդիսացող պետական մարմնից բացի այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (ներառյալ՝ հաստատություն, գործակալություն կամ գերատեսչություն) կամ պետական կամ տեղական ինքնակառավարման պաշտոնատար անձի վերաբերյալ նշումը, որը.

ա) դադարում է գոյություն ունենալ, կամ

բ) որի իրավասություններն ու լիազորությունները փոխանցվում են մեկ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի,

վերաբերում է նաև այն մարմնին կամ պաշտոնատար անձին, որը փոխարինում է կամ հանդիսանում է Պայմանագրի տվյալ մասում նշված մարմնի կամ պաշտոնատար անձի իրավահաջորդը:

1.3.10. Համապարտ և առանձին պատասխանատվություն

Սույն Պայմանագրի որևէ դրույթ կամ համաձայնություն, որը վերաբերում է Վարձակալության պայմանագիր

մեկից ավելի Անձանց, կիրառելի է համապարտությամբ:

1.3.11. Փաստաթղթերում փոփոխությունները

Փաստաթղթին հղումը վերաբերում է նաև դրանում փոփոխություն և/կամ լրացում մտցնող կամ դրան փոխարինող փաստաթղթին կամ փաստաթղթերին:

1.3.12. Մեկնաբանում և կիրառում

Սույն Պայմանագրի որևէ դրույթ Կողմի հետ հարաբերություններում չի կարող մեկնաբանվել անբարենպաստ իմաստով զուտ այն պատճառաբանությամբ, որ Կողմը, որի նկատմամբ անբարենպաստ իմաստով մեկնաբանվել էր դրույթը, պատասխանատու էր տվյալ դրույթի կազմման համար:

1.3.13. «Ներառյալ» բառի օգտագործումը

Սույն պայմանագրում «ներառյալ» բառից կամ «ներառում է» արտահայտությունից հետո թվարկումները կամ մանրամասնումները չեն սահմանափակում այն բառի իմաստը, որին հաջորդում է «ներառյալ» բառը կամ «ներառում է» արտահայտությունը:

Հողված 2. Հավաստիացումներ և երաշխիքներ

Հավաստիացումները և երաշխիքները տրվում են Պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ, դրա ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ և Մեկնարկային օրվա յուրաքանչյուր տարելիցի օրվա դրությամբ:

2.1. Վարձակալի հավաստիացումները և երաշխիքները

Վարձակալը և Հայտատուն հավաստիացնում և երաշխավորում են.

- (1) Գոյություն ունենալը
Վարձակալը ...[փակ բաժնետիրական] ընկերություն է, որը հիմնադրվել է և գործելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և որի բաժնետոմսերը կամ բաժնեմասերն ամբողջությամբ պատկանում են Հայտատուին:
- (2) Համապատասխան իրավասություն
Սույն Պայմանագրի կնքման օրը Վարձակալն ունի Պայմանագրի կնքման և Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ բոլոր կորպորատիվ լիազորությունները, իրավասությունները և հաստատումները:
- (3) Համապատասխանություններ
Սույն Պայմանագրի և դրա համաձայն իրականացման ենթակա գործառնությունների կամ գործարքների կնքումը կամ կատարումը կամ իրականացումը.
ա) չի խախտում Վարձակալի կանոնադրությունը կամ որևէ իրավական ակտ կամ Վարձակալի կողմից կնքված որևէ այլ համաձայնագիր կամ փաստաթուղթ, կամ
բ) չի հանգեցնում Վարձակալի կամ նրա պաշտոնատար անձանց իրավունքների սահմանափակման:
- (4) Իրականացման լիազորություն
Վարձակալն իրավասու է կնքել Պայմանագիրը և կատարել դրանով նախատեսված գործառնությունները և իրականացնել գործունեությունը:
- (5) Հատուկ նպատակով ստեղծված միջոց
Վարձակալը երաշխավորում է, որ հիմնադրվել է որպես հատուկ նպատակի ծառայող մի միջոց և ժամկետի ընթացքում կմնա որպես այդպիսին և Պայմանագրով նախատեսված գործունեությունից բացի այլ գործունեություն չի իրականացնի:

- (6) Պարտականությունները
Սույն Պայմանագրով նախատեսված Վարձակալի պարտականությունները գործող են և իրավական ուժ ունեն և կարող են օրենքի ուժով պարտադրվել կատարման՝ իրենց համապատասխան պայմաններով:
- (7) Պարտականությունների չկատարման բացառում
Վարձակալը որևէ պայմանագրով չունի պարտավորությունների չկատարման այնպիսի դեպք, որը կարող է էական լինել նրա կողմից Պայմանագրի շրջանակներում գործելուն խոչընդոտելու համար:
- (8) Վճարման պարտավորություն
Սույն Պայմանագրի կնքման օրը Վարձակալը չունի որևէ էական վճարման պատասխանատվություն, կամ չի ծավալել որևէ գործունեություն, ինչպես նաև որևէ գործարքի մեջ չի մտել կամ պայմանագիր չի կնքել բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված և դրան չհակասող դեպքերի:
- (9) Հավաստումները
- ա) Վարձակալի կամ Հայտատուի կողմից կամ նրանց անունից Վարձատուին Պայմանագրի առնչությամբ տրամադրված կամ Հայտատուի կողմից Հայտի մեջ ներառված հավաստումները ճիշտ և ամբողջական են նյութական բոլոր առումներով,
 - բ) Վարձակալը և Հայտատուն Պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ կամ մինչ այդ գրավոր կերպով ներկայացրել են բոլոր այն փաստերը, որոնց մասին նա տեղյակ է կամ պարտավոր է տեղյակ լինել, և որոնք էապես բացասաբար են ազդում կամ կարող են բացասաբար ազդել Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման իր կարողության վրա:
- (10) Դատաքննություն
Սույն Պայմանագրի կնքման և դրա ուժի մեջ մտնելու պահին Վարձակալի նկատմամբ գոյություն չունի կամ չի սպառնում որևէ գործողություն, ընդդեմ նրա հարուցված չէ որևէ հայց, չկա դատական ակտ, որը կարող է նյութապես ազդել Վարձակալի Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման վրա:
- (11) Կոռուպցիա
Ո՛չ Վարձակալը, և ո՛չ էլ Հայտատուն Պայմանագրի շնորհման կամ իրականացման համար Վարձատուին, Ընկերությանը, փոխկապակցված անձանց կամ աշխատակիցներին չեն առաջարկել և չեն համաձայնվել առաջարկել կամ նվիրել որևէ ընձա, որպես խրախուսում, կամ

պարզևավճար՝ որևէ գործողություն ձեռնարկելու կամ դրանից ձեռնպահ մնալու համար:

- (12) Հմտություններ և կարողություններ
Վարձակալը և նրա պաշտոնատար անձինք, կապալառուները, աշխատակիցները և խորհրդատուներն ունեն բոլոր համապատասխան ունակությունները, փորձառությունը և հմտությունները, որպեսզի ապահովվի Վարձակալի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:
- (13) Մեկնարկային օրվա յուրաքանչյուր տարելիցին՝ Ո՛չ Հայտատուն, և ո՛չ էլ Վարձակալը չեն խախտել որևէ պայմանագիր (բացառությամբ Վարձատուին գրավոր ներկայացված դեպքերի) և Հայաստանի Հանրապետության կառավարության կամ նրա գործակալությունների և հաստատությունների նկատմամբ սույն Պայմանագրից բխող կամ որևէ այլ որևէ պահանջ չունեն, բացառությամբ այն պահանջների, որոնք գրավոր ներկայացվել են ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարության:

2.2. Վարձատուի հավաստիացումները և երաշխիքները

Վարձատուն հավաստիացնում և երաշխավորում է.

- (1) Համապատասխան իրավասություն
- ա) Սույն Պայմանագրի և դրանով նախատեսված պարտականությունների կատարմամբ չի խախտվում որևէ իրավական ակտ, որի պահանջը պարտադիր է Վարձատուի կողմից կատարման համար:
- բ) Պայմանագրի կնքման օրը Վարձատուն ունի Պայմանագրի կնքման և դրանով նախատեսված իր պարտավորությունների կատարման համար բոլոր անհրաժեշտ լիազորությունները:
- (2) Պարտականությունները
Սույն Պայմանագրով նախատեսված Վարձատուի պարտականությունները գործող են և ունեն իրավական ուժ և կարող են օրենքի ուժով պարտադրվել կատարման՝ իրենց համապատասխան պայմաններով:
- (3) Դատաքննություն
Սույն Պայմանագրի կնքման և դրա ուժի մեջ մտնելու պահին Վարձատուի նկատմամբ գոյություն չունի կամ չի սպառնում որևէ գործողություն, նրա դեմ հարուցված չէ որևէ հայց, դրա նկատմամբ չկա որևէ դատական ակտ,

որը կարող է էապես նյութապես ազդել սույն Պայմանագրով նախատեսված Վարձատուի պարտավորությունների կատարման վրա:

- (4) Պարտականությունների չկատարման բացառում
Վարձատուն որևէ պայմանագրով չունի պարտավորությունների չկատարման այնպիսի դեպք, որը կարող է էական լինել նրա կողմից Պայմանագրի շրջանակներում գործելուն խոչընդոտելու համար:
- (5) Հողը
Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս Վարձատուի, ունի Հավելված 4-ում նկարագրված Հողի նկատմամբ սեփականության այլ իրավունքի փաստաթղթերը, և Հողը և դրա նկատմամբ իրավունքները հնարավոր կլինի օգտագործել Վարձակալի կողմից՝ ԸՊ 4.3 կետի համաձայն:
- (6) Վարձակալություն
Առանց սահմանափակելու ԸՊ 2.2 կետում ներկայացված այլ հավաստիացումներն ու երաշխիքները՝ Վարձատուն իրավասու է վարձակալությամբ Վարձակալին տրամադրել Գույքը՝ ԸՊ հոդված 4-ի համաձայն:
- (7) Ազնվություն
Սույն Պայմանագրի կնքման օրը կամ դրանից առաջ Հայտատուներին բոլոր փաստերը, տեղեկատվությունը և տվյալները Վարձատուի կողմից տրամադրվել են՝ հիմնվելով ազնվության վրա:

2.3. Վարձակալի և Հայտատուի հավաստիացումները, հրաժարումները և երաշխավորությունները

- (1) Վարձակալը և Հայտատուն գիտակցում և համաձայնվում են, որ բացառությամբ Պայմանագրում հստակ նշված փաստերի, Վարձատուն Պայմանագրի, Գույքի, Ծառայությունների և Սպասարկման տարածքի, Բաժանորդների կամ որևէ այլ էական հարցի կապակցությամբ չի ներկայացրել, խորհուրդ կամ երաշխավորություն չի տվել կամ ոչինչ չի նախաձեռնել, որը կարող էր ազդել Պայմանագիրը կնքելու վերաբերյալ Վարձակալի որոշման վրա:

(2) Առանց սահմանափակելու ԸՊ 2.3 կետի դրույթները՝ Վարձակալը և Հայտատուն ընդունում և համաձայնում են, որ.

ա) Բացահայտված տեղեկատվությունը չի պարունակել Հայաստանի Հանրապետության կառավարության, Վարձատուի կամ Ընկերության կողմից կամ դրանցից որևէ մեկի անունից կատարված կամ տրված որևէ առաջարկ, հրավեր կամ խորհուրդ,

բ) Բացահայտված տեղեկատվության նպատակը Վարձակալին, Հայտատուին և նրա հետ Փոխկապակցված անձանց այնպիսի տեղեկատվության տրամադրումն էր, որը նրանց կօգներ Ծառայությունների մատուցման հայտի նախապատրաստման և ներկայացման գործում,

գ) Բացահայտված տեղեկատվությունը չի հավակնում ներկայացնել այն ամբողջ տեղեկատվությունը, որը Վարձակալի, Հայտատուի և նրանց հետ Փոխկապակցված անձանց համար անհրաժեշտ էր առաջարկի կազմման և ներկայացման կամ Պայմանագրի ստորագրման վերաբերյալ որոշման կայացման համար,

դ) ո՛չ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ո՛չ Վարձատուն և ո՛չ էլ Ընկերությունը կամ նրանց անունից կամ փոխարեն գործող որևէ Անձ չի ստուգել կամ պարտավորություն չի ունեցել ստուգելու Բացահայտված տեղեկատվության ճշգրիտ լինելը, հավաստիությունը կամ ամբողջականությունը,

ե) ո՛չ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ո՛չ Վարձատուն և ո՛չ էլ Ընկերությունը կամ նրանց անունից կամ փոխարեն գործող որևէ Անձ չեն հայտնել կամ երաշխավորել բացահայտ կամ ոչ բացահայտ կերպով, որ Բացահայտված տեղեկատվությունը ճշգրիտ է, հավաստի և ամբողջական,

զ) Վարձակալը, Հայտատուն և նրանց հետ Փոխկապակցված անձինք Պայմանագրի կնքման վերաբերյալ որոշման կայացման նպատակով որևէ կերպով չեն հիմնվել Վարձատուի, Ընկերության կամ նրանց կամ էլ Հայաստանի Հանրապետության կառավարության անունից կամ փոխարեն գործող որևէ Անձի դատողությունների կամ հմտությունների վրա: Վարձակալը, Հայտատուն և նրանց հետ Փոխկապակցված անձինք հիմնվել են բացառապես իրենց սեփական կարծիքի և մասնագիտական իմացությունների վրա, որոնք բխում են իրենց անկախ ուսումնասիրություններից, գնահատականներից, հետազոտություններից,

է) Վարձակալը, Հայտատուն և նրանց հետ Փոխկապակցված անձինք իրականացրել են համապատասխան ուսումնասիրություններ և ծանոթացել են՝

(1) Ծառայությունների, Գույքի և Սպասարկման տարածքի բոլոր ասպեկտներին,

(2) Բացահայտված տեղեկատվության բովանդակությանը, ճշգրտությանը և բավարարությանը,

(3) Ծառայությունների, Գույքի և Սպասարկման տարածքի, ինչպես նաև Պայմանագրի հետ կապված բոլոր ռիսկերին, չնախատեսված ռեպերին և այլ հանգամանքներին վերաբերող ամբողջ տեղեկատվությանը՝ ներառյալ Հայաստանի Հանրապետությանը վերաբերող տեղեկատվությունը, որը կարող է ազդեցություն ունենալ Պայմանագիրը կնքելու վերաբերյալ նրանց որոշման վրա,

ը) Հաշվի առնելով, որ բացահայտված տեղեկատվությունը տրամադրվել է բարեխիղճ կերպով, և, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, Վարձատուն և Ընկերությունը տեղյակ չեն Բացահայտված տեղեկատվության որևէ մասի ոչ ճիշտ կամ մոլորեցնող լինելու մասին (սակայն, ընդունելով, որ ո՛չ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ո՛չ Վարձատուն, ո՛չ Ընկերությունը և ո՛չ էլ նրանց անունից կամ նրանց հետ Փոխկապակցված անձինք պարտավոր չեն և նրանցից ոչ մեկը հարցումներ չի կատարել տեղեկացվածության աստիճանը ճշտելու համար)՝ նախնական բանակցությունների, կազմակերպման, ընդհանուր գաղափարի ներկայացման կամ համաձայնության գալու փուլերում Վարձատուի, Ընկերության, նրանց անունից կամ նրանց հետ համատեղ գործող Անձանց կողմից արված որևէ հայտարարություն, ներկայացում, պայմաններ, երաշխիք, խոստում կամ նախաձեռնություն որևէ նշանակություն ունենալ չի կարող, եթե այն նախատեսված չէ Պայմանագրով,

(3) Կիրառվող օրենսդրությամբ թույլատրված սահմաններում Վարձակալը և Հայտատուն հստակորեն հրաժարվում են ցանկացած իրավունքից, համաձայն որի նրանցից որևէ մեկը կամ նրանց հետ Փոխկապակցված անձինք կարող են քայլեր ձեռնարկել կամ պահանջներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության, Վարձատուի, Ընկերության կամ նրանց անունից գործող կամ նրանց հետ գործող անձանց հանդեպ Բացահայտված տեղեկատվության կամ սույն Պայմանագրի հետ կապված որևէ տեղեկատվության ոչ ճշգրիտ լինելու, թյուրիմացություն առաջացնելու կամ սխալ ուղղորդելու հիմքով:

(4) Հայտատուն և Վարձակալը հավաստիացնում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Վարձատուին և Ընկերությանը, որ նրանց զերծ կպահեն այն պահանջներից, որոնք կարող են առաջանալ կամ հետևել Վարձակալի կողմից ԸՊ 2.3 կետի դրույթների խախտման դեպքում կամ էլ Հայտատուի կամ Վարձակալի այն պահանջներից, որոնց նկատմամբ որևէ պատճառով չեն ազդում ԸՊ 2.3 կետի դրույթները:

2.4. Ներկայացված փաստաթղթերի վրա հիմնվելը

- (1) Հայտատուն, Վարձակալը և Վարձատուն գիտակցում և համաձայնվում են, որ յուրաքանչյուր Կողմը սույն Պայմանագիրը կնքել է և իրագործում է՝ հիմնվելով սույն ԸՊ Հոդված 2-ում նշված կարգով ներկայացված հավաստիացումների և երաշխավորությունների վրա:
- (2) Վարձակալը գիտակցում և համաձայնվում է, որ ԸՊ 2.2 և 2.3 կետերի համաձայն ներկայացված փաստաթղթերը, երաշխավորությունները, համաձայնություններն ուժի մեջ են մնում նաև սույն Պայմանագրի իրականացումից և դրանով նախատեսված գործառնությունների ավարտից հետո:

2.5. Երաշխիքների բացառումը

Բացառությամբ սույն Պայմանագրով ուղղակիորեն նախատեսված դեպքերի՝ Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված առավելագույն չափով Պայմանագրով նախատեսված կամ դրանով ենթադրվող բոլոր պայմանները, նախաձեռնությունները, խոստումները, հավաստիացումները, երաշխիքները և հայտարարությունները (անկախ նրանից, թե արված են հստակ, ենթադրվում են, գրավոր, բանավոր, օժանդակ, կանոնադրական կամ որևէ այլ բնույթ են կրում) բացառվում են Վարձատուի կողմից, և Վարձատուն ազատվում է այս կապակցությամբ առաջացող որևէ պարտավորություններից:

Հոդված 3. Պայմանագրի սկիզբը, ավարտը և պայմանագրի ընդհատումը

3.1. Ուժի մեջ մտնելը

- (1) Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն բանից հետո, երբ առկա կլինեն հետևյալ բոլոր պայմանները.
 - (ա) Համաձայն ԸՊ 7.13 կետի՝ Հայտատուի և Վարձակալի կողմից Կատարողական երաշխիքը տրամադրված է Վարձատուին, և
 - (բ) Վարձակալը ստացել է ջրօգտագործման անհրաժեշտ թույլտվությունները և Լիցենզիան, և
 - (գ) Վարձակալը Վարձատուին վստահեցնող գրավոր ապացույցներ է ներկայացրել առ այն, որ իր կողմից իրականացված են ԸՊ 7.8 կետով պահանջվող ապահովագրությունները, և
 - (ե) Վարձակալին վարձով տրված գույքը պատշաճորեն գրանցվել է գույքի պետական ռեգիստրում որպես Վարձակալի կողմից վարձակալված,
 - (զ) Վարձակալի ներկայացրած ավագ ղեկավար աշխատակիցներն օրենքով սահմանված կարգով պետական և ծառայողական գաղտնիքին առնչվելու թույլտվություն են ստացել այն չափով, որն անհրաժեշտ է Վարձակալին Ծառայությունների մատուցման համար:
- (2) Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է իրեն վերաբերելի մասով բոլոր ջանքերը ներդնել, որպեսզի բավարարվի և/կամ ապահովվի Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայմանների բավարարումն այն ժամանակահատվածում, որում այն գործնականում հնարավոր է, սակայն ամենաուշը Պայմանագրի կնքման օրվանից հետո 90 (իննսուն) օրվա ընթացքում:
- (3) Կողմերը պետք է միմյանց հնարավորին չափ արագ գրավոր կերպով տեղեկացնեն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պայմաններից որևէ մեկի կատարման, ինչպես նաև դրանցից որևէ մեկի իր կողմից կատարման անհնարինության մասին: Բոլոր պայմաններն ապահովված լինելու դեպքում Վարձատուն պարտավոր է գրավոր տեղեկացնել Վարձակալին՝ դրանց ապահովման ամսաթվի մասին: Այդ գրավոր տեղեկացման մեջ նշված ամսաթիվը կլինի Ուժի մեջ մտնելու օրը: Վարձատուն պարտավոր է այս գրությամբ սահմանել նաև Մեկնարկային օրը:
- (4) Սույն՝ 3.1 կետով նախատեսված պայմանները գործում են ի օգուտ ինչպես Վարձատուի, այնպես էլ Վարձակալի, և կարող են չկիրառվել միայն Վարձատուի և Վարձակալի միջև գրավոր համաձայնության դեպքում:
- (5) Եթե սույն՝ 3.1 կետով նախատեսված որևէ պայման չի ապահովվում կամ դրա չկիրառման վերաբերյալ համաձայնություն չի կայացվում 90 (իննսուն) օրվա ընթացքում, ապա չապահովված պայմանի կատարման ժամկետը կարող է Կողմերի համաձայնությամբ երկարաձգվել:

- (6) Լուծման դեպքում Պայմանագիրն այլևս իրավական ուժ չի ունենա, և Վարձատուի և Վարձակալի միմյանց նկատմամբ պարտավորությունները բացառվում են, բացառությամբ՝
- ա) ԸՊ 13.10 կետով նախատեսված դեպքերի, և
 - բ) մինչև Պայմանագրի դադարեցումը կատարված Պայմանագրի խախտման դեպքերի:
- (7) Պայմանագրի և Կողմերի միջև կնքված և Պայմանագրի անբաժանելի մասը համարվող Համաձայնագրերի գրանացման և վավերացման ծախսերը կրում է Վարձակալը:
- (8) Վարձատուի կողմից Վարձակալին իրավունքների փոխանցման պետական գրանցման ծախսերը կրում է Վարձակալը:

3.2. Պայմանագրի ժամկետի ավարտը

ԸՊ 3.8 կետի համաձայն Պայմանագիրը չդադարեցվելու կամ ԸՊ 3.6 կետի համաձայն չերկարացվելու դեպքում այն ավարտվում է Ավարտման օրը՝ հայկական ժամանակով ժամը 12.00-ին:

3.3. Ծառայությունների իրականացման ժամկետը

Վարձակալը պարտավոր է Ծառայությունները մատուցել ամբողջ ժամկետի ընթացքում՝ սկսած Մեկնարկային օրվանից մինչև Ավարտման օրը՝ ապահովելով նաև Անցումային աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու հետ կապված իր պարտականությունների կատարումը:

3.4. Ծառայությունների իրականացումն Ավարտման օրվանից հետո

- (1) Սույն Պայմանագրի ավարտից ոչ ուշ քան 90 (իննսուն) օր առաջ Վարձատուից համապատասխան գրավոր դիմում ստանալու դեպքում, իսկ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ նման դիմում ստանալուց հետո խելամիտ ժամկետներում, Վարձակալը պարտավոր է Ավարտման օրվանից կամ վաղաժամկետ դադարեցման օրվանից մինչև 60 (վաթսուն) օր շարունակել անցումային աշխատանքների իրականացումը: Անցումային աշխատանքների նպատակը Վարձակալից Հաջորդող օպերատորին փոխանցում սահուն կազմակերպելն է, և անցումային աշխատանքների մեջ մտնում են միայն այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են անցումային շրջանում, այլ ոչ թե Հավելված 2-ով նախատեսված բոլոր Ծառայությունները:
- (2) Վարձատուի կողմից ԸՊ 3.4.(1) կետի համաձայն անցումային աշխատանքներ մատուցելու խնդրանքով Վարձակալին դիմումի ներկայացման դեպքում Անցումային աշխատանքներն իրականացվում են անձնակազմի այն անդամների կողմից, որոնց ընտրում է Վարձատուն:

Եթե Վարձատուի կողմից ընտրված՝ Վարձակալի աշխատակազմի այդ անդամներից բաղկացած անձնակազմը տվյալ պահին գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ապա պետք է շարունակի մնալ Հայաստանում մինչև Անցումային աջակցության աշխատանքների ավարտը:

- (3) Անցումային աջակցության աշխատանքների դիմաց Վարձատուն պետք է Վարձակալին վճարի համաձայնեցված շաբաթական դրույքների հիման վրա՝ Վարձակալի աշխատակազմի յուրաքանչյուր այն անդամին, որն ապահովում է անցումային աջակցության աշխատանքները: Եթե Կողմերը շաբաթական դրույքների վերաբերյալ համաձայնության չեն գալիս, ապա յուրաքանչյուր Կողմ կարող է դիմել Անկախ Տեխնիկական Աուդիտորին՝ այն լուծելու նպատակով:

3.5. Փոխանցում/Ընդունում

- (1) Վարձատուն պարտավոր է կազմել այն տեսանելի Գույքի ցանկը, որը կարող է ֆիզիկապես ստուգվել՝ հետագայում Վարձակալին փոխանցվելու նպատակով: Մինչև Մեկնարկային օրն ընկած ժամանակահատվածը Կողմերը պարտավոր են միմյանց հետ համաձայնեցնել տեսանելի Գույքի ցանկը:
- (2) Մինչև Մեկնարկային օրը Կողմերը պարտավոր են համաձայնեցնել տեսանելի Գույքի ստուգման և փոխանցման ժամանակացույցը, ինչպես նաև համատեղ ուսումնասիրել, ստուգել Գույքի նկարագրությունը և համաձայնության գալ Գույքի վիճակի և յուրաքանչյուր տեսանելի Գույքի միավորի կյանքի նոմինալ տևողության և մնացորդային կյանքի նոմինալ տևողության վերաբերյալ:
- (3) Կողմերը պարտավոր են համաձայնեցնել այն Գույքի ցանկը, որը փոխանցումից առաջ չի կարող ստուգվել, քանի որ գտնվում է գետնի տակ կամ որևէ այլ կերպով անհասանելի է ֆիզիկական ստուգման համար, ուսումնասիրել դրա նկարագրությունը և փոխանցումը կատարել հնարավորինս սեղմ ժամկետներում՝ ըստ հանգամանքների:
- (4) Կողմերը պարտավոր են համատեղ իրականացնել մինչև Մեկնարկային օրը ջրաչափերի՝ Ընկերությանը վերաբերող ցուցմունքների վերջին գրառումը, իսկ Մեկնարկային օրվանից հետո՝ ջրաչափերի Վարձակալին վերաբերող ցուցմունքների առաջին գրառումը՝ դրանց իրականացման ընթացակարգը նախապես միմյանց հետ համաձայնեցնելով: Ընկերության և Վարձակալի միջև Բաժանորդների կողմից սպառումը համապատասխանաբար բաժանվում է Հավելված 2-ի 7.3 կետով նախատեսված կարգով:
- (5) Կողմերը պարտավոր են համաձայնեցնել ջրադրյուրներում Մեկնարկային օրվան նախորդող օրվա դրությամբ ջրաչափերի ցուցմունքների գրանցման ծրագիրը՝ Ընկերության և Վարձակալի միջև սահմանազատման պահը որոշելու նպատակով:

- (6) Վարձակալը պարտավոր է ապահովել, որ էլեկտրաէներգիայի մատակարար ընկերությունն էլեկտրաէներգիայի չափիչների ցուցմունքները գրանցի Մեկնարկային օրվա դրությամբ՝ տեխնիկապես հնարավորին չափ մոտ իր կողմից պատասխանատվության ստանձնման պահին:
- (7) Վարձակալը Մեկնարկային օրվանից իր պատասխանատվության տակ է ընդունում Գույքն այդ օրվա դրությամբ առկա վիճակով, և Գույքի վիճակը հետագայում չի կարող հիմք հանդիսանալ Վարձակալի համար Պայմանագիրը որևէ կերպ լուծելու կամ էլ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ Վարձատուի հանդեպ պահանջներ ներկայացնելու համար՝ չնայած Հավելված 2-ի 6րդ հոդվածի դրույթների:
- (8) Կողմերը պարտավոր են համաձայնության գալ և համապատասխան կերպով ստորագրել փոխանցման ակտերը, որպեսզի փոխանցումը պատշաճ կերպով ձևակերպվի: Փոխանցված Գույքի վիճակի վերաբերյալ վեճի առկայության դեպքում հարցը պետք է ուսումնասիրվի Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

3.6. Պայմանագրի երկարաձգումը

Կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում Ավարտման օրը կարող է երկարաձգվել Կիրառվող օրենսդրությամբ սահմանված կարգով: Սույն Պայմանագիրը երկարաձգելու համար բանակցություններ սկսելու իր մտադրության մասին Վարձատուն պարտավոր է Վարձակալին տեղեկացնել Պայմանագրի Ավարտման սկզբնական օրվանից առնվազն 6 (վեց) ամիս առաջ:

3.7. Անհաղթահարելի ուժ

3.7.1. Ընդհանուր դրույթներ

- (1) Սույն Պայմանագրի իմաստով անհաղթահարելի ուժն այն երևույթն է, որը.
 - ա) տվյալ Կողմի կամ նրա հետ Փոխկապակցված անձանց ողջամիտ վերահսկողությունից դուրս է, և
 - բ) տվյալ Կողմի համար ամբողջապես կամ էականորեն անհնար է դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը կամ այնպիսի պայմաններ է ստեղծում, որ դրանց կատարումը գործնականում դառնում է անհնարին:
- (2) Անհաղթահարելի ուժը ներառում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.
 - ա) պատերազմներ կամ ապստամբություններ կամ քաղաքացիական անկարգություններ,
 - բ) փոթորիկ կամ ջրհեղեղ կամ երկրաշարժ կամ այլ բնական աղետ, և
 - գ) գործադուլներ, լուկաուտներ և այլ նմանատիպ գործողություններ,

բացառությամբ այն դեպքերի, երբ մեղմացում հայցող Կողմն ի վիճակի էր ողջամտորեն կանխել այդ գործողությունները կամ լուծել խնդիրները:

Անհաղթահարելի ուժ համարվելու համար նշված երևույթները պետք է բավարարեն ԸՊ 3.7.1(1) կետով սահմանված պայմանը:

(3) Անհաղթահարելի ուժ չի համարվում.

ա) տվյալ Կողմի կամ նրա կապալառուի կամ գործակալի կամ աշխատակցի անփութության կամ կանխամտածված գործողության հետևանք հանդիսացող երևույթը, կամ

բ) այն երևույթը, որը տվյալ Կողմի բարեխիղճ և հեռատես մոտեցման դեպքում կարելի էր կանխատեսել Պայմանագրի իրականացման ընթացքում, կամ որից կարելի էր խուսափել կամ հաղթահարել Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման ընթացքում:

(4) Անհաղթահարելի ուժ չի համարվում ֆինանսավորման կամ ֆինանսական այլ միջոցների անբավարարությունը, առկա միջոցներն օգտագործելու անկարողությունը կամ որևէ պատճառով Պայմանագրով պահանջվող վճարման պարտավորության չկատարումը:

3.7.2. Պայմանագրային պարտավորությունների կատարումը

Կողմի՝ Պայմանագրով նախատեսված պարտավորության մասի չկատարումը չի համարվում Պայմանագրի խախտում կամ Պայմանագրով նախատեսված պարտավորության չկատարում կամ անպատշաճ կատարում, եթե այն պայմանավորված է անհաղթահարելի ուժով, և որից տուժած Կողմը, անկախ անհաղթահարելի ուժ համարվող երևույթներից, պատշաճ զգուշավորություն ցուցաբերելով, ժամանակին ձեռնարկել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար բոլոր անհրաժեշտ և հնարավոր այլընտրանքային միջոցները:

3.7.3. Ձեռնարկվելիք միջոցառումները

(1) Անհաղթահարելի ուժից տուժած Կողմը պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ միջոցները՝ նվազագույն ուշացումով սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

(2) Անհաղթահարելի ուժից տուժած Կողմը պարտավոր է հնարավորին չափ շուտ, սակայն ոչ ուշ քան տվյալ երևույթի ի հայտ գալուց 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել մյուս Կողմին անհաղթահարելի ուժի իրողության մասին՝ անհրաժեշտ փաստեր տրամադրելով այդ երևույթի բնույթի և առաջացման վերաբերյալ: Նմանապես, Կողմը պարտավոր է հնարավորին չափ շուտ ծանուցել մյուս Կողմին՝ անհաղթահարելի ուժի վերանալու մասին:

(3) Կողմերը պետք է ձեռնարկեն բոլոր հնարավոր միջոցներն անհաղթահարելի ուժի հետևանքները նվազագույնի հասցնելու համար:

3.7.4. Ժամկետների երկարաձգումը

Յուրաքանչյուր ժամանակահատված, որի ընթացքում Կողմը Պայմանագրի համաձայն պարտավոր է կատարել որևէ գործողություն կամ աշխատանք կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կամ աշխատանք կատարելուց, կարող է երկարացվել այնքան ժամանակով, որքան ժամանակ անհաղթահարելի ուժի պատճառով նա ի վիճակի չի եղել կատարել համապատասխան գործողությունը՝ պայմանով, որ տվյալ Կողմը մյուսին ներկայացրել է ողջամիտ հավաստացումներ այն բանի, որ նախատեսված ժամանակահատվածի ընթացքում ի վիճակի է իրականացնել համապատասխան գործողությունը կամ աշխատանքը, և եթե տեղի ունի ԸՊ 3.8.1(1) (ը) կետով նախատեսված դեպքը և Անհաղթահարելի ուժի հանգամանքն այլևս չի գործում:

3.7.5. Խորհրդակցում

- (1) Այն բանից հետո, երբ անհաղթահարելի ուժի արդյունքում Ծառայությունների գգալի մասի իրականացումը Վարձակալի կողմից կդառնա անհնարին, 7 (յոթ) օրվա ընթացքում Կողմերը պարտավոր են խորհրդակցել միմյանց հետ՝ ստեղծված իրավիճակում համապատասխան միջոցների ձեռնարկման վերաբերյալ փոխադարձ համաձայնության գալու նպատակով:
- (2) Եթե Կողմերը չեն կարողանում տվյալ անհաղթահարելի ուժի արդյունքում ձևավորված իրավիճակի կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ համաձայնության գալ, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի պահանջել խնդիրը լուծել ԸՊ Հոդված 12-ի դրույթների համաձայն:

3.8. Պայմանագրի վաղաժամկետ լուծում և փոփոխություններ

3.8.1. Պայմանագրի լուծումը Վարձատուի կողմից

1. Վարձատուն իրավունք ունի լուծել Պայմանագիրը, եթե.

- ա) Վարձակալը Պայմանագրի ԸՊ 7.2.1 կետով նախատեսված պարտավորությունների կամ դրանց մի մասի չկատարման համար Վարձատուից դրանց կատարման կամ թերությունների վերացման պահանջով գրության ուղարկումից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում (կամ այն ժամանակահատվածի ընթացքում, որ գրավոր նշում է Վարձատուն իր հայեցողությամբ) չի կատարում իր պարտականությունները կամ չի վերացնում թերությունները, և որ այդ պարտավորությունների կամ դրանց մասի չկատարման կամ թերությունների չվերացման փաստը Վարձատուն հաստատում է

Վարձակալին ուղղված գրությամբ և Անկախ տեխնիկական աուդիտորի համապատասխան հաշվետվությամբ,

- բ) Վարձակալի կողմից Պայմանագրի էական խախտման, միտումնավոր արարքների կամ կոպիտ անփութության պատճառով անհրաժեշտ Թույլտվությունների կամ Լիցենզիայի գործողությունը դադարեցվել է: Որևէ այլ պատճառով Լիցենզիայի գործողության դադարեցումը պետք է դիտվի որպես ԸՊ 3.8.3 կետով նախատեսված Պայմանագրի վաղաժամկետ չպատճառաբանված լուծում,
- գ) բացառությամբ ԸՊ 3.8.1 կետով սահմանված դեպքերի՝ Վարձակալի գործողությունները կամ դրանց չիրագործումը որևէ Պայմանագրային տարվա ընթացքում ավելի քան 3 անգամ հանգեցրել է Պայմանագրի էական խախտման և այդ խախտումների առկայության փաստը հաստատվել է Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից, կամ
- դ) Վարձակալը սնանկ կամ անվճարունակ է հայտարարվում կամ իր պարտավորությունները թեթևացնելու համար որևէ պայմանավորվածություն է ձեռք բերում իր պարտատերերի հետ կամ օգտվում է պարտապաններին արտոնություններ ընձեռող որևէ իրավական ակտի ընձեռած հնարավորություններից կամ հարկադրված կամ կամավոր դիմում է ինքնալուծարման, կամ
- ե) Վարձակալը սեփական սնանկության ճանաչման հայցով դիմում է դատարան կամ նախաձեռնում է նմանատիպ այլ գործընթաց՝ նպատակ ունենալով դադարեցնել գործունեությունը, վերակազմակերպվել կամ այլ կերպով նվազեցնել իր պարտավորությունները սնանկացման կամ անվճարունակության կամ նման այլ գործընթացների միջոցով, կամ նպատակ ունենալով հասնել անվճարունակության գործերով կառավարչի կամ լուծարային կառավարչի կամ նման այլ պաշտոնատար անձի նշանակման կամ դադարեցնում է կատարել իր դրամական պարտավորությունները, երբ գալիս է դրանց վճարման օրը, կամ հօգուտ պարտատերերի որևէ պարտավորություն է ստանձնում կամ կատարում է որևէ գործողություն սրան հաջորդող ենթակետերով նախատեսված գործողությունները կատարելու լիազորություն տրամադրելու ուղղությամբ, կամ
- զ) ընդդեմ Վարձակալի հայց է հարուցվում կամ նմանատիպ այլ գործընթաց է նախաձեռնվում՝ նպատակ ունենալով լուծարվել, վերակազմակերպվել կամ այլ կերպով թեթևացնել Վարձակալի կամ նրա պարտքերի բեռը՝ սնանկացման կամ անվճարունակության կամ նման այլ գործընթացի միջոցով, կամ նպատակ ունենալով հասնել իր ամբողջ գույքի կամ դրա մի մասի նկատմամբ անվճարունակության գործերով կառավարչի կամ լուծարային կառավարչի կամ նման այլ պաշտոնատար անձի նշանակման, և նմանատիպ գործընթացները շարունակվում են ավելի քան 90 (իննսուն) օր, կամ
- է) Վարձակալը չի կատարում ԸՊ 12.4 կետի համաձայն արբիտրաժի կայացրած որոշման պահանջը (անկախ հարկադիր կատարման), կամ

- ը) անհաղթահարելի ուժի արդյունքում Վարձակալն ավելի քան 60 (վաթսուն) օրվա ընթացքում ի վիճակի չի լինում իրականացնել Ծառայությունների զգալի մասը, բացառությամբ այն դեպքերի, երբ Կողմերը համաձայնության կգան ԸՊ 3.7.5(1) կետի դրույթների համաձայն համապատասխան միջոցառումների վերաբերյալ,
- թ) Վարձակալը կամ Հայտատուն կամ նրանց հետ Փոխկապակցված անձինք Վարձատուին են հանձնում վերջինիս իրավունքների, պարտավորությունների և շահերի վրա էական ազդեցություն ունեցող պաշտոնական տեղեկություններ՝ նախապես իմանալով, որ ներկայացված տեղեկատվությունը կեղծ է կամ սխալ է կամ մոլորության մեջ գցող, կամ
- ժ) եթե Վարձատուն ապացուցի, որ Վարձակալը կամ Հայտատուն կամ նրանց հետ Փոխկապակցված անձինք Պայմանագրի համար մրցելու կամ դրանով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում ներգրավվել են խարդախ կամ կոռուպցիոն գործարքների մեջ: Սույն կետի իմաստով.
- (1) կոռուպցիոն գործարքը մրցույթի հաղթողի ընտրության կամ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքում պետական պաշտոնատար անձանց գործողությունների վրա ազդելու նպատակով արժեքավոր գույք առաջարկելը կամ ստանալը կամ տալն է,
 - (2) խարդախ գործարքը՝ Վարձատուին ազատ և բաց մրցակցության առավելություններից և օգուտներից զրկելու, մրցույթի հաղթողի ընտրության և/կամ Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման վրա ազդելու նպատակով (ներառյալ նաև գներն արհեստականորեն ոչ-մրցակցային մակարդակի վրա սահմանելու նպատակով) փաստերի թյուր ներկայացումն է, ներառյալ նաև Հայտատուների շրջանում գաղտնի համաձայնության դեպքերը,
- ժա) Վարձակալը փորձում է ձեռք բերել Գույքը կամ Հողը կամ դրանց նկատմամբ իրավունքները կամ Գույքի կամ Հողի կամ դրանց նկատմամբ իրավունքների վերաբերյալ իրականացնում է գործարք, որը կխախտի Գույքի և Հողի նկատմամբ Վարձատուի իրավունքները և օրինական շահերը:
- ժբ) Վարձակալը երեք հաջորդական պայամանագրային տարիներ շարունակ, բացառությամբ առաջին տարվա, չի կարողանում ապահովել Նորմալ Գործող Ստանդարտը ՀԿՑ QS1 և ՀԿՑ CF1 մասով կամ Վարձակալը երեք հաջորդական պայամանագրային տարիներ շարունակ, բացառությամբ առաջին և երկրորդ տարվա, չի կարողանում ապահովել Նորմալ Գործող Ստանդարտը ՀԿՑ QS2 մասով:
- ժգ) Երկու հաջորդական պայամանագրային տարիներ շարունակ, բացառությամբ առաջին տարվա, Վարձակալի գործունեությունը ՀԿՑ QS1 և ՀԿՑ CF1 մասով գնահատվում է որպես հավասար կամ ավելի

ցածր, քան Վատ Կատարողական մակարդակն է կամ երկու հաջորդական պայամանագրային տարիներ շարունակ, բացառությամբ առաջին և երկրորդ տարվա, Վարձակալի գործունեությունը ՀԿՑ QS2 մասով գնահատվում է որպես հավասար կամ ավելի ցածր, քան Վատ Կատարողական մակարդակն է:

ժդ) Երեք հաջորդական պայամանագրային տարիներ շարունակ, բացառությամբ առաջին տարվա Վարձակալի գործունեությունը ՀԿՑ CS3 մասով Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից գնահատված է A1:

3.8.2. Պայմանագրի պատճառաբանված լուծման մասին ծանուցման պահանջը

- (1) Վարձատուն կարող է ԸՊ 3.8.1(1) կետի բ), կամ գ) ենթակետի դրույթներից որևէ մեկի հիմքով լուծել Պայմանագիրը՝ պատճառաբանված լուծման մասին գրավոր ծանուցում ներկայացնելով Վարձակալին: Սույն Պայմանագիրը համարվում է լուծված այդ ծանուցումը ներկայացնելու օրվանից 30 (երեսուն) օր հետո: ԸՊ 3.8.1(1) կետի ա), դ), ե), զ), է) և ը) ենթակետերի դրույթների համաձայն Պայմանագրի լուծումը կատարվում է ինքնաբերաբար և լուծման օր է համարվում Վարձակալի կողմից նշված ծանուցման ստացման օրը:
- (2) Վարձատուն պարտավոր է Պայմանագրի պատճառաբանված լուծման մասին գրավոր ծանուցման մեջ հղում կատարել Պայմանագրի այն դրույթին կամ դրույթներին, որի կամ որոնց հիման վրա նա լուծում է Պայմանագիրը:

3.8.3. Պայմանագրի չպատճառաբանված (նպատակահարմարության պատճառով) լուծման մասին ծանուցման պահանջը

Վարձատուն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր ծանուցում ներկայացնելով Վարձակալին: Պայմանագիրը համարվում է լուծված՝ նշված ծանուցումը ներկայացնելու պահից 60 (վաթսուն) օր անց: Չպատճառաբանված լուծման դեպքում Վարձատուն հատուցում է Պայմանագրի վաղաժամկետ լուծման պատճառով Վարձակալի կրած փաստացի վնասը՝ Պայմանագրի կատարումից ապագա ողջամիտ շահույթի գումարների տվյալ պահի շուկայական արժեքը (սակայն բացառելով անհարկի ներկայացվող վնասները) և Վարձակալի՝ Պայմանագրով նախատեսված գործառնությունների վաղաժամկետ դադարեցման հետ կապված լրացուցիչ ծախսերը՝ հաշվի առնելով բոլոր էական հանգամանքները: Եթե Կողմերը համաձայնության չեն գալիս վնասների գումարների վերաբերյալ, ապա հատուցման գումարը որոշվում է ԸՊ Հոդված 12-ի համաձայն:

3.8.4. Պայմանագրի լուծումը Վարձակալի կողմից

Վարձակալին իրավունք ունի վաղաժամկետ լուծել Պայմանագիրը, եթե.

- (1) Վարձատուն խախտել է իր պարտականությունների էական մասը և Վարձակալից՝ այդ խախտումները վերացնելու մասին պահանջի ստացման պահից 30 (երեսուն) օրվա ընթացքում Վարձատուն չի կատարում իր պարտավորությունները, կամ
- (2) համապատասխան պետական մարմին չի կատարում կամ հնարավորություն չի ընձեռում իրականացնել Պայմանագրով հստակորեն նախատեսված որևէ դրույթ կամ չի տրամադրում Վարձատուի կողմից Պայմանագրով երաշխավորված թույլտվությունը, եթե Վարձակալը չի հանդիսացել չկատարման կամ չտրամադրման պատճառը,
- (3) Վարձատուն չի կատարում ԸՊ 12.4 կետի համաձայն արբիտրաժի կայացրած որևէ վերջնական որոշման պահանջը:
- (4) Անհաղթահարելի ուժի արդյունքում Վարձակալը կամ Վարձատուն ավելի քան 60 (վաթսուն) օրվա ընթացքում ի վիճակի չի լինում իրականացնել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների զգալի մասը,
- (5) Վարձատուն Վարձակալին է հանձնում վերջինիս իրավունքների, պարտավորությունների և շահերի վրա էական ազդեցություն ունեցող պաշտոնական տեղեկություններ՝ նախապես իմանալով, որ ներկայացված տեղեկատվությունը կեղծ է կամ սխալ:

3.8.5. Լուծման մասին ծանուցում Վարձակալի կողմից

- (1) Եթե Վարձակալը ցանկանում է ԸՊ 3.8.4 կետի դրույթների կամ դրանցից մեկի հիմքով լուծել Պայմանագիրը, ապա այն պարտավոր է լուծման մասին գրավոր ծանուցում (Լուծման մասին Վարձակալի ծանուցում) ներկայացնել Վարձատուին: Այս դեպքում Պայմանագիրը համարվում է լուծված այդ ծանուցման ներկայացման օրվանից 30 (երեսուն) օր անց:
- (2) Սույն Պայմանագրի լուծման մասին ծանուցման մեջ Վարձակալը պարտավոր է հղում կատարել Պայմանագրի այն դրույթին կամ դրույթներին, որի կամ որոնց հիման վրա Պայմանագիրը լուծվում է Վարձակալի կողմից:
- (3) Համաձայն ԸՊ սույն 3.8.5 կետի դրույթների՝ Պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում Վարձակալը չպետք է ենթարկվի որևէ տուգանքի կամ տույժի:

3.8.6. Ծառայությունների մատուցման դադարեցումը

- (1) Հաշվի առնելով ԸՊ 3.4 կետով նախատեսված Վարձակալի պարտավորությունները՝ Պայմանագրի լուծման կամ Ավարտման օրվա վերաբերյալ համապատասխան ծանուցումն ստանալուց անմիջապես հետո Վարձակալը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ

գործողությունները Ծառայությունների իրականացումն արագ ավարտելու ուղղությամբ և Գույքը վերադարձնել Վարձատուին Պայմանագրով նախատեսված կարգով՝ խելամիտ կերպով ձգտելով այս ամենն իրականացնել ծախսերը նվազագույնի հասցնելով: Սույն Պայմանագրի գրառումներին, սարքավորումներին, նյութերին և Վարձատուին վերադարձման ենթակա այլ գույքին վերաբերելի մասով Վարձակալը պարտավոր է գործել ըստ ԸՊ 4.5 կետի դրույթների: Սույն 3.8.6 կետը չի ազատում Վարձակալին՝ Անցումային աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու պարտականություններից:

- (2) Եթե Պայմանագիրը լուծվում է Վարձակալության վճարի երկու վճարումների միջև ընկած ժամանակահատվածում, Վարձատուն պարտավոր է Վարձակալին վերադարձնել Վարձակալության վճարի այն մասը, որը համամասնորեն համապատասխանում է Պայմանագրի լուծման օրվանից մինչև հաջորդ վճարման օրն ընկած ժամանակահատվածին:
- (3) Վարձակալը, տարակարծություններից խուսափելու նպատակով, պարտավոր է շարունակել Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների կատարումը նույն պայմաններով մինչև Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցման մեջ նշված լուծման օրը: Վարձատուն կարող է Վարձակալին խնդրել շարունակել Ծառայությունների մատուցումը Պայմանագրի լուծումից հետո առավելագույնը 6-ամսյա ժամանակահատվածի ընթացքում, պայմանով որ Վարձակալին տրված Լիցենզիան դեռևս գործողության մեջ կլինի այդ ժամանակահատվածի ընթացքում:

3.8.7. Կիրառվող օրենսդրության փոփոխություն

- (1) Այն դեպքում, երբ Կողմը գտնում է, որ Կիրառվող օրենսդրության մեջ կատարվել է այնպիսի փոփոխություն, որը.
 - ա) արգելում է Վարձակալին ամբողջովին կամ մասամբ կատարել իր պարտականություններից որևէ մեկը կամ
 - բ) հանգեցնում է Վարձակալի համար
 - (1) ցանկացած Պայմանագրային տարում 75 600 000 (յոթանասունհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀԴ-ից բարձր գումարի (ՍԳԻ-ով ճշգրտված՝ ըստ Լիցենզիայի Հավելված 3-ի) կամ
 - (2) Մեկնարկային օրվանից մինչև ԸՊ սույն 3.8.7(1) կետով նախատեսված գրության ներկայացման օրը՝ աճողական 151 200 000 (հարյուր հիսունմեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀԴ-ից բարձր (առանց նախկինում ԸՊ 3.8.7(1)(բ)(1) կետով նախատեսված դրույթի համաձայն հաշվարկված գումարի կամ գումարների) գումարի զուտ ծախսերի կամ զուտ խնայողությունների առաջացման (առանց հաշվի առնելու ԸՊ 1.1 կետի սահմանումներում նշված

Օրենսդրության փոփոխության սահմանման (բ)(4) կետի դրույթները),
ապա

գ) այդ Կողմը պարտավոր է.

(1) Կիրառվող օրենսդրության փոփոխությունից սկսած 12 (տասներկու) ամսվա ընթացքում կամ

(2) ԸՊ 3.8.7 (1)(բ)(2) կետի դեպքում՝ այդ կետում նշված գումարը գերազանցող ամենավերջին աճողական ծախսի կամ խնայողության ի հայտ գալու օրվանից սկսած 12 (տասներկու) ամսվա ընթացքում

(3) մյուս Կողմին ծանուցել այդ մասին՝ նշելով Կիրառվող օրենսդրության փոփոխությունը և, հնարավորության դեպքում, Վարձակալի զուտ խնայողության կամ զուտ ծախսի գումարը, ինչպես նաև այդ ծանուցմանը կցել մանրամասները և օժանդակ փաստաթղթերը: Եթե Կողմերի միջև Սակագների ճշգրտման արդարացված լինելու վերաբերյալ համաձայնություն է ձեռք բերվում, Կողմերը համատեղ կերպով համապատասխան ճշգրտումներ կատարելու խնդրանքով գրավոր կդիմեն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին (հանձնաժողովի բաց նիստում համաձայնեցված տեսակետները ներկայացնելու հնարավորություն ստանալու նկատառումով)՝ առաջարկված փոփոխությունը հաստատելու նպատակով:

(2) Կողմն իրավունք ունի մյուս Կողմին ներկայացնել լրացուցիչ ծանուցումներ՝ նշելով օրենսդրության այն փոփոխությունները, որոնք պատճառ են հանդիսանում կամ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ պատճառ կհանդիսանան լրացուցիչ ծախսերի կամ խնայողությունների: Այս՝ ԸՊ 3.8.7(2) կետում նախատեսված լրացուցիչ ծանուցումը Կողմը պարտավոր է ներկայացնել 12-ամսյա ժամկետում՝ հաշվված այն պահից, երբ ծանուցում ներկայացնող Կողմը տեղեկացել էր կամ պարտավոր էր տեղեկանար այդ լրացուցիչ ծախսերի կամ խնայողությունների մասին:

(3) ԸՊ 3.8.7(1) կետում նշված ծանուցման ստացման պահից 5 (հինգ) Աշխատանքային օրվա ընթացքում Կողմերը պարտավոր են հանդիպել և (իսկ, եթե արդեն հանդիպել են՝ շարունակել) բանակցել՝ նպատակ ունենալով համաձայնության գալ առ այն, թե փոփոխություններ պետք է կատարվեն Պայմանագրի մեջ՝ այն Օրենսդրության փոփոխությանը համապատասխանեցնելու նպատակով, թե ոչ:

(4) Կողմերն իրավունք ունեն փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի գործողությունը դադարեցնել՝ օրենսդրության փոփոխության պատճառով:

(5) Եթե Կողմերն Օրենսդրության նշված փոփոխությունների վերաբերյալ համաձայնության չեն գալիս ԸՊ 3.8.7 կետի համաձայն ներկայացված ծանուցման ստացումից 30 (երեսուն) օրվա ընթացքում, ապա վեճը կարգավորվում է ԸՊ Հոդված 12-ի դրույթների համաձայն:

Եթե Կողմերն Օրենսդրության այդ փոփոխությունների վերաբերյալ համաձայնության չեն գալիս կամ եթե Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը չի գործում ԸՊ 3.8.7(1)գ)(3) կետում նշված գրավոր խնդրանքի համաձայն, ապա համապատասխան հանգամանքների՝

(1) ԸՊ 3.8.7(1) կետով նախատեսված գրության ստացման օրվանից 120 օր, կամ

(2) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից որոշման կայացման օրվանից 30 օր հետո

Կողմերից յուրաքանչյուրը կարող է նախաձեռնել արբիտրաժի միջոցով հարցի լուծման ընթացակարգը՝ սույն Պայմանագրի ԸՊ 12.4 կետի դրույթների համաձայն: Արբիտրաժին նման ցանկացած հայցի ներկայացման դեպքում հայցվորին իրավասու է ներկայացնել դրամային փոխհատուցման և ոչ թե Սակագների ճշգրտման պահանջ:

Կողմերը, այնուամենայնիվ, չեն նախաձեռնի արբիտրաժի միջոցով հարցի լուծման ընթացակարգը՝ համաձայն սույն ԸՊ 3.8.7(5) կետի, նախքան Վարձատուի կողմից ֆինանսական փոխհատուցման հարցի կարգավորման նպատակով բոլոր սպառիչ քննարկումների ավարտը: Այդուհանդերձ, նման քննարկումները պետք է տեղի ունենան սույն ԸՊ 3.8.7(5) կետում սահմանված ժամկետում:

(6) Օրենսդրության փոփոխության արդյունքում Վարձակալն իրավունք չունի պահանջել Պայմանագրի փոփոխություն կամ աճող ծախսերի դիմաց որևէ հատուցում ստանալ, եթե Օրենսդրության այդ փոփոխությունը

(ա) այլ կերպ է նախատեսված Պայմանագրով կամ

(բ) կարող էր խելամտորեն նախատեսվել Պայմանագրի կնքման ժամանակ:

(գ) վերաբերվում է Թույլտվությունների ռեժիմի այնպիսի փոփոխությունների, որոնք կամ. (1) կարող էին ողջամտորեն կանխատեսված լինել սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին, կամ (2) այդպիսի փոփոխությունը համապատասխանում է Լավագույն արդյունաբերական պրակտիկային և չափազանցված չէ:

(7) Սույն ԸՊ 3.8.7 կետով նախատեսված ընթացակարգերն որևէ կերպ Վարձակալին չեն ազատում Լավագույն արդյունաբերական պրակտիկայի համաձայն իր ծախսերը կրճատելու և իր խնայողություններն առավելագույնի հասցնելու Պայմանագրով նախատեսված պարտականությունից:

3.8.8. Տնտեսական հավասարակշռության խախտում

(1) Կողմերը գիտակցում են, որ Պայմանագիրը կարող է ըստ նախատեսվածի գործել, եթե հիմնականում պահպանվում են Վարձակալի նյութական խթանները: Ի լրումն, Կողմերը գիտակցում են, որ Պայմանագրի Վարձակալության պայմանագիր

ստորագրման պահին հնարավոր չէր կանխատեսել ապագա բոլոր հանգամանքները: Կողմերն ընդունում են, որ, չնայած Վարձակալն ամբողջությամբ կրում է Ծառայությունների մատուցման առևտրային պատասխանատվությունը, սույն Ծառայությունների մատուցման հիմքում դրված տնտեսական պայմանների խաթարումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, որ Վարձակալը կգերադասի դադարեցնել պայմանագիրը՝ չհամակերպվելով տնտեսական հավասարակշռության խաթարման հետ: Քանի որ Կողմերի մտադրությունն այն է, որ Պայմանագիրն իրականացվի 15-ամյա ժամկետի ընթացքում, նրանք իրենց պատրաստակամությունն են արտահայտում առ այն, որ Պայմանագիրը կվերաբանակցվի այն դեպքերում, երբ տնտեսական հավասարակշռության խաթարում տեղի ունենա՝ համաձայն ստորև նշվածի և ստորև ընդհանրական նկարագրվածի:

(2) Պարտադիր չէ, որ խաթարման պատճառը Վարձատուի գործողությունների կամ դրանց չիրականացման հետևանք լինի, սակայն այն նաև չպետք է Վարձակալի վերահսկողության տակ լինի: Խաթարման պատճառ չի կարող լինել նաև նյութերի, պահեստամասերի կամ աշխատուժի կամ այն գործոնների գների աճը, որոնք ներառված են պարբերական ճշգրտման մեխանիզմի մեջ՝ համաձայն Լիցենզիայի Հավելված 3-ի:

(3) Եթե Վարձակալը հավատացած է, որ տեղի է ունեցել Պայմանագրի տնտեսական հավասարակշռության խաթարում, որը

- (ա) խոչընդոտում է Վարձակալի պարտականությունների կատարումը, կամ
- (բ) հանգեցնում է Վարձակալի համար՝

(1) ցանկացած Պայմանագրային տարում 378 000 000 (երեք հարյուր յոթանասունութ միլիոն) ՀԴ-ից բարձր գումարի (Լիցենզիայի Հավելված 3-ի համաձայն՝ ՍԳԻ-ով ճշգրտված) կամ

(2) ցանկացած ժամանակահատվածի ընթացքում աճողական 756 000 000 (յոթ հարյուր հիսունվեց միլիոն) ՀԴ-ից բարձր (առանց նախկինում 3.8.8(3)(բ)(1) կետով նախատեսված դրույթի համաձայն հաշվարկված գումարի կամ գումարների) զուտ ծախսերի ավելացման կամ եկամուտների կրճատման, ապա Վարձակալը պարտավոր է.

- (ա) տնտեսական հավասարակշռության խախտման պահից հետո 12 ամսվա ընթացքում, կամ
- (բ) ԸՊ 3.8.8.(3)(բ)(2) կետի կիրառման դեպքում, այդ պահից առաջացած՝ 3.8.8.(3) (բ)(2) ենթակետում նշված գումարը գերազանցող աճողական ծախսերի ի հայտ գալու օրվանից սկսած 12 ամսվա ընթացքում

Վարձատուին ծանուցում տրամադրել այդ մասին՝ նշելով հավասարակշռության խաթարման մասին և եթե հնարավոր է, կցել նաև Վարձակալի զուտ ծախսի գումարը, ինչպես նաև դրա մանրամասները և հիմնավորող փաստաթղթերը:

(4) Լրացուցիչ զուտ ծախսերն իրենցից ներկայացնում են հավասարակշռության խաթարումից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագող ծախսերի, լրացուցիչ եկամուտների տարբերության և հավասարակշռության խաթարումից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագող ծախսերի կրճատման գումարների դրական տարբերությունը:

(5) Վարձակալը կարող է ժամանակ առ ժամանակ Վարձատուին տնտեսական հավասարակշռության խաթարման վերաբերյալ լրացուցիչ ծանուցումներ ուղարկել՝ նշելով լրացուցիչ ծախսերը կամ եկամուտների կրճատումները, որոնք կարող են այդ խաթարման հետևանք լինել կամ կարող են ողջամտորեն ակնկալվել, որ կծագեն այդ խաթարումից այն պայմանով, որ յուրաքանչյուր ծանուցում պետք է տրվի յուրաքանչյուր լրացուցիչ ծախսի կամ եկամուտների կրճատման դեպքի մասին Վարձակալի տեղեկանալու պահից ոչ ուշ քան 12 ամսվա ընթացքում:

(6) ԸՊ 3.8.8(3) կետով նախատեսված յուրաքանչյուր ծանուցման ստացման պահից 5 Աշխատանքային օրվա ընթացքում Կողմերը պետք է հանդիպեն և սկսեն (եթե նրանք արդեն սկսել են, շարունակեն) բանակցել՝ նպատակ ունենալով Պայմանագրում այնպիսի փոփոխություններ իրականացնել, որոնք կփոխհատուցեն հավասարակշռության խաթարման հետևանքով առաջացած ծախսերի կամ եկամուտների կրճատման գումարները:

(7) Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագիրը կարող է լուծվել տնտեսական հավասարակշռության խաթարման հետևանքով:

(8) Եթե Կողմերը, ԸՊ 3.8.8(3) կետի համաձայն ծանուցում ստանալուց 30 օրվա ընթացքում համաձայնության չեն գալիս անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ, վեճը կարգավորվում է ԸՊ Հոդված 12-ի դրույթների համաձայն:

(9) Վարձակալն իրավունք չունի Պայմանագրի որևէ փոփոխություն պահանջել կամ տնտեսական հավասարակշռության խաթարման հետևանքով ավելացած ծախսերի դիմաց որևէ վճար ստանալ այն դեպքում, եթե այդ խաթարման դեպքը կարող էր խելամտորեն կանխատեսվել կամ նախատեսվել Պայմանագրում դրա կնքման պահին:

(10) ԸՊ 3.8.8 հոդվածով նախատեսված գործողությունները չեն նվազեցնում սույն Պայմանագրով նախատեսված Լավագույն արդյունաբերական պրակտիկայի համաձայն Վարձակալի՝ իր ծախսերի նվազեցման և խնայողությունների ավելացման պարտականությունները:

Հողված 4. Գույք

4.1. Վարձատուի կողմից տրամադրվող Գույքը

- (1) Հավելված 3-ով նախատեսված Գույքը (ներառյալ Գույքի հետ առնչություն ունեցող մտավոր սեփականությունը՝ միայն ժամկետի ընթացքում լիցենզիոն պայմանագրի միջոցով) տրամադրվում է Վարձակալի բացառիկ օգտագործմանն ու տիրապետմանը: Վարձակալն իրավունք ունի միայն անձամբ օգտագործել Գույքը՝ Ծառայությունների մատուցման նպատակով: Վարձակալն իրավունք ունի Գույքն օգտագործել և տիրապետել Պայմանագրի համաձայն՝ ժամկետի ընթացքում:
- (2) Վարձակալը պարտավորվում է փոքր հիդրոէլեկտրակայաններին թույլատրել օգտվել ջրային համակարգերից Լիցենզիայով սահմանված դրույթների համաձայն:
- (3) Ժամկետի ընթացքում Վարձակալը պատասխանատու է Գույքի պահպանության և վերահսկման համար, ինչպես նաև այդ ընթացքում Գույքին կամ դրա մասին հասցված վնասի կամ կորստի համար՝ բացառությամբ Անհաղթահարելի ուժի հանգամանքների:
- (4) Համաձայն ԸՊ Հոդված 5-ի՝ Կապիտալ աշխատանքների ավարտից հետո դրանց սեփականատիրոջ՝ Վարձատուի կողմից դրանք պետք է օգտագործման հանձնվեն Վարձակալին (անհրաժեշտ կամ համապատասխան տեղեկատվությամբ հանդերձ, ներառյալ գծագրերը, շահագործման հրահանգներն ու տեխնիկական մանրամասները) և նման հանձնումից հետո այդ գույքը պետք է դառնա Գույքի մի մասը և Վարձակալը պետք է դրանք ներառի Գույքի ցանկի մեջ: Վարձակալի կողմից իրականացված կապիտալ աշխատանքների արդյունքում ապամոնտաժված (այդ թվում՝ մասնակի) կամ լուծարված (այդ թվում՝ մասնակի) Գույքը (կամ Գույքի մի մասը) կամ առաջացած ջարդոնը վարձակալի կողմից պետք է հանձնվի Վարձատուին՝ կողմերի կողմից համաձայնեցված կարգով և ժամկետներում:
- (5) Տարակարծություններից խուսափելու նպատակով՝ ժամկետի ընթացքում Վարձակալը պատասխանատվություն է կրում Գույքի Պահպանման և Նորոգման աշխատանքների համար:

4.2. Սեփականության իրավունքը

- (1) Վարձակալը երբևիցե չի հանդիսանում Գույքի սեփականատերը: Ժամկետի ընթացքում ձեռք բերված կամ կառուցված Գույքի սեփականության իրավունքը Կապիտալ աշխատանքների ավարտից հետո փոխանցվում է Վարձատուին:

- (2) Վարձակալն իրավունք չունի որևէ Անձի ներկայանալ որպես Գույքի կամ Հողի սեփականատեր:

4.3. Հողը

- (3) Հողը և Հողին վերաբերող բոլոր այն իրավունքները, որոնք անհրաժեշտ են Ծառայությունները մատուցելու համար, Վարձատուի կողմից պետք է տրամադրվեն Վարձակալին՝ Հավելված 4-ին համապատասխան: Գույքի պահպանման վերաբերյալ պայմանները և Վարձակալի պարտականությունները նմանապես վերաբերում են նաև Հողին և Հողի նկատմամբ իրավունքներին:

4.4. Օգտագործման իրավունքը

Չնայած այն հանգամանքին, որ գոյություն ունեցող կամ ձեռք բերված կամ կառուցված Գույքի սեփականության իրավունքը ժամկետի ընթացքում պատկանում է Վարձատուին, Վարձակալը բացառիկ իրավունք ունի ժամկետի ընթացքում օգտագործել գոյություն ունեցող, ինչպես նաև Կապիտալ աշխատանքների արդյունքում ստեղծված Գույքը: Վարձատուն ամեն դեպքում առանց Վարձակալի համաձայնության իրավունք չունի փոխելու Գույքի հանրային օգտագործման նշանակությունը, ինչպես նաև վաճառել, այլ անձի վարձակալության հանձնել, հանձնառությամբ տրամադրել, որևէ կերպ օտարել, տնօրինել, գրավադնել, հրաժարվել իր իրավունքներից կամ սահմանափակել իր իրավունքները գոյություն ունեցող Գույքի նկատմամբ՝ Կիրառվող օրենսդրության խախտմամբ կամ առանց դրա, իսկ Վարձակալն իրավունք չունի այդպիսի գործարքի վերաբերյալ համաձայնության տրամադրումը անհիմն մերժել կամ անհիմն կերպով ուշացնել:

4.5. Հետ հանձնումը

- (1) Ժամկետը լրանալուն պես Վարձակալի՝ Գույքի օգտագործման և տիրապետման իրավունքները դադարում են, և Վարձակալը պարտավոր է Վարձատուին Գույքը վերադարձնել այնպիսի վիճակում, որ դրա շահագործումը ապահովի Ծառայությունների՝ Կատարողական չափանիշներին համապատասխանող մակարդակը ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) տարուց ոչ պակաս ժամանակահատվածի ընթացքում՝ նկատի ունենալով, որ նման գույքը շահագործվելու և պահպանվելու է 5 (հինգ) տարի ժամկետի ընթացքում և Պայմանագրով նախատեսված չափանիշներից ոչ մեղմ չափանիշների պահանջներին համապատասխան:
- (2) Տարակարծություններից խուսափելու նպատակով ընդունվում է, որ Գույքը գտնվում է պահանջվող վիճակում, համաձայն ԸՊ 4.5(1) կետի դրույթների, եթե Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատվում է, որ

Վարձակալից պահանջվել է և նա առավելագույն չափով իրականացրել է Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի աշխատանքները և գնումները:

- (3) Հաջորդող Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցումն ապահովելու նպատակով Վարձակալը պարտավոր է սեփականության իրավունքով Վարձատուին հետ վերադարձնել Ժամկետի սկզբում ԸՊ 6.3 կետով նախատեսված կարգով իրեն փոխանցված սարքավորումներին և նյութերին համարժեք սարքավորումներ և նյութեր:
- (4) Վարձակալը պարտավոր է նախապատրաստել Գույքի վիճակի վերջնական ուսումնասիրություն համաձայն Հավելված 7-ի, որի արդյունքները պետք է հավաստվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:
- (5) Սույն՝ ԸՊ 4.5 կետով նախատեսված նորմերի գործողությունը շարունակվում է նաև Պայմանագրի գործողությունը դադարեցնելուց հետո:
- (6) Վարձատուն պարտավոր է կրել Գույքի հետ հանձնման հետ կապված ծախսերը:
- (7) ԸՊ 6.3 կետում նշված նյութերը և սարքավորումները, որոնք **սեփականության իրավունքով** փոխանցվել են Վարձակալին և նրա կողմից օգտագործվել են Կապիտալ աշխատանքների—համար, չեն համարվում Վարձատուին հետ հանձնված:

Հոդված 5. Ներդրումների իրականացումը վարձակալության ժամկետի ընթացքում

5.1 Ընդհանուր դրույթներ

- (1) Վարձատուն միջոցների առկայության սահմաններում և, եթե այլ նախատեսում չկա սույն Պայմանագրում (ինչպես օրինակ Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը), ապահովում է Սպասարկման տարածքում Գույքի խոշոր նորոգումների, ցանցի ընդլայնման և նորացման ներդրումները:
- (2) ՄՖԿ կողմից վարկի կամ դրամաշնորհի ձևով Վարձատուին ֆինանսավորում տրամադրվելու և Վարձատուի կողմից համապատասխան խնդրանքի դեպքում Վարձակալը՝ վճարման պայմանների մասին համաձայնություն ձեռք բերելուց հետո պարտավոր է իրականացնել աշխատանքների վերահսկողությունը և բավարարել Վարձատուի կողմից տրամաբանորեն առաջադրված նախագծման, տեխնիկական պայմանների

որոշման, գնումների, աշխատանքների հանձնման և վերահսկողության պայմանները, եթե Վարձատուն տեղեկացրել է Վարձակալին, որ այդ պայմանները պահանջվում են ֆինանսավորող անձի կամ կազմակերպության կողմից: Վարձակալին ողջ անհրաժեշտ տեղեկատվությունը պետք է տրամադրվի մինչև պահանջվող աշխատանքների իրականացումը: Մասնավորապես, Վարձակալը պարտավոր է գործել ֆինանսական միջոցներ տրամադրող միջազգային կամ երկկողմանի ֆինանսական հաստատության կողմից գնումների ընթացակարգերի պահանջների համաձայն և երաշխավորել, որ այն դեպքերում, երբ կկիրառվեն գնումների նշված ընթացակարգերը, Վարձակալը կվարձի գնումների տվյալ ընթացակարգերով աշխատանքի փորձ ունեցող խորհրդատուների (աշխատանքային պայմանագրով կամ խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր կնքելու միջոցով):

- (3) Եթե Վարձատուն և Վարձակալը համաձայնության չզան ԸՊ 5.1(2) կետով նախատեսված դեպքերում Վարձակալի փոխհատուցման վերաբերյալ, ապա Վարձատուն կարող է բանակցել որևէ Երրորդ կողմի հետ ներդրումների իրականացման վերահսկողությունն իրականացնելու վերաբերյալ և համապատասխան առաջադրանքը հանձնարարել Երրորդ կողմի: Եթե Վարձատուն որևէ ներդրման համար վերահսկողության գործառույթը հանձնում է Երրորդ կողմի, Վարձակալը պարտավոր է հնարավորություն ընձեռել Երրորդ կողմին կատարել և վերահսկել Գույքի վրա ներդրումները, իր գործողությունները կորդինացնել և համագործակցել տվյալ Երրորդ կողմի հետ և աջակցել ներդրման իրականացմանը:
- (4) Կապիտալ աշխատանքների ավարտից հետո սեփականության իրավունքն անցնում է Վարձատուին, որը պարտավոր է ԸՊ 4.1(3) կետի համաձայն այդ աշխատանքների արդյունքը օգտագործման իրավունքով տրամադրել Վարձակալին: Վարձակալին Պայմանագրի մեկնարկային տարում լրացուցիչ ներդրումների կամ կապիտալ վերանորոգման արդյունքում փոխանցված Գույքի օգտագործման համար Վարձակալի գրավոր համաձայնությունը չի պահանջվի, սակայն Վարձակալի նախնական գրավոր համաձայնությունը կպահանջվի այս միջոցներով ստեղծված ջրային համակարգերը (որոնք Վարձակալին չէին փոխանցվել Պայմանագրի մեկնարկային տարում) Վարձակալի օգտագործմանը հանձնելու համար, ինչը չի կարող անհիմն կերպով մերժվել նրա կողմից: Եթե Վարձակալը չի տալիս իր գրավոր համաձայնությունը նոր ստեղծված ջրային համակարգն ընդունելու վերաբերյալ, նա պետք է ներկայացնի ողջամիտ հիմնավորում: Հիմնավորման ողջամտությունը որոշվում է Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:
- (5) Վարձատուն պետք է պատասխանատու լինի ներդրումների համար, մասնավորապես, պայմանագրեր շնորհելով աշխատանքների, ծառայությունների և ապրանքների ձեռքբերման համար, ' համաձայն սույն'

Հողված 5-ի դրույթների: Վարձատուն պարտավորվում է, որ ցանկացած կազմակերպություն և/կամ մարմին (ինչպիսիք են Գնումների աջակցման կենտրոնը կամ խորհրդատուները, որոնց կարող է հանձնարարվել արդյունավետություն և/կամ մանրամասն ձևավորում ներդրումային ծրագրում) Վարձակալին սերտորեն մասնակից դարձնեն մրցութային փաստաթղթերի պլանավորման, նախագծման, կազմման աշխատանքներին: Վարձատուից կարող է նաև պահանջվել աջակցելու մրցույթների կազմակերպմանը և անցկացմանը, վերահսկողության աշխատանքների իրականացմանը սույն Հոդվածի համաձայն և ինչպես կարող է պահանջվել ՄՖԿ կողմից:

- (6) ՄՖԿ միջոցների հաշվին իրականացվող Կապիտալ աշխատանքների արդյունքում փոփոխության ենթարկված Գույքը, Կապիտալ աշխատանքների ավարտից հետո կազմում են վարձակալած Գույքի մի մասը և պետք է դիտարկվեն որպես սույն Պայմանագրի դրույթների համաձայն վարձակալված Գույք: Վարձատուն պարտավոր է սեղմ ժամկետներում լրացնել Գույքի ցանկը համապատասխան կերպով, իսկ Վարձակալը՝ հաստատել այն:

5.2 Օժանդակ սարքավորումների վերաբերյալ Վարձակալի պարտավորությունները

Կապիտալ աշխատանքների ֆինանսավորումը, հանդիսանում է Վարձատուի պարտականությունը, բացառությամբ՝ Հավելված 2-ում մանրամասնած Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի: Այնուամենայնիվ, իր ծառայությունների իրականացման նպատակով Վարձակալը պարտավոր է ապահովել և պահպանել օժանդակ համապատասխան սարքավորումներ, որոնք կարող են ներառված լինել, սակայն չսահմանափակվել ստորև բերվող ցանկով.

- (1) շահագործման սարքավորումներ, այդ թվում նաև տրանսպորտային միջոցներ, արտադրամասային և գրասենյակային սարքավորումներ, առևտրային և հաշվապահական ծրագրերով համակարգիչներ, աշխարհագրական տեղեկատվական համակարգ, CAD,
- (2) Հոսակորուստների հայտնաբերման սարքավորում, և
- (3) կեղտաջրերի հեռացման ցանցի զննման, Պահպանման, Վերանորոգման և կառավարման նպատակով համապատասխան մաքրիչ սարքեր և անվտանգության սարքավորումներ, ներառյալ՝ կոյուղու մաքրման (խցանումների վերացման) սարքեր, օդախտուցիչ մեքենաներ (կոմպրեսորներ), խողովակների որոնման սարքեր, բարձր ճնշման շարժական մաքրիչ սարքեր և CCTV խցիկներ:

5.3 Կապիտալ ծախսերի իրականացումը

5.3.1 Ընդհանուր դրույթներ

Կապիտալ ծախսերի, բացառությամբ ՊԿԱԾ-ի, պատասխանատուն Հայաստանի հանրապետության կառավարությունն է և համապատասխան մարմինները: Վարձատուն Կիրառելի օրենսդրությանը համապատասխան կապահովի սերտ համագործակցություն և խորհրդակցումը Վարձակալի հետ նախագծերի նախապատրաստման և նախագծման փուլերում և համապատասխան փաստաթղթեր պատրաստելիս:

5.3.2 Վարձակալը որպես ՄՖԿ-ների ներդրումային ծրագրերի գնումների սուբյեկտ

- (1) Եթե և այնքանով որքանով ՄՖԿ պահանջով Վարձակալը պարտավորված լինի հանդես գալ որպես գնումների սուբյեկտ, Վարձակալը պարտավոր է ընդունել և հետևել համապատասխան (հիմնական) ՄՖԿ գնումների ուղեցույցներում սահմանված գնումների ընթացակարգերին և ուղեցույցներին:
- (2) Եթե վարձակալը գործում է որպես գնման սուբյեկտ այս գործողությունների իրականացման ընթացքում Վարձակալը գործում է Վարձատուի անունից և հանդես է գալիս որպես նրա գործակալ: Վարձակալն ազատ է իր գործողություններում և պարտավոր չէ հետևել Վարձատուի կամ նրա ներկայացուցիչների հրահանգներին, բացառությամբ ՄՖԿ գնումների ուղեցույցի կիրառման, ինչպես նաև Կիրառվող օրենսդրության և Լավագույն արդյունաբերական պրակտիկայի պահանջների ապահովման առումով:
- (3) Վարձակալը պարտավոր է Վարձատուի անունից ՄՖԿ գնումների ուղեցույցների համաձայն իրականացնել մրցութային գործընթացները, ներառյալ նախագծում, տեխնիկական մասնագրերի կազմում, ինչպես նաև այլ մրցութային փաստաթղթերի նախագծերի կազմում և նախապատրաստում, ընդունելի հայտատուների ընտրություն, մրցույթի հրապարակում, հայտերի ընդունում, գնահատում և հաղթող հայտատու ճանաչելու վերաբերյալ առաջարկության ներկայացում: Վարձակալն իրավունք ունի խորհրդատուներ վարձել նախագծման աշխատանքների իրականացման, ինչպես նաև տեխնիկական մասնագրերի և այլ մրցութային փաստաթղթերի նախապատրաստման նախագծերի կազմման համար:
- (4) Ստորև թվարկված իր գործառույթների իրականացման ընթացքում Վարձակալը պարտավոր է ձեռնարկել բոլոր խելամիտ միջոցները՝

ա) ջրամատակարարման և կոյուղու համակարգերի Ողջամիտ
ինժեներական պրակտիկային, և

բ) Լավագույն արդյունաբերական պրակտիկային

համապատասխանությունն ապահովելու նպատակով:

- (5) Վարձակալը պարտավոր է հաստատել Ներդրումային Ծրագրերի շրջանակներում ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների ստացումը:

5. 4 Այլ ներդրումներ

Վարձատուի կողմից համապատասխան հաստատման դեպքում Վարձակալն իրավունք ունի իր հաշվին իրականացնել կապիտալ աշխատանքներ որոնք, ըստ Վարձակալի, անհրաժեշտ է Ծառայությունների մատուցման համար: Կապիտալ աշխատանքների ավարտից հետո դրանց արդյունքում ստեղծված ակտիվների սեփականության իրավունքը փոխանցվում է Վարձատուին, որը պարտավոր է նշված ակտիվների օգտագործման և տիրապետման իրավունքը Գույքի ցանկում ներառված ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնական միջոցների վրա կատարված ն` Պայմանագրին համաձայն: Այդ ակտիվները համարվում են Գույքի մաս և, Վարձատուն պարտավոր է դրանց մասով փոփոխել Գույքի ցանկը, իսկ Վարձակալը` հաստատել այն: Վարձատուի կողմից Պայմանագրի վաղաժամկետ (ինչպես պատճառաբանված, այնպես էլ չպատճառաբանված) լուծման դեպքում Վարձատուն պարտավոր է փոխհատուցել Վարձակալին այս ակտիվների ամորտիզացված արժեքի հիման վրա:

Հողված 6. Վարձատուի իրավունքները և պարտավորությունները

6.1. Աջակցությունը և ազատումը

Վարձատուն պարտավորվում է ապահովել.

- (1) Վարձակալի աշխատակազմին Վարձակալի կողմից Ծառայություններն իրականացնելու համար անհրաժեշտ բնակության և աշխատանքի թույլտվություն և նման այլ փաստաթղթերի ստացման հարցում աջակցություն,
- (2) Հայաստանի Հանրապետությունում գտնվելու համար Վարձակալի աշխատակազմի անդամներին, համապատասխան դեպքերում նաև նրանց խնամքի տակ գտնվող անձանց մուտքի և ելքի թույլտվություն (վիզա), փոխանակման թույլտվության և այլ անհրաժեշտ փաստաթղթեր արագորեն ձեռք բերելու աջակցություն,
- (3) Վարձակալի աշխատակազմի անդամներին և նրանց խնամքի տակ գտնվող անձանց՝ Ծառայությունների մատակարարման համար անհրաժեշտ որևէ գույքի կամ անձնական իրերի արագ մաքսազերծման համար աջակցություն,
- (4) Վարձատուի պաշտոնատար անձանց և ներկայացուցիչներին Ծառայությունների արագ և արդյունավետ մատուցման համար անհրաժեշտ հրահանգների տրամադրում,
- (5) Վարձակալին բոլոր այն փաստաթղթերի տրամադրումը, որոնց կարիքը նա կունենա հարկերից, տուրքերից, մաքսային և այլ վճարներից ազատվելու համար՝ ԸՊ 13.8 կետի համաձայն:

6.2. Հողի, Գույքի և դրանց առնչվող տեղեկատվության մատչելիությունը

- (1) Վարձատուն պարտավոր է Վարձակալին տրամադրել (իր հնարավորությունների սահմաններում) օրինական բոլոր թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են հողատարածքները, շինությունները և Գույքն անարգել մուտք գործելու համար, ինչպես նաև տրամադրի Սպասարկման տարածքում գտնվող Գույքի տեխնիկական գծագրերն ու քարտեզները, դրանց վերաբերյալ տեխնիկական և տնտեսական տեղեկատվություն, որոնք անհրաժեշտ են Ծառայությունների իրականացման համար: Վարձակալը պարտավոր է վճարել նշված թույլտվությունների ստացման դիմաց սահմանված վճարները:

- (2) Վարձատուն պարտավոր է Վարձակալին տրամադրել կամ ապահովել, որպեսզի Ընկերությունը Վարձակալին փոխանցի ջրօգտագործման իրավունքները, եթե այդ իրավունքները կարող են փոխանցվել և համապատասխան կերպով հաստատվել թույլտվությունները տրամադրող մարմնի կողմից:
- (3) Եթե 6.2(2) կետի համաձայն և կարգով թույլտվությունները Ընկերության կողմից չփոխանցվեն Վարձակալին, ապա Վարձատուն պարտավոր է գործադրել բոլոր ջանքերը ցանկացած թույլտվություն տրամադրելու կամ ապահովելու նպատակով, որը պահանջվում է ժամկետի ընթացքում Ծառայությունների մատուցման նպատակով համակարգի գործունեության համար.
- (ա) Զրօգտագործման թույլտվություն,
- (բ) Լիցենզիա,
- (4) Վարձատուն պարտավոր է Ընկերությունից պահանջել, որպեսզի այն տրամադրի բոլոր փաստաթղթերը, ձեռնարկները, գծագրերն ու քարտեզները և ծառայություններն իրականացնելու համար այլ անհրաժեշտ տեղեկատվությունը ոչ ուշ, քան Մեկնարկային օրվանից մեկ ամիս առաջ:
- (5) Վարձակալը պարտավոր է Վարձատուին, նրա լիազոր պաշտոնատար անձանց, աշխատակիցներին, գործակալներին և նրա կողմից վարձված աուդիտորներին թույլ տալ աշխատանքային ժամերի ընթացքում ստուգման և հավաստագրման նպատակով մուտք գործել իր տարածք, ստորաբաժանումներ և տեղանքներ, ինչպես նաև հնարավորություն տալ ծանոթանալ գրառումներին, փաստաթղթերին և գծագրերին:

6.3. Սարքավորումներ, նյութեր, գույք

- (1) Վարձակալի կողմից Ծառայությունների իրականացման նպատակով Վարձատուն պարտավոր է.
- (ա) Վարձակալին հանձնել Ընկերության տիրապետման տակ Մեկնարկային օրվա դրությամբ գտնվող ամբողջ Գույքը,
- (բ) Վարձակալին հանձնել սեփականության իրավունքով սարքավորումները և նյութերը՝ ԸՊ 6.3.(1).(գ) կետի ցանկին համաձայն:
- ,
- (գ) նախապատրաստել և Վարձակալին տրամադրել փոխանցվող սարքավորումների և նյութերի ցանկը, որը ներառում է յուրաքանչյուր անվանման սարքավորման և նյութի գնահատված արժեքը,(դ) Պայմանագրի համաձայն Վարձակալին առանց սահմանափակումների տրամադրել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ՝ Մեկնարկային օրվա դրությամբ Ընկերությունում

առկա տեխնիկական և տնտեսական տվյալները, գծագրերն ու սխեմաները:

- (2) Եթե Վարձատուն չի կատարում ԸՊ-ի 6.3(1) կետով սահմանված իր պարտականությունները, ապա Կողմերը պարտավոր են համաձայնության գալ ֆինանսական փոխհատուցման և պարտականությունների կատարման ժամկետն այնքան ժամանակով երկարաձգելու վերաբերյալ, որքան անհրաժեշտ կլինի Վարձակալին Ծառայությունները մատուցելու համար:

6.4. Ներկայացված փաստաթղթերի քննարկումն ու հաստատումը

- (1) Վարձակալի կողմից Վարձատուին ծրագրի, հաշվետվության կամ Վարձատուի կողմից հաստատման ենթակա որևէ այլ փաստաթղթի ներկայացման դեպքում Վարձատուն պարտավոր է այդ փաստաթուղթը ստանալու պահից 30 (երեսուն) օրյա ժամկետում հաստատել այն կամ ներկայացնել իր դիտողությունները, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- (2) Եթե Վարձատուն չի հաստատում կամ հրաժարվում է հաստատել Վարձակալի կողմից ներկայացված փաստաթղթերը համաձայն ԸՊ 6.4.(1) կետի, ապա Վարձակալը պարտավոր է գրավոր տեղեկացնել Վարձատուին, որ իր ներկայացրած փաստաթղթերի վերաբերյալ նա դեռ պատասխան չի ստացել:
- (3) Եթե Վարձատուն Վարձակալի գրավոր ծանուցումը ստանալու պահից 14 (տասնչորս) օրվա ընթացքում չի պատասխանում Վարձակալի գրավոր ծանուցմանը՝ համաձայն ԸՊ 6.4.(2) կետի, ապա Վարձակալի ներկայացրած փաստաթղթերը համարվում են հաստատված:

6.5. Մտավոր սեփականություն

6.5.1. Մտավոր սեփականության երաշխիքները

Վարձատուն պարտավոր է ապահովել, որպեսզի Վարձակալը, նրա աշխատակիցները, պաշտոնատար անձինք և Կապալառուները զերծ մնան բոլոր տեսակի դատական և դատավարական գործողություններին երրորդ անձանց կողմից մասնակից դարձվելուց, վարչական վարույթներից, վեճերից, հայցերից, պահանջներից, կորուստներից, վնասներից, բոլոր տեսակի ծախսերից, այդ թվում նաև փաստաբանի վարձատրությունից, և այն ամենից, ինչից կարող է տուժել Վարձակալը Գույքը վարձակալելու հետևանքով երրորդ անձանց պատկանող՝ գրանցված կամ որևէ այլ կերպ գոյություն ունեցող մտավոր սեփականության իրավունքի խախտումների կամ թվացյալ խախտումների դեպքում, բացառությամբ այն դեպքերի, որոնք արդյունք են Վարձակալի անփութության կամ միտումնավոր սխալ գործելու:

6.5.2. Նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության պատկանելությունը (սեփականությունը)

(1) Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների հետ կապ ունեցող կամ դրանց վերաբերող և մինչև Պայմանագրի կնքումը գոյություն ունեցող մտավոր սեփականությունը (սխեմաներ, գծագրեր, փաստաթղթեր, այլ տեղեկատվություն, նմուշներ, մոդելներ, ձևանմուշներ, գաղափարներ, քաղաքականություններ, ընթացակարգեր, մեթոդներ, պրոցեսներ, նյութեր, այլ նյութական և ոչ նյութական իրեր), որոնց վերաբերում է Պայմանագիրը, մնում են այն Կողմին, որը ստեղծել է այն:

(2) Վարձատուն Վարձակալին ժամկետի ընթացքում տալիս է Վարձատուի սեփականությունը հանդիսացող նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության անփոփոխ (առանց հետ կանչման հնարավորության), ոչ բացառիկ, ամբողջ աշխարհում գործող և անվճար (առանց ոռյալթիի վճարման) օգտագործման իրավունքը հետևյալ դեպքերի համար.

ա) Ծառայությունների մատուցման համար, և

բ) միայն այն դեպքերում, երբ դրանք անհրաժեշտ են Մտավոր սեփականության ակտիվներն օգտագործելու համար (ինչպես այդ դրույթը սահմանված է ԸՊ 6.5.3 կետում):

(3) Վարձատուն պարտավոր է իր հաշվին ձեռնարկել այն ամենն, ինչ անհրաժեշտ է, որպեսզի ԸՊ 6.5.2 կետում նշված լիցենզիաները և/կամ թույլտվությունները և/կամ լիցենզիոն պայմանագրերն ուժի մեջ մտնեն:

6.5.3. Այլ մտավոր սեփականության պատկանելությունը

(1) Մտավոր սեփականությունը, ստորև բերված ցանկացած տեսքով՝

ա) գծագրեր, փաստաթղթեր, այլ տեղեկատվություն, նմուշներ, մոդելներ, ձևանմուշներ և այլ նմանատիպ մտավոր սեփականություն, ներառյալ ստեղծված կամ պատրաստված Վարձակալի կողմից, որոնք պահանջվում են Պայմանագրով,

բ) գաղափարներ, քաղաքականություններ, ընթացակարգեր, մեթոդներ, պրոցեսներ, նյութեր, այլ նյութական կամ ոչ նյութական իրեր, որոնք առաջին անգամ հայտնաբերվել կամ մշակվել են Ծառայությունների մատուցման ընթացքում որևէ Կողմի կողմից,

ստեղծված մինչև Պայմանագրի կնքումը կամ դրանից հետո որևէ Կողմի կողմից և, որոնք որևէ կապ կամ առնչություն ունեն Ծառայությունների հետ (միասին՝ Մտավոր սեփականության ակտիվներ) մնում են այն Կողմի սեփականությունը, որն այն ստեղծել է:

(2) Վարձակալը Վարձատուին տալիս է Վարձակալի կողմից ստեղծված Մտավոր սեփականության ակտիվների անփոփոխ (առանց հետ կանչման Վարձակալության պայմանագիր

հնարավորության), ոչ բացառիկ, հարատև, փոխանցելի և անվճար (առանց ռոյալթիի վճարման) օգտագործման իրավունքը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման համար՝ անկախ այն բանից, թե Ծառայությունները կմատուցվեն Վարձակալի, թե Հաջորդող Օպերատորի կողմից: Նման օգտագործման իրավունքը տարածվում է միայն Սպասարկման տարածքում Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման վրա:

(3) Վարձակալը պարտավոր է իր սեփական ծախսերով ջանքեր ներդնել ԸՊ 6.7.3 կետով նախատեսված լիցենզիայի տրամադրման համար: Վարձակալը պարտավոր է Վարձատուին հայտնել Ժամկետի ընթացքում ստեղծված Մտավոր սեփականության ակտիվների մասին և նրան փոխանցել այդ մտավոր սեփականության վերաբերյալ փաստաթղթերի կրկնօրինակները:

6.5.4. Ենթա-լիցենզիայի տրամադրումը

Եթե Վարձակալը հանդիսանում է երրորդ անձանց պատկանող այնպիսի մի մտավոր սեփականության ենթա-լիցենզավորված անձ, որն անհրաժեշտ է նախապես գոյություն ունեցող մտավոր սեփականության նյութերի կամ Մտավոր սեփականության ակտիվները օգտագործման համար, Վարձակալը պարտավոր է իր իսկ հաշվին ապահովել, որպեսզի Վարձատուի համար նույնպես ստացվի այդ Մտավոր սեփականությունից օգտվելու վերջինիս համար ընդունելի խելամիտ պայմաններով ենթա-լիցենզիա կամ լիցենզիոն պայմանագիր, եթե Վարձատուն նման խնդրանքով գրավոր դիմի Վարձակալին:

6.5.5. Մասնակիցների կողմից երաշխավորումը

Կողմերից յուրաքանչյուրը երաշխավորում է նախապես գոյություն ունեցող բոլոր այն Մտավոր սեփականության նյութերի և փաստաթղթերի համար (նաև նախապես գոյություն ունեցող Մտավոր սեփականության այն մասերի համար, որոնց ստեղծմանը մասնակցել է տվյալ կողմը), որ նրանք սեփականատեր են հանդիսանում, կամ ունեն օգտագործման իրավունք կամ էլ տրամադրվել է նրանց կողմից, ինչպես նաև որ Մտավոր սեփականության նյութերը և փաստաթղթերը և Ծառայությունները չեն խախտում որևէ այլ Անձի Մտավոր սեփականության իրավունքները: Սույն կետը գործում է նաև Պայմանագրի դադարեցումից հետո:

6.6. Պայմանագրի վերահսկողությունը

(1) Վարձատուն առաջնային պատասխանատու է Պայմանագրի հետ առնչվող գործունեության բոլոր ոլորտների համակարգման համար, և Վարձատուն, համաձայն Պայմանագրի, իր համակարգման և

վերահսկման իրավունքներն ու պարտավորություններն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն փոխանցել Ծրագրի իրականացման միավորին (ԾԻՄ):

- (2) Եթե ստեղծված է ԾԻՄ ապա այն պարտավոր է Վարձատուի անունից սույն Պայմանագրի շրջանակներում իրականացնել ծրագրի համակարգման պարտականությունները, այդ թվում.
 - ա) Պայմանագրի իրականացման առնչությամբ Վարձակալի անմիջական վերահսկողությունը, և/կամ
 - բ) Վարձատուի անունից մասնակցել Վարձակալի հետ բոլոր հանդիպումներին, և/կամ
 - գ) քննարկել և հաստատել Վարձակալի կողմից Վարձատուին ներկայացված փաստաթղթերը՝ համաձայն Պայմանագրի դրույթների:
- (3) Տարակարծություններից խուսափելու նպատակով՝ բացառությամբ Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի՝ սույն Պայմանագրի համաձայն ո՛չ Վարձատուն, և ո՛չ էլ ԾԻՄ որևէ լիազորություն կամ իրավունք չունեն Վարձակալի ամենօրյա գործառույթների վերահսկողություն իրականացնել կամ որևէ միջոցներ ձեռնարկել նրա նկատմամբ (բացառությամբ Հավելված 7-ում Հաշվետվությունների ներկայացման պահանջներին վերաբերող դեպքերի և ԸՊ 7.2.1(11) կետով նախատեսված դեպքերի):

6.7. Անկախ Տեխնիկական Աուդիտոր

6.7.1. Անկախ Տեխնիկական Աուդիտորի վարձումը

- (1) Վարձատուն, վարձում է Անկախ Տեխնիկական Աուդիտոր՝ միջազգային որևէ ճանաչված, հեղինակություն ունեցող կազմակերպության, որի պարտականություններն են.
 - (ա) անհրաժեշտության դեպքում, Վարձակալի հետ Գույքի ցանկի (Հավելված 3. «Գույքի նկարագրություն») ուսումնասիրություն,
 - (բ) Բազիսային Տարվա Տվյալների Հաշվետվության ուսումնասիրությունը և աուդիտը,
 - (գ) Վարձակալի կողմից տեխնիկական կառավարման, շահագործման և պահպանման ամենամյա աուդիտի իրականացում՝ համաձայն ԸՊ 6.7.2 կետի և Հավելված 6-ի և 7-ի,
 - (դ) վճարման ենթակա տարեկան տուժանքների հաշվարկում՝ Հավելված 6-ի դրույթների համաձայն,

- (ե) վերջնական վիճակի ստուգում և հաստատում
 - (զ) այլ պարտականություններ ինչպես ներկայացված են ԸՊ 3.4, 3.5, 3.8, 4.5, 5.1 կետերում և Հավելված 2-ում :
- (2) Անկախ Տեխնիկական Աուդիտորը պայմանագիր կունենա Վարձատուի հետ: Վարձակալը կկրի Անկախ Տեխնիկական Աուդիտորի ծառայությունների վարձատրման պարտավորությունը:
- (3) Անկախ Տեխնիկական Աուդիտորի՝ ԸՊ 6.7.1(1) կետով նախատեսված պարտականությունների առնչությամբ կայացրած որոշումները կամ այն լրացուցիչ հանձնարարությունները, որոնց շուրջ Կողմերը կհամաձայնվեն, կլինեն վերջնական և պարտադիր Կողմերի համար, և դրանց նկատմամբ չեն կիրառվի ԸՊ 12.4 կետում շարադրված դրույթները: Այս որոշումները պետք է կիրարկելի լինեն Հայաստանի Հանրապետության ցանկացած դատարանի կողմից:

6.7.2. Տեխնիկական, շահագործման և պահպանման, կառավարման տարեկան աուդիտ

- (1) Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի Վարձակալի աշխատանքի և նվաճումների տեխնիկական, շահագործման և պահպանման, կառավարման ամենամյա աուդիտ՝ համաձայն Պայմանագրի («Տեխնիկական, շահագործման և պահպանման, կառավարման աուդիտ»), և Վարձատուին ու Վարձակալին ներկայացնի Տեխնիկական, պահպանման և շահագործման, կառավարման աուդիտի զեկույցի նախագիծը՝ Պայմանագրային տարվա ավարտից ոչ ուշ, քան 180 օրվա ընթացքում իսկ Տեխնիկական, պահպանման և շահագործման, կառավարման աուդիտի ավարտական զեկույցը՝ Պայմանագրային տարվա ավարտից ոչ ուշ, քան 240 օրվա ընթացքում:
- (2) Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման աուդիտը ներառում է.
- (ա) այն հաշվետվությունների /ներառյալ ՊԿԱԾ/, պլանների, ծրագրերի, ուղեցույցների, ուսումնասիրությունների, հետազոտությունների, հրահանգների և այլ փաստաթղթերի ստուգումն ու ճշտումը, որոնք Վարձակալը պարտավոր է կազմել Պայմանագրի համաձայն, և
 - (բ) Վարձակալի աշխատանքի կատարողականի ուսումնասիրում և աուդիտ Հավելված 6-ով նախատեսված Կատարողական չափանիշներին համապատասխանության և ընդհանուր առմամբ Ծառայությունների կատարման առումով՝ համաձայն Հավելված 2-ի:
 - (գ) Հավելված 6-ի դրույթների համաձայն վճարման ենթակա տարեկան տուժանքների հաշվարկը

6.8. Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունը

- (1) Վարձակալը, Հավելված 7-ով սահմանված ժամկետներում, պետք է պատրաստի և ներկայացնի Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունը ելնելով հասանելի տվյալներից և տեղեկատվությունից:
- (2) Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունը պետք է ներառի (ա) Հավելված 6-ում թվարկված ՀԿՑ-ների և ՆՀՑ-ների ելակետային տարեկան արժեքները և (բ) համապատասխան հաշվարկների բացվածքը, որը պետք է աուդիտի ենթարկվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից: Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից աուդիտի արդյունքները ամփոփող բազիսային տարվա աուդիտի հաշվետվության նախագծի ներկայացումից հետո 15 օրվա ընթացքում Վարձատուն և/կամ Վարձակալը պետք է ներկայացնեն իրենց առարկությունները, եթե այդպիսիք կան:
- (3) Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ներկայացնի բազիսային տարվա աուդիտի ավարտական հաշվետվությունը (ա) առարկությունները ստանալուց հետո 15 օրվա ընթացքում (բ) առարկությունների բացակայության դեպքում՝ բազիսային տարվա աուդիտի հաշվետվության նախագծի ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում: Բազիսային տարվա աուդիտի ավարտական հաշվետվությունը վերջնական է և պարտադիր Կողմերի համար և դրա նկատմամբ չեն տարածվում ԸՊ 12.4 կետով նախատեսված դրույթները:

Հոդված 7. Վարձակալի հիմնական իրավունքներն ու պարտականությունները

7.1. Հիմնական իրավունքները

- (1) Ժամկետի ընթացքում և Ծառայությունների մատուցման նպատակով միայն Վարձակալն ունի Գույքի օգտագործման իրավունք՝ բացառությամբ ԸՊ 4.1(2) և ԸՊ 4.5 կետերով նախատեսված դեպքերի:
- (2) Ժամկետի ընթացքում Վարձակալն ունի իր պատասխանատվությամբ և ռիսկով Սպասարկման տարածքում ոչ մրցակցային հիմունքներով Ծառայություններ իրականացնելու իրավունք՝ համաձայն համապատասխան Թույլտվության պայմանների:

7.1.1 Տևողությունը

Իրավունքները և թույլտվությունները տրամադրվում են ժամկետի համար՝ Պայմանագրով նախատեսված պայմաններով:

7.1.2 Հարակից իրավունքներ

Սույն Պայմանագիրը կնքելով՝ Վարձատուն Վարձակալին տալիս է նույն իրավունքները և իրավասությունները, որոնք նախկինում իր համաձայնությամբ ուներ Ընկերությունը, որոնք խելամտորեն անհրաժեշտ կլինեն Վարձակալին՝ Պայմանագրով սահմանված պարտականությունների պատշաճ կատարման համար:

7.1.3 Վարձակալի կողմից Սակագների կիրառման իրավունքի ճանաչումը

- (1) Կողմերն ընդունում են, որ Վարձակալը Կիրառվող օրենսդրության համաձայն իրավունք ունի իր մատուցած Ծառայությունների դիմաց Բաժանորդների հետ հարաբերություններում կիրառել և նրանցից վճարներ գանձել Սակագների հիման վրա, որոնք, եթե հստակորեն նշված չէ այլ կերպ, գործում են ժամկետի ընթացքում:
- (2) Վարձատուն պարտավոր է Ընկերության բոլոր Բաժանորդներին համաձայն Կիրառվող օրենսդրության ծանուցել, որ սկսած Մեկնարկային օրվանից՝ Վարձակալը ունի Սպասարկման Տարածքում Ծառայություններ տրամադրելու և Բաժանորդներից Սակագների հիման վրա վճարների հավաքելու իրավունք:
- (3) Մինչև Բաժանորդների հետ պայմանագրերի կնքումը, Վարձակալը Մեկնարկային օրվանից Լիցենզիայով նախատեսված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)

ծառայությունները մատուցում է Սպասարկման տարածքի Բաժանորդներին ՀԾԿՀ-ի կողմից սահմանած սակագներով և պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան՝ համաձայն Կիրառվող օրենսդրության:

- (4) Վարձակալն իրավունք ունի մեծածախ ջրի մատակարարման և/կամ մեծածախ ջրահեռացման համար վճարներ գանձել՝ համաձայն ՀՀ ՀԾԿՀ-ի կողմից սահմանված սակագների:
- (5) Բաժանորդի համաձայնությամբ Վարձակալն իրավունք ունի Բաժանորդներից վճարներ գանձել այն օժանդակ ծառայությունների մատուցման դիմաց, որոնք չեն մտնում Բաժանորդի հետ կնքված պայմանագրով նախատեսված Ծառայությունների մեջ:

7.1.4 Օգտագործման բացառիկությունը

Բացառությամբ վթարների, անհաղթահարելի ուժի, Վարձակալի կողմից Պայմանագրի խախտման կամ Ժամկետի ավարտի դեպքում՝ Վարձատուն իրավունք չունի որևէ Երրորդ Կողմի հետ գործարք կնքել, համաձայն որի Վարձատուն միջոց կձեռնարկի կամ թույլ կտա, որ այնպիսի միջոցներ ձեռնարկվեն, որոնք կիրառվելու դեպքում բացասաբար կազդեն Պայմանագրով Վարձակալին տրված իրավունքների վրա:

7.2. Վարձակալի պարտականությունները

7.2.1 Ծառայությունները և Կատարողական չափանիշները

Վարձակալն ամբողջությամբ պատասխանատու է Սպասարկման տարածքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի (ներառյալ Գույքի) կառավարման, շահագործման, Պահպանման և Նորոգման համար, որի ընթացքում նա պարտավոր է.

- (1) մատուցել Հավելված 2-ով նախատեսված Ծառայությունները,
- (2) իրականացնել Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները պատշաճ ջանասիրությամբ, արդյունավետությամբ, խնայողությամբ և համաձայն՝
 - ա) Լավագույն արդյունաբերական պրակտիկայի և
 - բ) միջազգային մասնագիտական կազմակերպությունների կողմից ճանաչված ինժեներական, և գործունեության ստանդարտների և
 - գ) ծառայությունների ներկա մակարդակին և Գույքի իրավիճակին համապատասխան խնդիրների առաջնահերթությունների իրատեսական սահմանման և
 - դ) Կիրառվող օրենսդրության և
 - ե) կիրառելի Կատարողական չափանիշների,

- (3) օգտագործել համապատասխան տեխնոլոգիաներ, ապահով և արդյունավետ սարքավորումներ, մեքենաներ և մեթոդներ՝ հաշվի առնելով լուծման ենթակա խնդիրների բնույթն ու հրատապությունը,
- (4) շահագործել, վերանորոգել և պահպանել Գույքը,
- (5) ձեռք բերել, թարմացնել և երկարաձգել Ծառայությունների մատուցման և Գույքի օգտագործման համար անհրաժեշտ թույլտվությունները՝ անկախ թույլտվություն տրամադրելու Վարձատուի պարտականությունից,
- (6) ՄՖԿ վարկի պայմանների և ընթացակարգերի և Պայմանագրի համաձայն կատարել ԸՊ Հոդված 5-ով նախատեսված ՄՖԿ ներդրումներին առնչվող պարտականությունները,
- (7) Հավելված 2-ով նախատեսված կարգով իրականացնել և ավարտել Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը,
- (8) ԸՊ Հոդված 8-ով և Հավելված 1-ով սահմանված ժամկետներում կատարել Վարձակալության վճարի փոխանցումները,
- (9) ենթարկվել Կիրառվող օրենսդրության պահանջներին և Պայմանագրի պայմաններին ու դրույթներին,
- (10) իր ռիսկով և պատասխանատվությամբ Բաժանորդների հետ կնքված պայմանագրերի համաձայն՝ գրանցել Բաժանորդների ջրաչափերի ցուցմունքները, հաշվառել և գանձել մատուցված Ծառայությունների դիմաց վճարները,
- (11) համաձայն ԸՊ 7.12 կետի՝ Վարձատուին Ծառայությունների վերաբերյալ հաշվետվություններ և տեղեկատվություն ներկայացնել և ապահովել (ա) բոլոր տվյալների և տեղեկատվության (բ) Գույքի հասանելիությունը Վարձատուին, Պայմանագրով նախատեսված Վարձակալի գործունեության ընթացքի մոնիտորինգի համար, ինչպես նաև աջակցել Վարձատուին Գույքի ակտիվների գույքագրման աշխատանքներում,
- (12) համաձայն ԸՊ 7.13 կետի՝ ներկայացնել և թարմացնել Կատարողական երաշխիքը,
- (13) Ծառայությունների պատշաճ իրականացման և Գույքի կառավարման նպատակով համագործակցել Վարձատուի հետ,
- (14) կատարել աշխատակիցներին վերաբերող ԸՊ Հոդված 11-ի պահանջները,
- (15) ձեռնարկել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին առնչվող անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար, որ ժամկետի ավարտին Հաջորդող Օպերատորը հնարավորություն ունենա Ծառայությունները մատուցել և համապատասխանել Կատարողական չափանիշներին,
- (16) Վարձատուին տեղյակ պահել յուրաքանչյուր Պայմանագրային տարվա վերջի դրությամբ Գույքի վիճակի և դրա վատթարացման մասին (քանակական և արժեքային արտահայտությամբ), որպեսզի

համապատասխան փոփոխություններ մտցվեն Վարձատուի հաշվեկշռում և հետագայում հեշտացվի այդ Գույքի փոխարինումը կամ թարմացումը,

- (17) բավարարել արտադրողների երաշխիքային սպասարկման պայմանները,
- (18) Վարձատուին հայտնել այն էական պատահարների մասին, որոնք կարող են զգալիորեն բացասաբար անդրադառնալ Ծառայությունների մատուցման վրա կամ կհանգեցնեն կամ հնարավոր է հանգեցնեն անհաղթահարելի ուժի հանգամանքների առաջացման և այն գործողությունների մասին, որոնք Վարձակալը առաջարկում է իրականացնել Կատարողական չափանիշներին համապատասխան Ծառայությունների տրամադրման շարունակականությունն ապահովելու համար,
- (19) կատարել Գույքի և Հողի ապահովագրման պայմանագրերով ստանձնած պարտականությունները՝ համաձայն Պայմանագրի համապատասխան դրույթների,
- (20) պահպանել Ծառայություններին վերաբերող առողջապահական, անվտանգության և աշխատանքի պաշտպանության նորմերը,
- (21) Պայմանագրի դադարեցման դեպքում Վարձատուին առանց խոչընդոտների Գույքի և Հողի հետ հանձնման համար ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները, և
- (22) Վարձատուին ժամկետի ավարտին հետ հանձնել տեխնիկական բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև Կապիտալ աշխատանքների իրականացման կատարողական սխեմաները, ինչպես նաև Ծառայություններին և Գույքին վերաբերող նոր կառույցները:

7.2.2 Սպասարկման տարածքը

Վարձակալը Հավելված 2-ով նախատեսված Ծառայությունները պետք է մատուցի Հավելված 5-ում սահմանված աշխարհագրական տարածքների շրջանակներում:

7.2.3 Գույքը

Վարձակալը պետք է իրականացնի Հավելված 3-ով նախատեսված Գույքին առնչվող Ծառայությունները:

7.2.4 Հանրային ճանապարհների վրա տեղաբաշխված խողովակաշարերը և այլ ծառայություններ մատուցողների հետ աշխատանքների համակարգումը

- (1) Վարձակալը պետք է բավարարի Կիրառվող օրենսդրության այն պահանջները, որոնք վերաբերում են հանրային ճանապարհների վրա տեղաբաշխված խողովակաշարերին: Նոր խողովակաշարերի անցկացումը կամ վերականգնումը կիրականացվի համաձայն Կիրառվող օրենսդրության պահանջների:
- (2) Վարձակալը մինչև Գույքի և Հողի հետ կապված որևէ աշխատանքի նախաձեռնումը պարտավոր է խորհրդակցել բոլոր համապատասխան ծառայություն մատուցողների հետ և ձեռնարկել հանրությանը և Բաժանորդներին հասցվող անհարմարությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ միջոցները:

7.3. Ծառայությունները կարգավորող օրենքը

Վարձակալը Ծառայությունները պետք է մատուցի համաձայն Կիրառվող օրենսդրության և ապահովի, որ իր աշխատակիցները և Կապալառուները նույնպես Ծառայությունները մատուցեն Կիրառվող օրենսդրության համաձայն:

7.4. Շահերի բախում

7.4.1. Հակասող գործունեության արգելում

- (1) Վարձակալը, Հայտատուն, ղեկավար անձնակազմը, Կապալառուները, ինչպես նաև Վարձակալի և Կապալառուների աշխատակիցները, Վարձակալի, Հայտատուի և Կապալառուների հետ Փոխկապակցված անձինք իրավունք չունեն ուղղակի կամ անուղղակի կերպով զբաղվելու այնպիսի մասնագիտական կամ ձեռնարկատիրական գործունեությամբ, որը կհակասի Պայմանագրով կամ համապատասխան Կապալի կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված գործունեությանը:
- (2) Բացառությամբ ԸՊ 7.4.1 (3) կետով նախատեսված դեպքերի՝ Վարձակալն իրավունք չունի զբաղվել Ծառայությունների մատուցումից բացի այլ գործունեությամբ:
- (3) Վարձակալն իրավունք ունի Ընկերության հետ ֆակտորինգային գործունեության վերաբերյալ պայմանագրի և գործակալության պայմանագրի կնքման դեպքում դրա հիման վրա Բաժանորդներից հավաքագրել Բաժանորդների՝ Ընկերության նկատմամբ ունեցած դեբիտորական պարտքերը, ինչպես նաև այն իրավունքները, որոնք կտրվեն Վարձակալին ԸՊ 7.1.3 կետի համաձայն:

7.4.2. Գործունեության հատուկ տեսակների արգելումը

- (1) Բացառությամբ Հավելված 2-ով նախատեսված պարտականությունների, Վարձակալն իրավունք չունի մասնակցել այնպիսի քննարկումների կամ աշխատանքների, կամ այնպիսի ծառայություններ և խորհրդատվական

ծառայություններ մատուցել Վարձատուին, որոնք առնչվում են հետևյալ հարցերին.

(ա) Հաջորդող Օպերատորի ընտրության համար մրցութային փաստաթղթերի մշակմանը և քննարկմանը, կամ

(բ) Հաջորդող Օպերատորի ընտրության համար գնումների գործընթացի իրականացման նախապատրաստական աշխատանքներին,

ինչպես նաև պետք է թույլ չտա Հայտատուին և նրանց հետ Փոխկապակցված անձանց, եթե այդպիսիք կան, մասնակցելու վերը նշված հարցերի հետ կապված քննարկումներին, աշխատանքներին և ծառայությունների մատուցմանը:

(2) Բացառությամբ Հաջորդող Օպերատորի ընտրության համար կազմակերպվող մրցույթի իր հայտի նախապատրաստման, Վարձակալի, Հայտատուի կամ նրանց հետ Փոխկապակցված անձանց կողմից ԸՊ 7.4.2 կետի պահանջների խախտման, ի լրումն սույն Պայմանագրի խախտում համարվելուն, կարող է հանգեցնել նրան, որ Վարձակալը, Հայտատուն և նրանց հետ Փոխկապակցված անձինք զրկվեն Հաջորդող Օպերատորի ընտրության մրցույթին մասնակցության իրավունքից:

7.4.3. Շահագործման բոլոր կարևոր ցուցանիշների բացահայտումը պարբերական հաշվետվություններում

Սույն Պայմանագրի ավարտից հետո Վարձակալին կարող է թույլատրվել մասնակցել Հաջորդող Օպերատորի պայմանագրի համար հայտարարված մրցույթին՝ հետևյալ պայմանների բավարարման դեպքում.

(1) Վարձակալը պարտավոր է համագործակցել Վարձատուի հետ՝ մրցույթի բոլոր մասնակիցներին հավասար կերպով մրցույթի պայմաններին համապատասխանող տեխնիկական և ֆինանսական հայտերի պատրաստման համար անհրաժեշտ համապատասխան տեղեկատվություն և տվյալներ տրամադրելու նպատակով,

(2) Վարձակալը պարտավոր է տրամադրել համակարգի վիճակի, շարքից դուրս գալու, կորուստների, ներդրումների և նորոգումների պատմության, բաժանորդներին և առևտրային հարցերին վերաբերող տեղեկատվության, ֆինանսական հաշվետվությունների, ակտիվների, երաշխիքների, մնացորդային կյանքի տևողության, հիդրավլիկ մոդելների, պահպանման աշխատանքների կառավարման համակարգերի, անձնակազմի, ինչպես նաև առողջապահությանը և անվտանգությանը ներկայացվող պահանջների, աշխարհագրական տեղեկատվական համակարգի (GIS) և

այլ խնդիրների վերաբերյալ կարևոր տվյալներ պարունակող բոլոր հաշվետվությունները,

- (3) Հաջորդող Օպերատորի մրցույթին մասնակցելու հայտերի նախապատրաստման նպատակով Վարձակալը պարտավոր է չսահմանափակել մրցույթի մասնակիցների մուտքը դեպի Գույքը՝ դրանց շահագործման և Վարձակալի կողմից Ծառայությունների տրամադրումն ուսումնասիրելու նպատակով:

7.5. Գաղտնիության պահպանում

- (1) Վարձակալը, Հայտատուն, Կապալառուները, նրանց աշխատակիցներն ու նրանց հետ Փոխկապակցված անձիք, ինչպես նաև Վարձակալի իրավաբանական, ֆինանսական և հարկային խորհրդատուներն իրավունք չունեն առանց նախապես Վարձատուի համաձայնությունը ստանալու Ծառայությունների, Գույքի կամ Պայմանագրի վերաբերյալ որևէ սեփականության (պատկանելության) վերաբերյալ կամ գաղտնի տեղեկատվություն հրապարակել: Տեղեկատվության սեփականության (պատկանելության) վերաբերյալ կամ գաղտնի լինելը որոշվում է Կիրառվող օրենսդրության համաձայն:
- (2) Եթե գաղտնի տեղեկատվության բացահայտումը պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է որևէ պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից՝ որևէ թույլտվություն, լիազորություն, հաստատում կամ լիցենզիա տրամադրելու նպատակով կամ Կիրառվող օրենսդրության համաձայն կամ բխում է պետության կամ դատավարական գործողություններից, ապա Կողմերն ազատվում են սույն Պայմանագրով սահմանված գաղտնիության պահպանման պարտավորությունից՝ պայմանով, որ բացահայտող Կողմը հնարավորին չափ արագ կերպով մյուս Կողմին գրավոր ծանուցում կներկայացնի: Այս դեպքում նման բացահայտումը բացահայտող Կողմին չի ազատում հետագայում գաղտնի տեղեկատվության չբացահայտման պարտականություններից:

7.6. Վարձակալի պատասխանատվությունը և փոխհատուցման պարտականությունը

7.6.1. Հայտատուի և Վարձակալի պատասխանատվությունը

Բացառությամբ Վարձակալի դիտավորյալ արարքների կամ կոպիտ անզգուշության պատճառով տեղի ունեցած դեպքերի, երբ Հայտատուն և Վարձակալը կրում են պատասխանատվություն.

- (1) Հայտատուն և Վարձակալը Վարձատուի առջև պատասխանատվություն չեն կրում որևէ անուղղակի կորուստի կամ վնասի, օգտագործման կորուստի, արտադրության կորուստի, շահույթի կորուստի համար՝ բացառությամբ Վարձակալի կողմից Պայմանագրի համաձայն կամ որևէ

այլ կերպ ստացված ապահովագրական պոլիսի համաձայն փոխհատուցվող դեպքերի: Սույն պատասխանատվությունից ազատումը չի վերաբերում Պայմանագրի համաձայն Հայտատուի և Վարձակալի կողմից տուգանքների վճարման պատասխանատվությանը, և

- (2) Վարձատուի նկատմամբ Պայմանագրով նախատեսված կամ քաղաքացիաիրավական իրավախախտումների համար Հայտատուի և Վարձակալի ընդհանուր պատասխանատվությունը չպետք է գերազանցի ժամկետի համար Վարձակալության վճարի ողջ գումարը: Այս սահմանափակումը չի գործում ԸՊ 7.6.2 կետով նախատեսված դեպքերի համար, ինչպես նաև Կիրառվող օրենսդրությամբ կամ Պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների վճարման պարտականության նկատմամբ:

7.6.2. Հայտատուի և Վարձակալի փոխհատուցման պարտականությունը

Հայտատուն և Վարձակալը երաշխավորում են Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Վարձատուին, նրանց ընտրված և նշանակված պաշտոնյաներին և աշխատակիցներին, կապալառուներին վնասներից զերծ պահել և հատուցել տարբեր բնույթի հայցերի, վարչական գործողությունների և վարույթների, վնասահատուցման հայցերի, կորուստների, վնասների ծախսերը, ինչպես նաև փաստաբանի վարձը և որևէ անձի մահվան կամ վնասվածք ստանալու, կամ որևէ սեփականության կորուստի կամ վնասի հետ կապված ծախսերը, որոնք կծագեն Վարձակալի կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում՝

- ա) Վարձակալի կամ
- բ) Կապալառուների կամ
- գ) Վարձակալի կամ Կապալառուների աշխատակիցների, պաշտոնյաների կամ ներկայացուցիչների

անփութության կամ դիտավորյալ գործողությունների պատճառով:

7.7. Վարձատուի պատասխանատվությունը

- (1) Վարձակալի նկատմամբ Վարձատուի ամբողջ պատասխանատվությունը Պայմանագրով նախատեսված, Պայմանագրի խախտման կամ քաղաքացիաիրավական իրավախախտումների համար (ներառյալ անփութության դեպքերը, բայց ոչ կոպիտ անզգուշության ու դիտավորյալ իրավախախտումների դեպքերը) կամ այլ դեպքերում չպետք է գերազանցի ժամկետի համար սահմանված Վարձակալության վճարի գումարը:

- (2) Վարձատուն պատասխանատվություն չի կրում Վարձակալի առջև Պայմանագրով նախատեսված, Պայմանագրի խախտման կամ քաղաքացիաիրավական իրավախախտումների (ներառյալ անփութության դեպքերը, բայց ոչ կոպիտ անզգուշության ու դիտավորյալ Վարձակալության պայմանագիր

իրավախախտումների դեպքերը) դեպքում որևէ ուղղակի կամ որպես հետևանք առաջ եկած վնասի կամ կորուստի, օգտագործման կորուստի, արտադրության կորուստի, եկամտի կամ շահույթի կորուստի՝ բացառությամբ ԸՊ 3.8.3 կետով նախատեսված դեպքերի:

7.8. Վարձակալի կողմից իրականացվող ապահովագրությունը

- (1) Մինչև սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման սկիզբը և այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կարող են պահանջներ ծագել, Վարձակալը պարտավոր է իր հաշվին ապահովագրել և պահպանել այդ ապահովագրությունը և ապահովել, որպեսզի Կապալառուներն իրենց հաշվին ապահովագրվեն հետևյալ ռիսկերից և պահպանեն այդ ապահովագրությունը համաձայն ապահովագրական շուկայի կարողությունների.
- (ա) Երրորդ անձանց նկատմամբ ավտոմեքենաների պատասխանատվության ապահովագրում այն մեքենաների համար, որոնք Ծառայությունների իրականացման նպատակով շահագործվում են Վարձակալի կամ նրա ղեկավար անձնակազմի կամ որևէ Կապալառուի կամ նրա աշխատակիցների կողմից՝ նվազագույնը 756 000 000 (յոթ հարյուր հիսունվեց միլիոն) ՀԴ ընդհանուր գումարով,
 - (բ) Երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության ապահովագրում՝ առնվազն 1 512 000 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր տասներկու միլիոն) ՀԴ ընդհանուր գումարով,
 - (գ) Մասնագիտական պատասխանատվության ապահովագրում՝ առնվազն 1 512 000 000 (մեկ միլիարդ հինգ հարյուր տասներկու միլիոն) ՀԴ ընդհանուր գումարով,
 - (դ) Գործատուի պատասխանատվության և աշխատողի վարձատրության ապահովագրում Վարձակալի ղեկավար անձնակազմի համար՝ համաձայն Կիրառվող օրենսդրության համապատասխան դրույթների, ինչպես նաև ղեկավար անձնակազմի համար՝ կյանքի, առողջության, դժբախտ պատահարի դեմ, ճամփորդության և այլ ապահովագրություն՝ ըստ անհրաժեշտության, և
 - (ե) հետևյալի կորուստի և վնասների դեմ՝
 - (1) ամբողջությամբ կամ մասամբ ՄՖԿ միջոցների հաշվին գնված սարքավորումների,
 - (2) Ծառայությունների իրականացման ընթացքում օգտագործվող Վարձակալի սեփական գույքի,

(3) Ծառայությունների իրականացման ընթացքում Վարձակալի կողմից պատրաստված ցանկացած փաստաթղթի ապահովագրություն:

- (2) ԸՊ սույն՝ 7.8 կետով նախատեսված ապահովագրությունները պետք է կատարվեն Վարձատուի կողմից հաստատված ապահովագրի կողմից և պայմաններով, և պետք է ծածկի միայն Վարձակալի ռիսկի բաժինը:
- (3) Վարձատուի պահանջի դեպքում Վարձակալը պարտավոր է ներկայացնել Վարձատուի պահանջները բավարարող գրավոր ապացույց այն մասին, որ ԸՊ 7.8(1) կետով նախատեսված ապահովագրությունը կատարված է և ապահովագրության բոլոր ընթացիկ մուծումները կատարված են: Եթե Վարձատուի պահանջի դեպքում համապատասխան ապացույցները Վարձատուին չտրամադրվեն, Վարձատուն իրավունք ունի ապահովագրել և կատարել ապահովագրական վճարները, և Վարձակալը պարտավոր է անմիջապես հատուցել Վարձատուի կողմից վճարված գումարները:
- (4) Վարձակալը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Վարձատուին գրավոր տեղեկացնել այնպիսի դեպքերի ի հայտ գալու մասին, որոնք կարող են սույն՝ ԸՊ 7.8 կետով նախատեսված ապահովագրական պոլիսի ներքո պահանջներ առաջ բերել, ինչպես նաև հետագայում՝ այդ պահանջներին առնչվող խնդիրների վերաբերյալ: Սույն դրույթը պետք է նաև վերաբերի Կապալառուների պահանջներին:
- (5) Վարձակալը պարտավոր է վճարել սույն կետով նախատեսված ապահովագրական վկայագրերի ներքո առաջացող լրացուցիչ վճարները:

7.9. Պայմանագրի գրառումները, հաշվապահություն և աուդիտ

7.9.1. Պայմանագրի գրառումներ

- (1) Պայմանագրի թղթային կամ էլեկտրոնային կրիչների տեսքով գրառումները պետք է սահմանափակվեն.
 - (ա) ներդրումների հետ առնչվող տեղեկատվությամբ և
 - (բ) փաստաթղթերով, ծրագրերով, նախագծերով, տեխնիկական մասնագրերով և
 - (գ) Վարձակալի՝ Պայմանագրով նախատեսված գործունեության գնահատման համար անհրաժեշտ ձեռնարկներով, հաշվետվություններով, ուսումնասիրություններով, անվտանգության վերաբերյալ գրառումներով, աուդիտի գրառումներով, գույքագրման արդյունքներով, լաբորատոր թեստերի արդյունքներով, գնումների գործընթացների գրառումներով, բաժանորդների վերաբերյալ տեղեկատվությամբ:
- (2) Պայմանագրի ժամկետի ընթացքում Վարձակալը պարտավոր է Վարձատուին Պայմանագրերի Գրառումներին ծանոթանալու, ներառյալ

դրանք պատճենահանելու և պահելու անսահմանափակ հնարավորություն տալ:

7.9.2. Հաշվապահություն

Վարձակալը պարտավոր է վարել հաշվապահական հաշվառում, պատրաստել և ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ՝ համաձայն Կիրառվող օրենսդրության:

7.10. Կապալառուներ

- (1) Վարձակալն իրավունք չունի կնքել այնպիսի պայմանագիր կամ պայմանագրեր, համաձայն որոնց Ծառայությունների կամ դրանց մեծ մասի մատուցումը կատարվի Կապալառուի կողմից: Վարձակալն իրավունք ունի Ծառայությունների որոշ տարրեր իրականացնելու վերաբերյալ պայմանագրեր կնքել Կապալառուների հետ:
- (2) Վարձակալը պարտավոր է ապահովել, որ Պայմանագրով նախատեսված իր պարտականությունները որևէ Կապալառուի կողմից իրականացվելու դեպքում ներառվեն Կապալառուի հետ կնքված պայմանագրի դրույթներում՝ նույն պայմաններով:
- (3) Վարձակալի կողմից Կապալառուի հետ պայմանագրի կնքումը Վարձակալին չի ազատում Պայմանագրով նախատեսված պարտականություններից:

7.11. Հանդիպումներ

Վարձակալի Լիազոր Ներկայացուցիչը պարտավոր է կանոնավոր կերպով ամենամսյա հանդիպումներ ունենալ Վարձատուի Լիազոր ներկայացուցչի հետ Ծառայություններին, Գույքին, և Հավելված 7-ի համաձայն Վարձակալի կողմից ներկայացված հաշվետվություններին վերաբերող հարցերի քննարկման համար:

7.12. Հաշվետվություններ

7.12.1. Հաշվետվությունների նպատակը

Սույն Պայմանագրով հաշվետվությունների ներկայացման պահանջը երկու նպատակ է հետապնդում: Առաջին նպատակն է՝ ապահովել Ծառայությունների մատուցման փաստաթղթավորումը և նպաստել Վարձակալի գործունեության մոնիտորինգի իրականացմանը: Երկրորդ նպատակն է՝ ՄՖԿ-ի կողմից

պահանջվող հաշվետվություններ ներկայացնել: Կողմերը պարտավոր են համաձայնության գալ ներկայացման ենթակա հաշվետվությունների ձևի վերաբերյալ:

7.12.2. Հաշվետվություններ ներկայացնելու պահանջները

Եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով, Վարձակալը պարտավոր է Վարձատուին ներկայացնել Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների և փաստաթղթերի հինգ (5) անգլերեն և տաս (10) հայերեն օրինակ՝ Պայմանագրով նախատեսված ժամկետներում: Վարձատուն իրավունք ունի պահանջել անվճար ևս 10 օրինակ:

7.12.3. Պայմանագրի հաշվետվությունների ներկայացում

Վարձակալը պարտավոր է Վարձատուին հաշվետվություններ ներկայացնել համաձայն Հավելված 7-ի դրույթների:

7.13. Կատարողական երաշխիք

7.13.1. Տրամադրում

Որպես սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու նախապայման, Հայտատուն և Վարձակալը պարտավոր են Վարձատուին նրա համար ընդունելի և նրա կողմից հաստատված պայմաններով 3 024 000 000 (երեք միլիարդ քսանչորս միլիոն) ՀԴ գումարի Կատարողական երաշխիք տրամադրել՝ Վարձատուի համար ընդունելի բանկի կողմից: ԸՊ 7.13.1 կետում նշված նպատակների համար «ընդունելի բանկ» կհամարվի առաջին կարգի որևէ միջազգային բանկ, որի երկարաժամկետ պարտքն ըստ «Սթենդարտ ընդ Փուլըրս»-ի գնահատվում է առնվազն AA վարկանիշով, կամ ըստ «Մուդիս Ինվեստմենտ Սերվիսիզ»-ի՝ դրան համարժեք վարկանիշով: ԸՊ 7.13.2 կետի դրույթները նկատի ունենալով՝ Կատարողական երաշխիքի գործողության և Վարձատուի կողմից դրա կիրարկելիության ժամկետը պետք է կազմի առնվազն 36 ամիս՝ ժամկետի ավարտից հետո: Կատարողական երաշխիքը պետք է ներկայացվի Հավելված 9-ում ներկայացված ձևով:

7.13.2. Թարմացումը և համալրումը

(1) Վարձակալը պարտավոր է թարմացնել կամ նորով փոխարինել Կատարողական երաշխիքն այն դեպքերում և ժամանակ, երբ անհրաժեշտ կլինի ապահովել, որ Վարձատուն հնարավորություն ունենա իրականացնել ԸՊ 7.13 կետի պահանջներին համապատասխանող Կատարողական երաշխիքով նախատեսված իր իրավունքները: Եթե Կատարողական երաշխիքից գումարներ են գանձվել դրա գործողության ժամկետի ընթացքում, Կատարողական երաշխիքի գումարը դրա թարմացման պահին պետք է

համալրվի մինչև 3 024 000 000 (երեք միլիարդ քսանչորս միլիոն) ՀԴ գումարը:

(2) Եթե ու այնքանով, որ Վարձատուն չի օգտագործի Կատարողական երաշխիքը անընդմեջ երեք տարվա ժամանակահատվածում, ապա վարձակալը կարող է Կատարողական երաշխիքի արժեքը նվազեցնել մինչև վերը 7.13.1 կետում նշված չափի 50 (հիսուն) տոկոսը:

(3) Ժամկետի ավարտից մեկ տարի առաջ Վարձակալը պետք է ամբողջովին վերականգնի Կատարողական երաշխիքի արժեքը մինչև վերը 7.13.1 կետում նշված չափը:

7.13.3. Կատարողական երաշխիքի վերացումը

Առանց սահմանափակելու Վարձակալի Կատարողական երաշխիքի ԸՊ 7.13.2 կետի համաձայն թարմացման պարտականությունը՝ Վարձատուն իրավունք ունի Վարձակալի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների էական խախտման դեպքում Կատարողական երաշխիքի պայմաններին համապատասխան Կատարողական երաշխիքից գումարի գանձում կատարել: Վարձատուն իրավունք ունի նման պահանջ ներկայացնել, եթե դրանից առնվազն երեսուն (30) աշխատանքային օր առաջ Վարձակալին էական խախտման դեպքի մասին ծանուցում է ներկայացրել, և նշված երեսուն աշխատանքային օրվա ընթացքում Վարձակալը Վարձատուին բավարարող կերպով չի վերացրել Պայմանագրի խախտումը կամ միջոցներ չի ձեռնարկել այդ ուղղությամբ, որը սակայն հնարավոր էր վերացնել նշված 30-օրյա ժամանակահատվածի ընթացքում: Կատարողական երաշխիքից գանձվող գումարը պետք է բավարար լինի Վարձակալի կողմից Պայմանագրի էական խախտման հետևանքով Վարձատուի կրած վնասների փոխհատուցման համար: Կատարողական երաշխիքից վճարումը կատարվում է Վարձատուի կողմից նշված Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ բանկում բացված հաշվին, իսկ այդ փոխանցման հետ կապված Վարձատուի բոլոր ծախսերն ու վճարները՝ Վարձատուի պահանջի դեպքում Վարձակալը պետք է վճարի նույն բանկային հաշվին: Կատարողական երաշխիքից վճարումները պետք է կատարվեն նույնիսկ այն դեպքում, երբ Վարձակալը կարծում է, որ նման պահանջն անհիմն է, որի դեպքում ԸՊ 7.13.4 կետի դրույթները կգործեն:

7.13.4. Գանձված գումարների վերադարձման դեպքերը

Եթե Վարձատուն գանձում է կատարում Կատարողական երաշխիքի գումարից, իսկ Վարձակալը գտնում է, որ նման պահանջը սխալ է, Վարձակալն իրավունք ունի քննարկել պահանջի իրավաչափ լինելու հարցը վիճաբանությունների լուծման ԸՊ Հոդված 12-ով նախատեսված ընթացակարգերի համաձայն: Եթե Կողմերը համաձայնության են գալիս կամ վիճաբանությունների լուծման նշված ընթացակարգերի կիրառման արդյունքում որոշում է կայացվում, որ նման պահանջը սխալ էր, Վարձատուն պարտավոր է նշված համաձայնության գալուց կամ որոշումից հետո երեսուն (30) աշխատանքային օրվա ընթացքում հետ վճարել անտեղի պահանջով գանձված գումարը (ներառյալ դրա տոկոսավճարները՝ հաշվարկված Վարձատուին վճարելու օրվանից մինչև

Վարձակալին գումարի վերադարձման օրն ընկած ժամանակահատվածի համար և այն բանկի ավանդների տոկոսադրույքով, որտեղ պահվում է երաշխիքի գումարը):

7.14. Վթարներ

7.14.1. Վթարների Արձագանքման Ծրագիր

Վարձակալը պարտավոր է ուսումնասիրել Վթարներին արձագանքման գոյություն ունեցող ծրագիրը և անհրաժեշտության դեպքում լրացումներ և ուղղումներ կատարել այն ընթացակարգերի և կարգերի մեջ, որոնք ժամկետի և Անցումային աշխատանքների աջակցության ընթացքում պետք է Վարձակալի կողմից կիրառվեն Վթարների դեպքում: Այդ ընթացակարգերն ու կարգերը պետք է համապատասխանեն Կիրառվող օրենսդրության պահանջներին և համապատասխան այլ համաձայնություններին, ինչպես նաև Լավագույն արդյունաբերական պրակտիկայի նորմերին: Վարձակալը պարտավոր է Վթարների արձագանքման վերանայված ծրագիրը Վարձատուին ներկայացնել Պայմանագրի Ուժի մեջ մտնելու պահից հետո վաթսուն (60) աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո, անհրաժեշտության դեպքում, Լավագույն արդյունաբերական պրակտիկայի համաձայն լրացումներ կատարել դրանում:

7.14.2. Վթարների մասին տեղեկացում

Ժամկետի և Անցումային աշխատանքներին աջակցելու ցանկացած ժամանակահատվածի ընթացքում Վարձակալը պարտավոր է Վթարների դեպքում անհապաղ Վարձատուին տեղեկացնի տվյալ Վթարի մասին և անհապաղ իրականացնի Վթարներին Արձագանքման ծրագրով նախատեսված համապատասխան գործողություններ: Եթե Վարձակալը համոզված է, որ այդ ծրագիրը բավարար չէ տվյալ Վթարի հետևանքով ծագած հանգամանքներին արձագանքելու համար, նա պարտավոր է Վարձատուին անհապաղ տեղեկացնել այդ մասին, և Կողմերը պարտավոր են հանդիպել Վթարի հետևանքները վերացնելու կամ մեղմելու նպատակով ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ որոշում կայացնելու համար:

7.14.3. Ծախսերը

Եթե ԸՊ 7.14.4 և 7.14.5 կետերով այլ բան նախատեսված չէ, Վթարների դեպքում ԸՊ 7.14 կետով նախատեսված ընթացակարգերի համաձայն արձագանքման գործողությունների իրականացման ընթացքում կատարված կամ կատարման ենթակա ծախսերը կրում է Վարձակալը: Վարձակալը պարտավոր է Վարձատուին Վթարի հետևանքով առաջացած ծախսերի վերաբերյալ ֆինանսական հաշվետվություն ներկայացնել:

7.14.4. Վթարների առաջացման պատասխանատվությունը

- (1) Վթարների վերացումից հետո հնարավորինս արագ կերպով, սակայն ոչ ուշ քան Վարձակալի կողմից Վթարի մասին տեղեկացումից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում, Կողմերն ԸՊ 7.14.2 կետի համաձայն պարտավոր են հանդիպել Վթարի առաջացման պատճառների քննարկման նպատակով:
- (2) Եթե Կողմերը համաձայնության են գալիս, որ Վարձակալի տեղեկացման մեջ նկարագրված հանգամանքներն են Վթարների առաջացման պատճառն հանդիսացել և, որ Վթարի առաջացման պատճառը Լավագույն արդյունաբերական պրակտիկային կամ սույն Պայմանագրի դրույթներին Վարձակալի գործողությունների անհամապատասխանությունն է, ապա տվյալ Վթարին արձագանքելու բոլոր ծախսերը կրում է Վարձակալը:
- (3) Եթե Կողմերը համաձայնվում են, որ Վարձակալի տեղեկացման մեջ նկարագրված հանգամանքներն են Վթարների առաջացման պատճառը հանդիսացել և, որ Վթարի առաջացման պատճառը Երրորդ կողմի կամ Վարձատուի գործողություններն են, ապա Վթարի արձագանքման ծախսերը՝ յուրաքանչյուր Պայմանագրային տարում մինչև 150 000 000 (հարյուր հիսուն միլիոն) ՀԴ, պետք է կրի Վարձակալը:
- (4) Մեկ Պայմանագրային տարվա ընթացքում 150 000 000 (հարյուր հիսուն միլիոն) ՀԴ գումարը գերազանցող ծախսերը պետք է Կողմերի միջև բանակցությունների միջոցով բաշխվեն Վարձակալի և Վարձատուի միջև:

7.14.5. Վեճեր

ԸՊ 7.14.4. կետում նկարագրված դեպքերում ծագող ցանկացած վեճ ենթակա է կարգավորման ԸՊ Հոդված 12-ով սահմանված կարգով, որը կորոշի, թե արդյոք տեղի է ունեցել Վթար, թե ոչ, և թե արդյոք Վթարը հետևանք է Վարձակալի գործողությունների՝ Լավագույն արդյունաբերական պրակտիկային և/կամ Պայմանագրի դրույթներին անհամապատասխանության:

7.14.6. Խմելու ջրի որակի ստանդարտներին անհամապատասխանությունը

- 1) Եթե Վարձակալը տեղյակ է կամ տեղեկանում է, կամ պարտավոր է տեղյակ լինել կամ Վարձակալի կողմից վերցված նմուշի որակը չի համապատասխանում Հավելված 6-ում (ժամանակ առ ժամանակ կատարվող փոփոխություններով ու լրացումներով) բերված ջրի որակի ստանդարտներին և այդ անհամապատասխանությունն անմիջական վտանգ է սպառնում կամ կարող է վտանգ սպառնալ հանրության առողջությանը, Վարձակալը պարտավոր է անհապաղ իրականացնել հետևյալ միջոցառումները.

- ա) Նվազագույն ժամկետում տեղեկացնել Վարձատուին, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, բժշկական օգնություն ցուցաբերող հիմնարկություններին, լրատվամիջոցներին (և քաղաքականության համաձայնեցումից հետո գործնականում հնարավոր չափով) և ուղղակիորեն տուժած Բաժանորդներին (կամ էլ այն Բաժանորդներին, որոնք հնարավոր է, որ տուժեն) ջրի որակի սահմանված ստանդարտներին անհամապատասխանության մասին, և Բաժանորդների առողջությունը պահպանելու նպատակով ձեռնարկել բոլոր անհրաժեշտ գործողությունները,
 - բ) աշխատանքներն իրականացնել որոշակի ժամանակահատվածի ընթացքում,
 - գ) անհրաժեշտության դեպքում օգտագործել ջրի լրացուցիչ աղբյուրները,
 - դ) գտնել կամ ընդունել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված որևէ տեխնիկական լուծում, որը թույլ կտա հնարավոր սեղմ ժամկետում վերականգնել ջրի որակը:
- 2) Սույն ԸՊ 7.14.6 կետը չի վերաբերում Պայմանագրի այն դրույթներին, որոնց համաձայն Վարձակալը պարտավոր է ապահովել որոշակի Կատարողական չափանիշներ:

7.15. Հայտատուի պարտավորություններ

Եթե Վարձակալն ի վիճակի չէ կամ չի ցանկանում կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորություններից որևէ մեկը, Հայտատուն պետք է ապահովի, որպեսզի Վարձակալը կատարի իր պարտավորությունները՝ համաձայն Պայմանագրի:

7.16. Վարձակալի ֆինանսական սահմանափակումներ

- (1) Հայտատուն պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի, որպեսզի ապահովի, որ Վարձակալը բավականաչափ կապիտալացված է և սույն Պայմանագրով նախատեսված իր պարտականությունների իրականացման համար համապատասխան ֆինանսական միջոցներ ունի:
- (2) Վարձակալը որևէ քայլ չի ձեռնարկի և Հայտատուն պատճառ չի հանդիսանա, որ Վարձակալը որևէ վարկ տրամադրի կամ կանխավճար իրականացնի կամ որևէ կերպով պատասխանատվություն չի ստանձնի Հայտատուի կամ նրա հետ Փոխկապակցված անձանց պարտքերի համար՝ առանց Վարձատուից նախապես ստացված գրավոր համաձայնության, որը չի կարող անհիմն կերպով մերժվել:
- (3) Ի լրումն օրենսդրության պահանջների և դիվիդենդների բաշխման կամ վճարման օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներին՝ իր զուտ շահույթի գումարը հաշվարկելիս Վարձակալը իրավունք չունի իր որևէ կրեդիտորական պարտքերը և իր որևէ այլ պարտավորությունը

դիտարկի որպես եկամուտ, եթե նույնիսկ դրա վճարման ժամկետից անցել է 60 օրից ավելի:

- (4) Վարձակալը պարտավոր է իր միջոցները ավանդագրել Հայաստանի ամենախոշոր կապիտալ ունեցող հինգ բանկերից մեկում կամ մի քանիսում և իր գործունեությունն իրականացնել այդ բանկերից մեկի կամ մի քանիսի միջոցով:

Հոդված 8. Վարձակալության վճար

8.1 Վճարվելիք գումարը

Վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր կիսամյակ Վարձատուին վճարել Վարձակալության վճարը՝ համաձայն Հավելված 1-ով (Հատուկ Պայմաններ) նախատեսված պայմանների:

8.2 Վճարումների կարգը

Վարձակալը պարտավոր է կիսամյակային Վարձակալության վճարը փոխանցել Վարձատուի կողմից նշված բանկային հաշվին: Առաջին վճարումը պետք է կատարվի Ուժի մեջ մտնելու օրվանից 15 օրվա ընթացքում, իսկ հաջորդ վճարները՝ համաձայն Հավելված 1-ի 1.4 կետի: Վճարի ուշացման դեպքում ուշացած օրերի համար վճարման ենթակա գումարի նկատմամբ հաշվարկվում է տոկոսագումար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված կարգով՝ վճարման օրվա և փաստացի վճարման օրվա միջև ընկած ժամանակահատվածի համար:

Հոդված 9. Սակագներ և շահույթ

9.1. Սակագների սահմանում

(1) Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայությունների դիմաց Բաժանորդներից գանձվող Սակագները Վարձակալի կողմից ներկայացված հայտի հիման վրա հաստատվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (<< ՀԾԿՀ) կողմից Լիցենզիայի պայմաններին և դրույթներին համապատասխան:

(2) Եթե ՀՀ ՀԾԿՀ-ն չհաստատի հայտատուին ուղարկված մրցակցային փաթեթում ներառված Լիցենզիայով սահմանված պայմաններով ճշգրտվող բազիսային սակագինը կամ փոխվի սակագնի հաշվարկի մեթոդոլոգիան, որի արդյունքում Վարձակալի համար չի հաստատվի Լիցենզիայի պայմանների համաձայն ճշգրտված սակագինը, ապա Վարձատուն կփոխհատուցի Վարձակալին սակագների միջև եղած տարբերությունը, որը չկատարելը կդիտվի որպես Վարձատուի կողմից Պայմանագրի վաղաժամկետ չպատճառաբանված դադարեցում՝ ըստ ԸՊ 3.8.3 հոդվածի, որի դեպքում Վարձակալը փոխհատուցում ստանալու իրավունք ունի:

9.2. Սակագնի առանձնահատուկ ճշգրտումներ

Այն դեպքում, երբ որևէ մի տարում Լիցենզիայի Հավելված 3-ով նախատեսված գործոնների հիման վրա իրականացված տարեկան ճշգրտումը բերում է սակագնի ավելի քան 30%-ով բարձրացման կամ նվազեցման, Կողմերը համաձայնում են ժամանակավորապես դադարեցնել պարբերական տարեկան ճշգրտումները և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ վերաբանակցել սակագների ճշգրտման կարգը՝ համաձայն նոր հանգամանքների, որոնք սակագնի առանձնահատուկ ճշգրտման պատճառ են հանդիսացել: Տարեկան ավտոմատ ճշգրտումների ժամանակավոր դադարեցման հետևանքով առաջացող եկամտի կորուստները պետք է հաշվի առնվեն ապագա տարիների սակագնի ճշգրտման նպատակներով համաձայն Լիցենզիայի Հավելված 3-ով սահմանված կարգի:

9.3. Գերշահույթ

Եթե Վարձակալի կողմից տրամադրված տարեկան աուդիտի ենթարկված չկոնսոլիդացված ֆինանսական հաշվետվությունների համաձայն նախորդ տարվա հարկումից հետո շահույթը՝ հանած նախորդ տարիներին կրած վնասները գերազանցում է տվյալ տարվա շրջանառության 10%-ը, ապա Վարձակալը պետք է հաջորդ տարվա ընթացքում այդ գերշահույթի (շրջանառության 10%-ը գերազանցող գումարի) 50%-ը փոխանցի Վարձատուին՝ Վարձատուի կողմից Վարձակալին հայտնված բանկային հաշվին: Այս

պարտավորությունը գործում է ի լրումն սույն Պայմանագրով նախատեսված Վարձակալի մյուս պարտավորությունների:

Հոդված 10. Կատարողական չափանիշները չապահովելու համար նախատեսված տուժանք

10.1 Տուժանքի կիրառում

Բացառությամբ ԸՊ 3.7 կետի սահմանված հանգամանքների և այն Վթարների, որոնք տեղի են ունեցել ոչ Վարձակալի մեղքով՝ եթե Վարձակալը չի ապահովում Հավելված 6-ով նախատեսված Կատարողական չափանիշները կամ ժամանակին չի ներկայացնում Հավելված 7-ում թվարկված հաշվետվությունները, ապա նրա նկատմամբ կիրառվում են Հավելված 6-ում նախատեսված տուժանքները: Սույն կետի և Հավելված 6-ի դրույթներն որևէ կերպ չեն սահմանափակում Վարձակալի՝ Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված տուժանքների պատասխանատվությունը, ինչպես նաև առանց սահմանափակելու ԸՊ 7.6.1 կետի պահանջները՝ բացառապես Հայտատուն և Վարձակալը Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունը կրում են ամբողջ ծավալով և համապարտ:

10.2 Կիրառվող Օրենսդրության համաձայն տուժանքի կիրառման ազդեցությունը

Ըստ ԸՊ 10.3 կետի դրույթների՝ Վարձակալի կողմից Վարձատուին վճարվելիք տուժանքի գումարն ենթակա է նվազեցման այն գումարի չափով, որը Հայտատուն և Վարձակալը պետք է վճարեն Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված տուժանքի ձևով այն դեպքերում և ծավալով, երբ Կիրառվող օրենսդրությամբ նախատեսված տուժանքը վերաբերում է Վարձակալի Պայմանագրով նախատեսված պարտականություններին:

10.3 Բաժանորդներին տուգանքների վճարում

ԸՊ 10.2 կետը չի վերաբերում Բաժանորդների հետ պայմանագրի համաձայն Վարձակալի կողմից Բաժանորդին վճարման ենթակա գումարներին:

10.4 Բացառիկ միջոց

(1) Բացառությամբ Պայմանագիրը լուծելու իրավունքի և ԸՊ 7.6.2 կետի համաձայն փոխհատուցման ստացման Վարձատուի իրավունքի՝ ԸՊ հոդված 10-ով նախատեսված տուժանքների վճարումը Վարձակալի կողմից Կատարողական չափանիշներին համապատասխան

Ծառայությունների մատուցում չապահովելու դիմաց Վարձատուի կողմից փոխհատուցում ստանալու միակ միջոցներն են:

- (2) Տուժանքի վճարումը չի ազատում Պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումից:

Հոդված 11. Տեղական աշխատակազմ

11.1. Ընդհանուր դրույթներ

- (1) Տեղական աշխատակազմի հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:
- (2) Վարձակալն իր իսկ հայեցողությամբ, համաձայն Կիրառվող օրենսդրության, իրավունք ունի ցանկացած աշխատակցի աշխատանքից ազատել կամ նրա հետ շարունակել աշխատանքային պայմանագիրը Վարձակալի ու աշխատակցի միջև համաձայնեցված պայմաններով:
- (3) Վարձակալը պարտավոր է իր հաշվին ապահովել Կիրառվող օրենսդրության համաձայն աշխատակիցների համար պահանջվող լիցենզիաների ստացումն ու պահպանումը, ինչպես նաև խմելու ջրի հետ անմիջականորեն առնչվող աշխատակիցների առողջությանը վերաբերող փաստաթղթերը:

11.2. Վերապատրաստում

Վարձակալը պարտավոր է ապահովել իր աշխատակիցների մասնագիտական վերապատրաստումը՝ համաձայն Լավագույն արդյունաբերական պրակտիկայի:

Հողված 12. Վեճերի կարգավորում

12.1. Բարյացակամություն

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հարգել մյուս Կողմի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և իրականացնել բոլոր միջոցառումները Պայմանագրի նպատակներն իրագործելու համար:

12.2. Պայմանագրի գործողությունը

Կողմերն ընդունում են ժամկետի ընթացքում բոլոր հնարավոր պատահականությունների կանխատեսման անհնարինությունը և հաստատում են Պայմանագրի պահանջները բարեխղճորեն և առանց որևէ Կողմի շահերը վնասելու կատարելու իրենց մտադրությունը: Եթե ժամկետի ընթացքում Կողմերից որևէ մեկի կարծիքով Պայմանագրի պահանջները կատարվում են ոչ բարեխղճորեն, ապա Կողմերը պարտավորվում են բոլոր միջոցները ձեռնարկել տվյալ անարդարության պատճառը կամ պատճառները վերացնելու համար, այդուհանդերձ սույն ԸՊ 12.2 կետով նախատեսված գործողությունների շուրջ համաձայնության չգալը կարող է հանգեցնել դատական կարգով լուծման ենթակա վեճի՝ համաձայն ԸՊ 12.4 կետի:

12.3. Միջնորդ

Կողմերին Պայմանագրի դրույթների խախտման վերաբերյալ վեճը բարեկամաբար լուծելու իրենց մտադրությունն իրագործելու հարցում աջակցելու նպատակով Կողմերը պարտավոր են հնարավորինս արագ կերպով որպես անկախ Միջնորդ ընտրեն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում աշխատանքի զգալի փորձ ունեցող և անկախ Երրորդ անձի, որը Կողմերին կաջակցի վեճերը բարեկամաբար բանակցելու հարցում: Միջնորդն իրավունք ունի Կողմերի ցանկությամբ կամ Միջնորդի առաջարկությամբ ժամանակ առ ժամանակ առանձին-առանձին կամ համատեղ խորհրդակցել Կողմերի հետ: Միջնորդի կողմից արված առաջարկությունները պարտադիր չեն ոչ մի Կողմի համար: Կողմերը համաձայնում են, որ եթե բարեկամաբար լուծման մտադրությամբ բանակցությունները վեճի լուծման չեն հանգեցնում, ինչպես նախատեսված է սույն կետով, Միջնորդի դիտողությունները կամ առաջարկությունները կարող են չկիրառվել Կողմերից որևէ մեկի կողմից հետագա դատական վարույթների կամ արբիտրաժի քննության ընթացքում, և Կողմերը պարտավոր են դրանք գաղտնի պահել: Միջնորդի ծառայությունների դիմաց ծախսերը հավասարապես բաշխվում են Վարձատուի և Վարձակալի միջև:

12.4. Արբիտրաժի իրավունք

Սույն Պայմանագրի մեկնաբանմանը, կատարողականությանը կամ խախտմանն առնչվող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ հայցերը (ներառյալ վերջինիս խախտումը, դադարեցումը կամ վավերական չլինելը), որոնք բարեկամաբար չեն լուծվում (30) օրվա ընթացքում.

(ա) մեկ Կողմի՝ մյուս Կողմից հարցը բարեկամաբար լուծելու խնդրանքի ստացման օրվանից հետո կամ

(բ) այն պահից սկսած, երբ ԸՊ 12.3 կետի համաձայն ընտրված Միջնորդը գրավոր տեղեկացրել է Կողմերին, որ Միջնորդի կարծիքով վեճը հնարավոր չէ բարեկամաբար լուծել խելամիտ ժամանակահատվածի ընթացքում,

կախված այն հանգամանքից, թե վերոնշյալներից որն է վերջինը տեղի ունեցել,

Կողմերից յուրաքանչյուրի պահանջի դեպքում դրանք կարող են ներկայացվել Արբիտրաժ՝ ԸՊ 12.5, 12.6 և 12.7 կետերի համաձայն: Սույն ԸՊ 12.4 կետում ներառված որևէ դրույթ նպատակ չունի որևէ կերպ փոփոխել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան կարգավորող այն մարմինների լիազորությունները, իրավասությունները կամ ընթացակարգերը, որոնք Կիրառվող օրենսդրության համաձայն Հայտատուի կամ Վարձակալի գործունեության նկատմամբ որևէ լիազորություններ ունեն, կամ էլ որևէ կերպ ազդել դրանց վրա: Որևէ կասկածից խուսափելու նպատակով՝ արբիտրաժի իրավունքը չի կիրառվում Պայմանագրից բացի որևէ այլ համաձայնագրի նկատմամբ:

12.5. Արբիտրաժի կարգավորումը

Սույն Պայմանագրի մեկնաբանմանը, կատարողականությանը կամ խախտմանն առնչվող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ հայցերը (ներառյալ խախտումը, դադարեցումը կամ վավերական չլինելը) պետք է ի վերջո կարգավորվեն Հաշտեցման կանոնների կամ Փարիզի Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) (Արբիտրաժի կանոններ) համաձայն՝ այդ Արբիտրաժային կանոնների համաձայն նշանակված երեք (երեք) արբիտրերից կազմված արբիտրաժային տրիբունալի կողմից:

Եթե կողմերը համաձայնության են եկել, որ վեճը վերաբերվում է տեխնիկական խնդրի, նրանք կարող են համաձայնության գալ միանձնյա արբիտր նշանակելու մասին: Արբիտրաժային վարույթը նախաձեռնած Կողմի կողմից մյուս կողմին ուղարկված այդպիսի արբիտրի անունի վերաբերյալ մյուս Կողմին ուղղված առաջարկության ստացումից հետո 30 օրվա ընթացքում արբիտրի անձի վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ցանկացած Կողմ

կարող է դիմել Առևտրի Միջազգային Պալատ (ԱՄՊ) թվով հինգից ոչ պակաս թեկնածուների ցուցակի համար, ու այդ ցուցակի ստացումից հետո հերթով կջնջեն այդ ցուցակից անուններ և վերջին մնացած թեկնածուն կլինի վեճը քննող միանձնայա արբիտրը: Եթե վերջին մնացած թեկնածուն չի որոշվում ցուցակի օրվանից 60 օրվա ընթացքում, ԱՄՊ-ն ցանկացած Կողմի պահանջով կնշանակի այդ ցուցակից կամ այլ կերպ միանձնյա արբիտրի այդ վեճի առարկայի համար:

12.6. Արբիտրաժի կանոնները

Եթե սույնով այլ բան նախատեսված չէ, դատավարությունն իրականացվում է Արբիտրաժի կանոնների համաձայն:

12.7. Գործի քննման վայրը, լեզուն

Սույն Պայմանագրի վերաբերյալ դատավարության կապակցությամբ.

- (1) դատավարությունը պետք է ընթանա Իտալիայի Հռոմ քաղաքում, եթե Կողմերն այլ կերպ չեն համաձայնվել,
- (2) դատավարության դեպքում պաշտոնական լեզուն անգլերենն է և
- (3) պետք է կիրառվի Կիրառվող օրենսդրությունը:

Հողված 13. Այլ դրույթներ

13.1. Համապարփակ համաձայնագիր

Սույն Պայմանագիրը Վարձատուի և Վարձակալի միջև համապարփակ համաձայնություն է և գերակայում է բոլոր այն գրավոր և բանավոր պայմանավորվածությունների նկատմամբ, որոնք տրվել են Վարձատուի կամ Վարձակալի կողմից մինչև Պայմանագրի ստորագրումը տեղի ունեցած բանակցությունների և նամակագրության ընթացքում:

13.2. Փոփոխություններ

- (1) Սույն Պայմանագրի պայմանների և դրույթների ցանկացած փոփոխություն, ներառյալ Ծառայությունների շրջանակի փոփոխություն, կատարվում է միայն Կողմերի միջև գրավոր համաձայնության տեսքով: Կողմերից յուրաքանչյուրի կողմից ներկայացված փոփոխությունների առաջարկներին մյուս Կողմը պարտավոր է գրավոր պատասխան տալ երեսուն (30) օրվա ընթացքում:
- (2) Որևէ փոփոխություն կամ այլ ձևափոխում ուժի մեջ է մտնում միայն այն դեպքում, եթե այն կատարվել է գրավոր, նրանում նշվել է կատարման ամսաթիվը և հստակորեն հղում է կատարվել սույն Պայմանագրին, ստորագրվել է Կիրառվող Օրենսդրության համաձայն նման փոփոխություն կատարելու լիազորություն ստացած Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

13.3. Վարձակալի անկախ լինելը

- (1) Վարձակալն անկախ է և հանդիսանում է Պայմանագիրն իրականացնող միակ իրավաբանական անձը: Պայմանագիրը չի նախատեսում Կողմերի միջև որևէ գործակալության, գործընկերային հարաբերությունների, համատեղ ձեռնարկության կամ այլ համատեղ գործունեություն ենթադրող կառույցի ստեղծում:
- (2) Սույն Պայմանագրի համաձայն՝ դրա իրականացման եղանակի համար պատասխանատու է միայն Վարձակալը: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար Վարձակալի կողմից ներգրավված աշխատողների, ներկայացուցիչների կամ Կապալառուների գործողությունները պետք է վերահսկվեն Վարձակալի կողմից: Սույն Պայմանագրում, Վարձակալի կողմից կնքված կամ նրա կողմից շնորհված որևէ կապալի պայմանագրում ներառված որևէ դրույթ չի կարող մեկնաբանվել որպես Վարձակալի ներկայացուցիչների կամ Կապա-
Վարձակալության պայմանագիր

լառուների և Վարձատուի միջև պայմանագրային հարաբերություններ ստեղծող դրույթ:

13.4. Պարտականությունների կատարումը

- 1) Համաձայն ԸՊ 13.4(2) կետի՝ որևէ Կողմի կողմից Պայմանագրի պայմանների և պահանջների կատարման ընթացքում որևէ թեթևացման, ձեռնպահ մնալու, ժամկետի հետաձգման կամ մյուս Կողմից ժամանակի տրամադրման դեպքերը չպետք է ազդեն կամ սահմանափակեն այդ Կողմի Պայմանագրով նախատեսված իրավունքները, և որևէ հրաժարում չպետք է Պայմանագրի հաջորդ կամ կրկնվող խախտման դեպքում դիտվի որպես այդ Կողմի՝ իր իրավունքներից հրաժարում:
- 2) Իրավական ուժ ունենալու համար Պայմանագրով նախատեսված իրավունքից հրաժարվելը պետք է իրականացվի հետևյալ կերպ.
 - (ա) գրավոր կերպով և
 - (բ) ունենա ամսաթիվ և ստորագրված լինի համապատասխան իրավասություն ունեցող Կողմի լիազոր ներկայացուցչի կողմից և
 - (գ) կոնկրետ նշվի այն իրավունքը, լիազորությունը կամ միջոցը, ինչպես նաև այն ծավալը, որից հրաժարվում է և
 - (դ) այն դեպքերում, երբ տրվում է Վարձատուի կողմից, այն պետք է հաստատվի Կիրառվող օրենսդրության համաձայն իրավունքներից, լիազորություններից կամ միջոցներից հրաժարվելու համար համապատասխան իրավասություն ունեցող անձի կամ մարմնի կողմից:

13.5. Պայմանագրի մասնակի խախտում

Եթե Պայմանագրի որևէ պայման կամ մաս կամ դրույթ ճանաչվում է անվավեր, ապա այդ անվավերությունը չի վերաբերում Պայմանագրի մյուս պայմաններին կամ մասերին կամ դրույթներին, եթե և այն չափով, որ Պայմանագիրը կարող է խելամտորեն գործել առանց անվավեր ճանաչված դրույթների և պայմանների:

13.6. Ծանուցումներ

- (1) Սույն Պայմանագրի համաձայն կամ դրա ուժով կատարվելիք ցանկացած ծանուցում, խնդրանք կամ համաձայնություն պետք է լինի գրավոր: Նման ծանուցումները, խնդրանքները կամ համաձայնությունը համարվում են կատարված, եթե դրանք անձամբ հանձնվել են Կողմի լիազորված ներկայացուցչին, կամ ուղարկվել են գործակալի միջոցով այն հասցեով, որը նշված է Հավելված 1-ում:

- (2) Ծանուցումներն ուժի մեջ են մտնում ինչպես անձնապես ներկայացման, այնպես էլ գործակալի միջոցով առաքման և ստացող Կողմի գրավոր ստացական տրամադրելու դեպքում:
- (3) Կողմերից յուրաքանչյուրը կարող է փոխել իր փոստային հասցեն՝ հակառակ Կողմին ԸՊ 13.6 կետով նախատեսված փոփոխության մասին ծանուցելով:
- (4) ԸՊ 13.6 կետի համաձայն ծանուցում ներկայացնելու նպատակով Վարձակալի հասցեն պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում:

13.7. Լիազոր ներկայացուցիչներ

- (1) Նախքան սույն Պայմանագրի Մեկնարկային օրը Վարձակալը և Վարձատուն պարտավոր են նշանակել անհատների, որոնք գործելու են որպես համապատասխան պայմանագրի միջնորդներ և համակարգողներ (յուրաքանչյուրը՝ մեկական Լիազոր ներկայացուցիչ) և մեկ պաշտոնական փոխարինող՝ հետևյալ ձևով.

(ա) Լիազոր Ներկայացուցիչ և

(բ) Լիազոր Ներկայացուցչի պաշտոնական փոխարինող, որը գործելու է Լիազոր Ներկայացուցչի փոխարեն այն դեպքերում, երբ վերջինս տեղում չէ կամ ի վիճակի չէ կատարել իր պարտականությունները,

- (2) Բացառությամբ Լիազոր Ներկայացուցչի լիազորությունը սահմանափակող կամ այդ լիազորությունն որևէ այլ անձին կամ մարմնին վերապահող սույն Պայմանագրով նախատեսված դեպքերի՝ Լիազոր Ներկայացուցիչները կամ նրանց փոխարինողները կարող են իրականացնել Պայմանագրով թույլատրվող կամ պահանջվող որևէ գործողություն և կնքել Պայմանագրով թույլատրվող կամ պահանջվող որևէ փաստաթուղթ:
- (3) Լիազոր Ներկայացուցիչները կամ նրանց Փոխարինողները պետք է մյուս Կողմի համար հասանելի լինեն աշխատանքային ժամերի ընթացքում:
- (4) Վարձակալը չի կարող փոխել իր Լիազոր Ներկայացուցչին կամ վերջինիս Փոխարինողին առանց Վարձատուի գրավոր համաձայնության, որը չպետք է մերժվի առանց որևէ լուրջ պատճառի:
- (5) Սույն Պայմանագրի համաձայն Լիազոր Ներկայացուցիչներ և նրանց փոխարինողներ կհանդիսանան այն անձինք, որոնց անունները նշված են որպես այդպիսիք Հավելված 1-ի 1.3 կետում:
- (6) Լիազոր Ներկայացուցչի կողմից սույն Պայմանագրի պայմանների համաձայն ձեռնարկված միջոցառումները, ընդունված որոշումները և

1) Պայմանագրային առաջին տարում Վարձակալը պարտավոր է Բազիսային տարվա տվյալների հաշվետվության հետ միասին պատրաստել և տրամադրել Սպասարկման տարածքում բոլոր առանձնացված մատակարարման տարածքների (գոտիների) ցուցակը: Այս ցուցակը պետք է ուսումնասիրվի և հաստատվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից Բազիսային տարվա տվյալների հաշվետվության աուդիտի շրջանակներում՝ համաձայն ԸՊ կետ 6.8-ի:

2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում, հիմնվելով ճնշման լոգերների չափումների վրա, Վարձակալը պետք է մշակի և կիրառի ճնշման մոնիտորինգի պլան և ռազմավարություն: Լոգերները պետք է ներառեն Վարձակալի ամբողջ սպասարկման տարածքը և պետք է հուսալիորեն և ճշգրիտ չափեն ճնշումը սպասարկման ողջ տարածքում: Այս պլանը և ռազմավարությունը, որոնց արդյունքում ի հայտ կգան լոգերների քանակը, գտնվելու վայրը, տեսակը, չափումների հաճախականությունը և տվյալների կառավարումը, պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

3) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում, յուրաքանչյուր տեղադրված ճնշման լոգերի համար, Վարձակալը պետք է կախվածություն հաստատի չափված ճնշման և մատակարարված Բաժանորդների թվի միջև ($C_q - p_q$), որը պետք է ստուգվի և արժանանա Անկախ Տեխնիկական Աուդիտորի հավանությանը:

4) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է համակարգչային ծրագրով նախապատրաստի հիդրավլիկ մոդելներ սպասարկման տարածքի համար, որոնք համատեղելի են առկա ջրամատակարարման ցանցի GIS -ի հետ: Հիդրավլիկ մոդելները պետք է ներառեն Վարձակալի սպասարկման տարածքի բոլոր համապատասխան ակտիվները, և պետք է հիմնված լինեն GIS -ում մուտքագրված գրառումների վրա:

5) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է նախապատրաստի ջրամատակարարման ցանցի բոլոր համապատասխան ակտիվների աշխարհագրական GIS տվյալների բազան:

ՀԿՑ QS1՝ Զրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում

Սահմանումներ՝

Բաժանորդների քանակ (C) - առանձնացված մատակարարման տարածքների Բաժանորդների քանակը պետք է հաշվարկված լինի ըստ Բաժանորդների տվյալների բազայի: Եթե Բաժանորդների տվյալների բազայի տվյալները համարվեն ոչ ճշգրիտ և /կամ անհուսալի, ապա Վարձակալը պետք է հաշվարկի և հիմնավորի դրանք լավագույն հնարավոր տարբերակներով:

Չափումների միջև ընդմիջումները – Ճնշման լոգերներով չափումների միջև ընդմիջումները պետք է լինեն մեկ ժամից ոչ ավելի:

Բացառություններ՝ Երևան քաղաքում Պայմանագրային մեկ (1) տարվա ընթացքում յուրաքանչյուր լոգերի կողմից չչափված կամ բացակայող չափումների առավելագույնը 5%-ը և այլ քաղաքային ու գյուղական տարածքներում Պայմանագրային մեկ (1) տարվա ընթացքում յուրաքանչյուր լոգերի կողմից չչափված կամ բացակայող չափումների առավելագույնը 10%-ը կարելի է բացառել հաշվարկումից՝ համարելով, որ այդ ժամանակը անհրաժեշտ է եղել համապատասխան ճնշման լոգերի սպասարկման համար:

Մեծածախ ջրամատակարարման ծառայություն ստացող գյուղերը չեն ներառվում սույն ՀԿՑ-ի հաշվարկում:

Ելակետային արժեքներ (ԵԱ)՝ Վարձակալը պետք է սահմանի ՀԿՑ QS1_{Երևան} - ի, ՀԿՑ QS1_{քաղաք} - ի և ՀԿՑ QS1_{գյուղ} - ի ելակետային արժեքները՝ հիմք ընդունելով Բազիսային տարվա հասանելի տվյալները և տեղեկատվությունը:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ստուգի, հաստատի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխանեցնի ելակետային արժեքները: Ելակետային արժեքները պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ): ՆԳՍ-ն կախված է համապատասխան ելակետային արժեքներից (ԵԱ) և սահմանվում է առանձին (i) Երևան քաղաքի, (ii) այլ քաղաքային բնակավայրերի և (iii) գյուղական տարածքների համար, որոնք գտնվում են Վարձակալի սպասարկման տարածքում: Առանձին պայմանագրային տարվա ՎԿՄ-ը կախված է տվյալ պայմանագրային տարվա ՆԳՍ-ից, բացառությամբ Պայմանագրային առաջին (1)տարվանից: ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը պետք է կլորացվեն մեկ տասնորդականի մասում: Վարձակալը պետք է ստանա ՀԿՑ QS1_{Երևան} - ի, ՀԿՑ QS1_{քաղաք} - ի և ՀԿՑ QS1_{գյուղ} - ի ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը կոնկրետ Պայմանագրային տարվա համար (բացառությամբ Պայմանագրային առաջին (1)տարվանից) հետևյալ կերպ՝

ՀԿՑ QՏ1՝ Զրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում

1) ՀԿՑ QՏ1_{Երևան} - ի ՆԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
ՎԿՄ	-	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	-	1.01x ԵԱ	1.02x ԵԱ	1.03x ԵԱ	1.04x ԵԱ	1.05x ԵԱ	1.06x ԵԱ	1.07x ԵԱ

	ՊՏ 9	ՊՏ 10	ՊՏ 11	ՊՏ 12	ՊՏ 13	ՊՏ 14	ՊՏ 15
ՎԿՄ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	1.08x ԵԱ	1.09x ԵԱ	1.10x ԵԱ	1.11x ԵԱ	1.12x ԵԱ	1.13x ԵԱ	1.14x ԵԱ

ՀԿՑ QՏ1_{Երևան} - ի ՆԳՍ-ը սահմանվում է 23 ժամ/օր առավելագույն արժեքով

ՀԿՑ QՏ1_{Երևան} - ի ՎԿՄ-ի նվազագույն արժեքը 20 ժամ/օր է

2) ՀԿՑ QՏ1_{քաղաք} - ի ՆԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
ՎԿՄ	-	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	-	1.04x ԵԱ	1.08x ԵԱ	1.12x ԵԱ	1.16x ԵԱ	1.20x ԵԱ	1.24x ԵԱ	1.28x ԵԱ

	ՊՏ 9	ՊՏ 10	ՊՏ 11	ՊՏ 12	ՊՏ 13	ՊՏ 14	ՊՏ 15
ՎԿՄ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	1.30x ԵԱ	1.32x ԵԱ	1.34x ԵԱ	1.36x ԵԱ	1.38x ԵԱ	1.40x ԵԱ	1.42x ԵԱ

ՀԿՑ QՏ1_{քաղաք} - ի ՆԳՍ-ը սահմանվում է 20 ժամ/օր առավելագույն արժեքով

ՀԿՑ QՏ1_{գյուղ} - ի ՆԳՍ-ը, ՎԿՄ-ը և ԳԿՄ-ը

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
ՎԿՄ	-	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	-	1.05x ԵԱ	1.10x ԵԱ	1.15x ԵԱ	1.20x ԵԱ	1.25x ԵԱ	1.30x ԵԱ	1.35x ԵԱ

	ՊՏ 9	ՊՏ 10	ՊՏ 11	ՊՏ 12	ՊՏ 13	ՊՏ 14	ՊՏ 15
ՎԿՄ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ	0,90x ՆԳՍ
ՆԳՍ	1.40x ԵԱ	1.42x ԵԱ	1.44x ԵԱ	1.46x ԵԱ	1.48x ԵԱ	1.50x ԵԱ	1.52x ԵԱ

ՀԿՑ QՏ1_{գյուղ} - ի ՆԳՍ-ը սահմանվում է 20 ժամ/օր առավելագույն արժեքով

ՀԿՑ QS1՝ Զրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում

Տուժանքներ՝ ՀԿՑ QS1_{Երևան} - ը, ՀԿՑ QS1_{քաղաք} - ը և ՀԿՑ QS1_{գյուղ} - ը ենթակա են տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է առանձին հաշվարկի յուրաքանչյուր ՀԿՑ-ի տուժանքը՝ հիմք ընդունելով Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքները:

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) ՀԿՑ-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{QS1_{yerevan}} \leq WPL_{KPI_{QS1_{yerevan}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{yerevan}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{yerevan}}} \times Revenue$$

$$KPI_{QS1_{urban}} \leq WPL_{KPI_{QS1_{urban}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{urban}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{urban}}} \times Revenue$$

$$KPI_{QS1_{rural}} \leq WPL_{KPI_{QS1_{rural}}}$$

$$PEN_{KPI_{QS1_{rural}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{rural}}} \times Revenue$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել ճնշման լոգերների վրա հիմնված ճնշման մոնիտորինգի համակարգ, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{QS1_{yerevan}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{yerevan}}} \times Revenue$$

$$PEN_{KPI_{QS1_{urban}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{urban}}} \times Revenue$$

$$PEN_{KPI_{QS1_{rural}}} = 0.05 \times W_{KPI_{QS1_{rural}}} \times Revenue$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) համապատասխան ՀԿՑ-ով չափված ձեռք բերված կատարողականը գերազանցել էր վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՄ), ապա Վարձակալը

ՀԿՑ ՉՏ1՝ Զրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում

պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$WPL_{KPI\ QS1_{yerevan}} < KPI\ QS1_{yerevan} < NOS_{KPI\ QS1_{yerevan}}:$$

$$PEN_{KPI\ QS1_{yerevan}} = 0.05 \times W_{KPI\ QS1_{yerevan}} \times \frac{KPI\ QS1_{yerevan} - NOS_{KPI\ QS1_{yerevan}}}{WPL_{KPI\ QS1_{yerevan}} - NOS_{KPI\ QS1_{yerevan}}} \times Revenue$$

$$WPL_{KPI\ QS1_{urban}} < KPI\ QS1_{urban} < NOS_{KPI\ QS1_{urban}}:$$

$$PEN_{KPI\ QS1_{urban}} = 0.05 \times W_{KPI\ QS1_{urban}} \times \frac{KPI\ QS1_{urban} - NOS_{KPI\ QS1_{urban}}}{WPL_{KPI\ QS1_{urban}} - NOS_{KPI\ QS1_{urban}}} \times Revenue$$

$$WPL_{KPI\ QS1_{rural}} < KPI\ QS1_{rural} < NOS_{KPI\ QS1_{rural}}:$$

$$PEN_{KPI\ QS1_{rural}} = 0.05 \times W_{KPI\ QS1_{rural}} \times \frac{KPI\ QS1_{rural} - NOS_{KPI\ QS1_{rural}}}{WPL_{KPI\ QS1_{rural}} - NOS_{KPI\ QS1_{rural}}} \times Revenue$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Վարձակալի կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկուցում:
- $W_{KPI\ QS1_{yerevan}}$, $W_{KPI\ QS1_{urban}}$ և $W_{KPI\ QS1_{rural}}$ այս ՀԿՑ-ների կշիռներն են, որոնք հարաբերվում են սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ: $W_{KPI\ QS1_{yerevan}}$, $W_{KPI\ QS1_{urban}}$ և $W_{KPI\ QS1_{rural}}$ կշիռները սահմանվում են հետևյալ կերպ՝
 - $W_{KPI\ QS1_{yerevan}} = 10\%$
 - $W_{KPI\ QS1_{urban}} = 12.5\%$ և
 - $W_{KPI\ QS1_{rural}} = 12.5\%$

Հաշվետվություն՝ Վարձակալը պետք է զեկուցի այս ՀԿՑ-ները ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում:

Վարձակալը պետք է ճնշման լոգերների բեռնված տվյալները (հում տվյալները) եռամսյակային կտրվածքով ներկայացնի Վարձատուին: Եռամսյակային տվյալները չպետք է վերլուծվեն: Տվյալների վերլուծությունը և կշռված մատակարարման ժամերի հաշվարկը պետք է կատարվի միայն է համապատասխան Պայմանագրային տարվա ավարտին:

ՀԿՑ QS1՝ Զրամատակարարման շարունակականությունը Երևան քաղաքում, քաղաքային և գյուղական բնակավայրերում

Ճնշման լոգերների եռամսյակային տվյալները պետք է ներկայացվեն Վարձատուին, ինչպես թղթային այնպես էլ էլեկտրոնային տարբերակով համակարգչային ծրագրի հետ միասին: Լոգերների թղթային ձևաչափը պետք է ներառի գրաֆիկներ, որտեղ ուղղահայաց առանցքը պետք է ունենա զրոյից մոտավորապես 20%-ով ավելի բարձր ճնշման ամպլիտուդ քան պահանջվող ջրի ճնշումն է: Հորիզոնական առանցքի մասշտաբը պետք է լինի այնպիսին, որ լանդշաֆտային ձևաչափով յուրաքանչյուրը A4 էջը պարունակի է մոտավորապես 10 օրվա ժամանակաշրջան: Վարձատուն և Անկախ Տեխնիկական Աուդիտորը կարող են վերանայել ճնշման լոգերների տվյալների ձևաչափը:

Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում Վարձակալը պետք է զեկուցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:

Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները ջրամատակարարման շարունակականության ՀԿՑ QS1-ի առումով՝

- Վարձակալի կողմից նախապատրաստվող և իրականացվող ճնշման մոնիտորինգի պլանի վերանայում,
- անհրաժեշտության դեպքում՝ ճնշման մոնիտորինգի պլանի բարելավման առաջարկությունների տրամադրում,
- անհրաժեշտության դեպքում՝ Վարձակալի կողմից հաշվարկված ելակետային արժեքների ստուգում և վերահաշվարկում,
- անհրաժեշտության դեպքում՝ զեկուցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում,
- այդ ՀԿՑ-ներին առնչվող տուժանքների հաշվարկում,
- այդ ՀԿՑ-ներին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և
- այդ ՀԿՑ-ներին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:

Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:

(2) **ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը**

ՀԿՑ QS2-ի չափումը սահմանվում է 2014թ.-ի օգոստոսի 14-ի Ն883-Ն Կառավարության որոշման համաձայն: ՀԿՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-2-ում:

Աղյուսակ 6-2՝ ՀԿՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Մատակարարվող ջրի որակը)

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը
Վկայակոչում՝ IWA-QS18 և IBNET-15.3
Նկարագիր՝ QS2 –ը պետք է պարզի կիրառելի ստանդարտին համապատասխանող ընտրված պարամետրերի համար իրականացված թեստերի տոկոսային հարաբերությունը Պայմանագրային տարվա ընթացքում անհրաժեշտ թվով թեստերի համեմատ:
Նպատակ՝ Վարձակալը պետք է ապահովի, որ Սպառողներին մատակարարվող ջրի որակը համապատասխանի կիրառելի ստանդարտին, որը սակայն չի ազատում վարձակալին պահանջվող մոնիտորինգից և ջրի որակի հետ կապված այլ պարտականություններից, որոնք սահմանված են կառավարության, նախարարությունների կողմից և Հանրապետության Հայաստան օրենքներով:
Հաշվարկման մեթոդը՝ $KPI_{QS2} = \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m (T1_{ij} + T2_{ij} + T3_{ij} + T4_{ij})}{4 \times m \times n} \times 100 (\%)$ որտեղ՝ <ul style="list-style-type: none">• n –ը Պայմանագրային տարվա օրերի թիվն է, m –ը նմուշառման կետերի քանակն է• $\sum_{i=1}^n "1"$ –ը նմուշների գումարն է պարամետր T1-ի (Ջրածնային ցուցանիշ (pH)) նկատմամբ i օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:• $\sum_{j=1}^m T2_{ij}$ –ը նմուշների գումարն է պարամետր T2-ի (մնացորդային քլոր) նկատմամբ i օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:• $\sum_{j=1}^m T3_{ij}$ –ը նմուշների գումարն է պարամետր T4-ի (պղտորություն) նկատմամբ i օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:• $\sum_{j=1}^m T4_{ij}$ –ը նմուշների գումարն է պարամետր T5-ի (կոշտություն) նկատմամբ i օրվա ընթացքում համաձայն գործող ստանդարտի:
ՀԿՑ արժեքը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:
Սահմանումներ՝ <u>Գործող ստանդարտը</u> – Գործող Ստանդարտը Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող ջրի որակի ստանդարտն է կամ նորմը պայմանագրի ստորագրման օրվանից:

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը

Նմուշառման կետեր -Վարձակալի կողմից մշակվող ջրի որակի մոնիտորինգի պլանի և ռազմավարության մեջ Վարձակալը պետք է առաջարկի օրական կտրվածքով նմուշառվող նմուշառման կետերի թիվը և տեղակայման վայրերը: Այդ վայրերը պետք է ներառեն առնվազն ջրամբարներ, էլեկտրահաղորդման լարեր, հասարակական ծորակներ և Բաժանորդի տարածքում տեղակայված ծորակներ: Վարձակալի առաջարկությունը պետք է ստուգվի և հաստատվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:

Նմուշառման Հաճախականությունը – Վարձակալը պետք է նմուշառնի բոլոր նմուշառման կետերը օրական կտրվածքով: Վարձակալը պետք է փաստագրի նմուշները համապատասխան արձանագրություններում առնվազն նշելով՝

- նմուշառման օրը, ժամը, վայրը և
- Նմուշառմանը մասնակցած անձանց կազմը:

Այն նմուշները, որոնք չի հաջողվել վերցնել կհամարվեն անհամապատասխան բոլոր չորս (4) թեստավորման պարամետրերի նկատմամբ, այսինքն T1, T2, T3 և T4 պարամետրերի նկատմամբ:

Թեստավորման հաճախականությունը – Բոլոր չորս (4) թեստավորման պարամետրերը՝ T1, T2, T3 և T4, պետք է թեստավորվեն օրական կտրվածքով: Վարձակալը պետք է փաստագրի թեստավորման արդյունքները համապատասխան տեղեկամատյաններում՝ մատնանշելով առնվազն օրը, ժամը, թեստերի համապատասխան արդյունքները և սահմանային արժեքներին դրանց համապատասխանումը, ինչպես սահմանված է Գործող Ստանդարտում:

Վերցված նմուշներից ստացված պարամետրերը, որոնք վարձակալին չի հաջողվել վերլուծել, համարվում են անհամապատասխան:

Բացառություններ՝ Նմուշները, որոնք Վարձակալին չի հաջողվել վերցնել նմուշառման կետերից եղանակային պայմանների կամ նմուշառման կետերի հասանելիությունը խոչընդոտող այլ արտաքին գործոնների պատճառով, պետք է բացառել: Վարձակալը պետք է հստակ փաստագրի այդ դեպքերը՝ առնվազն նշելով օրը և ամենօրյա նմուշառման պլանից շեղումների հիմնավորումը: Նման դեպքերում, Անկախ Տեխնիկական Աուդիտորը կուսումնասիրի այսպիսի բացառությունները և կհաստատի բացառման հիմնավորումը կամ բացառումը կհամարի անհամապատասխան՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորի վերանայման հիման վրա:

Պղտորության և կոշտության հետազոտությունների արդյունքները նմուշառման այն կետերում, որտեղ նմուշառման պահին առկա մաքրման կայաններն ու շահագործման նպատակով վարձակալված աղբյուրներն ի վիճակի չեն համապատասխանել Գործող ստանդարտին չպետք է հաշվի առնվեն սույն ՀԿՑ-ի հաշվարկում:

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը

Պահանջներ՝

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի ջրի որակի և համապատասխան նմուշառումների կետերի մոնիտորինգի պլան՝ QS2-ը հուսալիորեն չափելու համար: Ջրի որակի մոնիտորինգի պլանը պետք է վերանայվի Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պարտավոր է բացահայտել դեֆիցիտները և ընդլայնել ջրի մաքրումը այնպիսի վայրերում, ինչպիսիք են աղբյուրները կամ ջրամբարները, որտեղ ներկայումս պահանջվող ջրի որակի համապատասխան ջրի մաքրման ոչ մի միջոց չկա՝ համաձայն Գործող Ստանդարտի QS2-ին առնչվող չորս (4) պարամետրերի:

3) Սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից, յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից, Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է նմուշառման կետերում իրականացնի ջրի որակի ինքնուրույն հետազոտություն՝ QS2-ի հաշվարկման մեջ օգտագործվող չորս (4) ընտրված պարամետրերի համար:

Ելակետային Արժեք (ԵԱ)՝ Չկա

Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ)՝

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
ՎԿՄ	-	-	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%
ՆԳՍ	-	-	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%

	ՊՏ 9	ՊՏ 10	ՊՏ 11	ՊՏ 12	ՊՏ 13	ՊՏ 14	ՊՏ 15
ՎԿՄ	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%	95,0%
ՆԳՍ	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%	97,0%

Տուժանքներ՝ QS2 - ը ենթակա է տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում:

Եթե համապատասխան Պայմանագրային տարվա ընթացքում (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից կատարած ջրի որակի հետազոտության արդյունքները զգալիորեն

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը

տարբերվում են Վարձակալի կողմից տրամադրած արդյունքներից, Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է գնահատի QS2-ի տարեկան արժեքը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորի փորձաքննության և հետազոտության արդյունքների հիման վրա և, անհրաժեշտության դեպքում, ենթարկի պահանջվող տույժին:

Հիմնվելով Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված QS2 արժեքների վրա՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է հաշվարկի տուժանքը հետևյալ կերպ՝

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) QS2-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{QS2} \leq WPL_{KPI_{QS2}}:$$

$$PEN_{KPI_{QS2}} = 0.05 \times W_{KPI_{QS2}} \times \square\square\square\square\square\square$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել ջրի որակի մոնիտորինգի համակարգ QS2-ի համար, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{QS2}} = 0.05 \times W_{KPI_{QS1,yerevan}} \times \square\square\square\square\square\square$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիներից) QS2-ի ձեռք բերված կատարողականը ավելի լավ էր քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$WPL_{KPI_{QS2}} < KPI_{QS2} < NOS_{KPI_{QS2}}:$$

$$PEN_{KPI_{QS2}} = 0.05 \times W_{KPI_{QS2}} \times \frac{KPI_{QS2} - NOS_{KPI_{QS2}}}{WPL_{KPI_{QS2}} - NOS_{KPI_{QS2}}} \times \square\square\square\square\square\square$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի

ՀԿՑ QS2՝ Մատակարարվող ջրի որակը
<p>հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից հաշվեգրված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Վարձակալի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկուցում:</p> <ul style="list-style-type: none"> • $W_{KPI\ QS2}$ այս ՀԿՑ-ների կշիռներն են, որոնք հարաբերվում են սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ: $W_{KPI\ QS2}$ -ը հետևյալն է՝ <ul style="list-style-type: none"> ○ $W_{KPI\ QS2} = 25\%$
<p>Հաշվետվություն՝ Վարձակալը պետք է զեկուցի QS2-ը Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում: Նա պետք է զեկուցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները QS2-ի առումով՝</p> <ul style="list-style-type: none"> • Վարձակալի կողմից նախապատրաստվող և իրականացվող ջրի որակի մոնիտորինգի պլանի վերանայում, • անհրաժեշտության դեպքում՝ առաջարկված նմուշառման կետերի քանակի և տեղակայման վայրերի բարելավման առաջարկությունների տրամադրում, • անհրաժեշտության դեպքում՝ Վարձակալի կողմից հաշվարկված ելակետային արժեքների ստուգում և վերահաշվարկում, • ջրի որակի տարեկան զննում, • անհրաժեշտության դեպքում՝ զեկուցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում, • QS2-ին առնչվող տուժանքների հաշվարկում, • QS2-ին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և • QS2-ին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:
<p>Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:</p>

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)

Ջրաչափերով գրանցված ջրի սպառումը Պայմանագրային տարվա ընթացքում ջրաչափերով գրանցված և, համապատասխանաբար, գրանցված Բաժանորդներից հաշվառած ջրի ծավալն է:

Բացառություններ՝ Ոչ մի բացառում կամ բացառություն չպետք է արվի:

Պահանջներ՝ Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի ջրի արտադրանքի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ըստ խոշոր ջրաչափերի, որոնք պետք է չափեն ջրի արտադրանքը սպասարկման ողջ տարածքում: Այս պլանը և ռազմավարությունը պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:

Ելակետային արժեքներ (ԵԱ)՝ Վարձակալը պետք է սահմանի ՀԿՑ CF1 – ի ելակետային արժեքը՝ հիմք ընդունելով Բազիսային տարվա ժամանակահատվածում գրանցված հասանելի տվյալները և տեղեկատվությունը:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ստուգի, հաստատի և, անհրաժեշտության դեպքում, համապատասխանեցնի այս ելակետային արժեքը: Ելակետային արժեքները պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ): ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը կախված են համապատասխան ելակետային արժեքներից (ԵԱ): Առանձին պայմանագրային տարվա ՎԿՄ-ը կախված է տվյալ պայմանագրային տարվա ՆԳՍ-ից, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: ՆԳՍ-ը և ՎԿՄ-ը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:

	ՊՏ 1	ՊՏ 2	ՊՏ 3	ՊՏ 4	ՊՏ 5	ՊՏ 6	ՊՏ 7	ՊՏ 8
ՎԿՄ	-	ԵԱ	ԵԱ	ԵԱ	ԵԱ – 2%	ԵԱ – 4%	ԵԱ – 6%	ԵԱ – 8%
ՆԳՍ	-	ԵԱ – 3%	ԵԱ – 6%	ԵԱ – 9%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%

	ՊՏ 9	ՊՏ 10	ՊՏ 11	ՊՏ 12	ՊՏ 13	ՊՏ 14	ՊՏ 15
ՎԿՄ	ԵԱ – 10%	ԵԱ – 12%	ԵԱ – 14%	ԵԱ – 16%	ԵԱ – 18%	ԵԱ – 19%	ԵԱ – 20%
ՆԳՍ	ԵԱ – 20%	ԵԱ – 22%	ԵԱ – 24%	ԵԱ – 26%	ԵԱ – 28%	ԵԱ – 29%	ԵԱ – 30%

ՀԿՑ CF1-ի ՎԿՄ-ի նվազագույն արժեքը 55% է
 ՀԿՑ CF1-ի ՆԳՍ-ի նվազագույն արժեքը 45% է

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)

Տուժանքներ՝ ՀԿՑ CF1 - ը ենթակա է տուժանքների համապատասխան Պայմանագրային տարվա ՆԳՍ-ից ավելի վատ տարեկան կատարողականի դեպքում, բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից: Տուժանքը պետք է հաշվարկվի ըստ Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքների:

Դեպք 1: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) CF1-ի ձեռք բերված կատարողականը հավասար էր, կամ ավելի վատ, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$KPI_{CF1} \geq WPL_{KPI_{CF1}}:$$

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \square\square\square\square\square\square$$

Եթե Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալին չի հաջողվում ներդնել խոշոր ջրաչափերի վրա հիմնված ջրի արտադրության չափման համակարգ, և նրան բացառապես չի հաջողվում չափել ջրի արտադրանքը խոշոր ջրաչափերով, ապա սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է վճարել առավելագույն տուժանք (PEN): Համապատասխան Պայմանագրային տարվա առավելագույն տուժանքը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \square\square\square\square\square\square$$

Դեպք 2: Եթե համապատասխան Պայմանագրային տարվա (բացառությամբ Պայմանագրային առաջին (1) տարվանից) CF1-ի ձեռք բերված կատարողականը ավելի լավ էր, քան վատ կատարողականի մակարդակը (ՎԿՄ), բայց ավելի վատ էր, քան նորմալ գործող ստանդարտը (ՆԳՍ), ապա Վարձակալը պարտավոր է վճարել տուժանք (PEN), որը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$NOS_{KPI_{CF1}} < KPI_{CF1} < WPL_{KPI_{CF1}}:$$

$$PEN_{KPI_{CF1}} = 0.05 \times W_{KPI_{CF1}} \times \frac{KPI_{CF1} - NOS_{KPI_{CF1}}}{WPL_{KPI_{CF1}} - NOS_{KPI_{CF1}}} \times \square\square\square\square\square\square$$

որտեղ՝

- Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթները առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկույցում:

ՀԿՑ CF1՝ Չհաշվառվող ջուր (ներառյալ առանց ջրաչափերի գրանցված ջրի սպառում)
<ul style="list-style-type: none"> • $W_{KPI\ QS2}$ -ը CF1-ի կշիռն է, որ հարաբերվում է սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ: $W_{KPI\ QS2}$-ը հետևյալն է՝ <ul style="list-style-type: none"> ○ $W_{KPI\ QS2} = 25\%$
<p>Հաշվետվություն՝ Վարձակալը պետք է զեկուցի CF1-ը Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակայինև տարեկան հաշվետվություններում: Վարձակալը պետք է զեկուցի ՀԿՑ արժեքները, ինչպես նաև համապատասխան հաշվարկի մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները CF1-ի առումով՝</p> <ul style="list-style-type: none"> • ջրի արտադրության մոնիտորինգի պլանի և ռազմավարության վերանայում, • անհրաժեշտության դեպքում՝ ջրի արտադրության մոնիտորինգի պլանի բարելավման առաջարկությունների տրամադրում, • անհրաժեշտության դեպքում՝ զեկուցված ՀԿՑ արժեքների տարեկան ստուգում և դրանց վերահաշվարկում, • CF1-ին վերաբերող Վարձակալի հաշվետվության գնահատում, և • CF1-ին վերաբերող Վարձակալի հաշվետվությանն առնչվող առաջարկությունների տրամադրում:
<p>Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:</p>

(4) ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն

ՀԿՑ CS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայցված է Աղյուսակ 6-4-ում:

Աղյուսակ 6-4՝ ՀԿՑ CS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Բաժանորդների բավարարվածությունը)

ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն
<p>Վկայակոչում՝ Լավագույն փորձը</p>
<p>Նկարագիր՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից իրականացված Բաժանորդների կարծիքների հարցախույզ՝ Սպասարկման տրամադրում ջրամատակարարման ծառայությունների որակի վերաբերյալ, որպեսզի չափվի Բաժանորդների բավարարվածության աստիճանը ի դեմս նրանց ակնկալիքների:</p>
<p>Նպատակ՝ Չափել Բաժանորդների բավարարվածության աստիճանը Վարձակալի կողմից տրամադրված ջրամատակարարման ծառայությունների որակի վերաբերյալ:</p>

ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն

Հաշվարկման մեթոդ՝

Բաժանորդների բավարարվածությունը պետք է պարզել տարեկան անկախ հարցախույզերի միջոցով, որոնք պետք է գնահատեն Բաժանորդների բավարարվածությունը հետևյալ ասպեկտներից յուրաքանչյուրի վերաբերյալ՝

- ջրի որակը,
- ջրամատակարարման շարունակականությունը,
- ջրամատակարարման ժամանակացույցերի խախտումներ,
- Բաժանորդների հարաբերությունները և
- հաշվառում:

Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի ամենամյա հարցախույզ սկսած Պայմանագրային առաջին (1) տարվանից: Հարցված Բաժանորդների քանակը պետք է լինի առնվազն՝

- 400 Երևան քաղաքի համար,
- 400 ջրամատակարարման ընկերության սպասարկման տարածքի այլ քաղաքային բնակավայրերի համար և
- 400 ջրամատակարարման ընկերության սպասարկման տարածքի գյուղական բնակավայրերի համար:

Բաժանորդները կնտրվեն պատահականության սկզբունքով Բաժանորդների տվյալների բազայից Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից:

Սկսած Պայմանագրային երկրորդ (2) տարվանից Անկախ Տեխնիկական Աուդիտորը կգնահատի Բաժանորդների բավարարվածությունը ըստ իրականացված հարցախույզի հետևյալ կերպ՝

- A1՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար և վատթարանում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A1
- A2՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար և համեմատելի է նախորդ Պայմանագրային տարվան, ինչը նշանակում է, որ բարելավումներ չեն նկատվում, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A2
- A3՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է անբավարար, բայց նկատելի են մեծ բարելավումներ նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A3
- A4՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է բավարար, բայց վատթարանում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A4
- A5՝ Բաժանորդների բավարարվածությունը գնահատվում է բավարար և բարելավվում է նախորդ Պայմանագրային տարվա համեմատ, այսինքն՝ ՀԿՑ CS3 = A5

ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն
<p>Սահմանումներ՝</p> <p><i>Հարցախույզ</i>նշանակում է ջրամատակարարման ծառայություն որակի վերաբերյալ մասնագիտորեն ձևակերպված հարցերին տրված Բաժանորդների պատասխանների անկախ հավաքագրում:</p>
<p>Բացառություններ՝</p> <p>1) Կբացառվեն կեղտաջրերի հեռացման ծառայությունները:</p> <p>2) Վարձակալի անձնակազմը իրավունք չունի մասնակցելու հարցախույզին:</p>
<p>Պահանջներ՝</p> <p>1) Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է անց կացնի տարեկան հարցախույզեր:</p> <p>2) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ժամանակահատվածում Վարձակալը պետք է մշակի և կիրառի Բաժանորդների բողոքների մոնիտորինգի պլան և ռազմավարություն: Այս պլանը և ռազմավարությունը պետք է վերանայվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից, ով պարտավոր է առաջարկություններ անել առաջարկված պլանի բարելավման համար է, եթե այդպիսիք կան:</p> <p>3) Սկսած Պայմանագրային երրորդ (3) տարվանից Վարձակալը պարտավոր է հետամուտ լինել և արձանագրել բոլոր բողոքները և հաշվառումների վերաբերյալ հարցումները՝ ստեղծված Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:</p>
<p>Ելակետային արժեքներ (ԵԱ)՝ Ելակետային արժեք (ԵԱ) կհամարվի Պայմանագրային առաջին (1) տարվա ժամանակահատվածում անց կացված հարցախույզը:</p>
<p>Նորմալ Գործող Ստանդարտ (ՆԳՍ) և Վատ Կատարողական մակարդակ (ՎԿՄ)՝ Չկան</p>
<p>Տուժանքներ՝ CS3- ը ենթակա է տուժանքների, եթե Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից տարեկան կատարողականը բնութագրվել է որպես A1 կամ A2՝ համաձայն CS3-ի Հաշվարկման մեթոդում տրված նկարագրի:</p> <p>Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է հաշվարկի տուժանքը՝ ըստ Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՀԿՑ արժեքի հետևյալ կերպ՝</p>

ՀԿՑ CS3՝ Բաժանորդների բավարարվածություն
<p><u>Դեպք 1՝ $KPI_{CS3} = A1$:</u></p> $PEN_{KPI_{CS3}} = 0.05 \times W_{KPI_{CS3}} \times \square\square\square\square\square\square$ <p><u>Դեպք 2՝ $KPI_{CS3} = A2$:</u></p> $PEN_{KPI_{CS3}} = 0.05 \times W_{KPI_{CS3}} \times 0.50 \times \square\square\square\square\square\square$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթերը առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկույցում: $W_{KPI_{QS2}}$ -ը CS2-ի կշիռն է, որը հարաբերվում է սույն Պայմանագրին առնչվող այլ ՀԿՑ-ների հետ: $W_{KPI_{QS2}}$ -ը հետևյալն է՝ <ul style="list-style-type: none"> $W_{KPI_{QS2}} = 15\%$
<p>Հաշվետվություն՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է զեկուցի իրականացված հարցախույզի և համապատասխան գնահատման արդյունքները:</p>
<p>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի հետևյալ գործողությունները CS3 -ի առումով՝</p> <ul style="list-style-type: none"> Բաժանորդների բավարարվածության տարեկան հարցախույզի իրականացում, Բաժանորդների բավարարվածության գնահատում՝ ըստ հարցախույզի արդյունքների:
<p>Ֆինանսական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Պայմանագրի տևողության ընթացքում Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի և Վարձակալի Հասույթը ներկայացնի յուրաքանչյուր Պայմանագրային Տարվա տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվության մեջ:</p>

2. Ներքին Համեմատական ցուցանիշներ (ՆՀՑ-ներ)

(1) ՆՀՑ QS3: Մաքրված կեղտաջրերի որակը

ՆՀՑ QS2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-5-ում:

Աղյուսակ 6-5՝ ՆՀՑ QS3-ի հաշվարկման մեթոդաբանությունը (մաքրված կեղտաջրերի որակը)

ՆՃՑ QS3՝ Մաքրված կեղտաջրերի որակը
Վկայակոչում՝ IWA-wQS5
<p>Նկարագիր՝ QS3-ը պետք է արտացոլի ընտրված պարամետրերի համար կատարված թեստերի տոկոսը՝ պայմանագրային տարվա ընթացքում գործող ստանդարտին համապատասխանող թեստերի քանակի նկատմամբ:</p>
<p>Նպատակ՝ Վարձակալը պետք է ապահովի, որ մաքրված կեղտաջրերը համապատասխանեն գործող ստանդարտին, ինչը, սակայն, չի նշանակում, որ Վարձակալը չպետք է իրականացնի մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգ և այլ պարտականություններ՝ նախանշված ՀՀ կառավարության և նախարարությունների կողմից, ինչպես նաև ՀՀ օրենքներով:</p>
<p>Հաշվարկման մեթոդ՝</p> $IBI\ QS3 = \frac{\sum_{i=1}^n \sum_{j=1}^m (T1_{ij} + T2_{ij} + T3_{ij} + T4_{ij} + T5_{ij})}{5 \times m \times n} \times 100 (\%)$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> • n-ը պայմանագրային տարվա օրերի թիվն է • m-ը կեղտաջրերի մաքրման կայանների (ԿՄԿ) քանակն է • $\sum_{j=1}^m T1_{ij}$-ը T1 պարամետրի (թթվածնի քիմիական պահանջ ԹՔՊ) նմուշների ընդհանուր քանակն է i օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի: • $\sum_{j=1}^m T2_{ij}$-ը T2 պարամետրի (կախյալ կոշտ մասնիկներ, ԿԿՄ) նմուշների ընդհանուր քանակն է i օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի: • $\sum_{j=1}^m T3_{ij}$-ը T3 պարամետրի (ամոնիում - NH₄) նմուշների ընդհանուր քանակն է i օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի: • $\sum_{j=1}^m T4_{ij}$-ը T4 պարամետրի (մնացորդային քլոր) նմուշների ընդհանուր քանակն է i օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի: • $\sum_{j=1}^m T5_{ij}$-ը T5 պարամետրի (ընդհանուր կոլիֆորմ) նմուշների ընդհանուր քանակն է i օրվա ընթացքում՝ համաձայն գործող ստանդարտի:
<p>Սահմանումներ՝</p> <p><u>Գործող ստանդարտը</u> Գործող ստանդարտը ՀՀ-ում ներկայումս պաշտոնապես գործող մաքրված կեղտաջրերի ստանդարտն է՝ պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ:</p> <p><u>Նմուշ</u> Նմուշը դա նմուշառման կետում մաքրված կեղտաջրերի 24-ժամվա ընթացքում հավաքված</p>

ՆՀՑ QS3՝ Մաքրված կեղտաջրերի որակը

խառը նմուշն է:

Նմուշառման կետեր

Նմուշառման կետը գտնվում է համապատասխան կեղտաջրերի մաքրման կայանի (ԿՄԿ) ելքի մոտ:

Նմուշառման հաճախականություն

Վարձակալը պետք է յուրաքանչյուր օր նմուշառման ենթարկի բոլոր նմուշառման կետերը: Վարձակալը պետք է ներկայացնի համապատասխան արձանագրություններ նմուշի վերաբերյալ՝ առնվազն նշելով՝

- նմուշառման օրը, ժամը և անցկացման վայրը,
- նմուշառմանը մասնակցած անձանց կազմը:

Չկատարված նմուշառումները համարվում են անբավարար բոլոր 5 թեստավորման պարամետրերով՝ T1, T2, T3, T4 և T5:

Թեստավորման հաճախականություն

Բոլոր 5 թեստավորման պարամետրերը՝ T1, T2, T3, T4 և T5 պետք է թեստավորվեն յուրաքանչյուր օր: Վարձակալը պետք է ներկայացնի արձանագրություններ թեստավորման վերաբերյալ համապատասխան գրանցամատյանում՝ նշելով օրը, ժամը, թեստավորման համապատասխան արդյունքները, ինչպես նաև գործող ստանդարտում նշված սահմանային արժեքի համապատասխանությունը:

Վերցված նմուշներից ստացված այն պարամետրերը, որոնք վարձակալը չի վերլուծել, համարվում են անբավարար:

Բացառություններ՝

բացառություններ չպետք է արվեն:

Պահանջներ՝

Պայմանագրային առաջին տարում (1) Վարձակալը պետք է մշակի և իրականացնի մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլան և ռազմավարություն, որոնք պետք է ուսումնասիրվեն Անկախ Տեխնիկական Աուդիտորների կողմից, որից հետո, անհրաժեշտության դեպքում, աուդիտորները պետք է ներկայացնեն առաջարկություններ պլանի բարելավման վերաբերյալ:

Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի QS3-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

ՆՀՑ QS3՝ Մաքրված կեղտաջրերի որակը
Տարեկան հաշվետվությունում Վարձակալը պետք է ներկայացնի օրական և ամսական միջին արժեքները հինգ (5) ընտրված պարամետրերի համար, որոնք կիրառվել են աղյուսակային և գծապատկերային ձևաչափերով հաշվարկի մեջ: Այնուհետև, այն նմուշները, որոնք վարձակալը չի կարողացել վերցնել, պետք է հստակորեն արձանագրվեն՝ նշելով օրը և նմուշառման պլանից շեղվելու պատճառը:
<p>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի QS3-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> • մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլանի ուսումնասիրություն • մաքրված կեղտաջրերի որակի մոնիթորինգի պլանի բարելավման վերաբերյալ առաջարկություններ • ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում, • վարձակալի կողմից ներկայացված QS3-ի վերաբերյալ հաշվետվության գնահատական և • QS3-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

(2) ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում

ՆՀՑ OR1-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-6-ում:

Աղյուսակ 6-6՝ ՆՀՑ OR1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Պոմպերի զննում և սպասարկում)

ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում
Վկայակոչում՝ IWA-Op1
<p>Նկարագիր՝ Համապատասխան պայմանագրային տարվա ընթացքում զննման և սպասարկման ենթակա ջրամատակարարման պոմպերի տոկոսը՝ արտահայտված կիլովատային (կՎ) նոմինալ հզորությամբ:</p>
<p>Նպատակ՝ OR1-ը պետք է դրդի վարձակալին պոմպերը պատշաճ կերպով շահագործել և սպասարկել, ինչպես նաև վերանորոգել և փոխարինել սպասարկման տարածքում տեղադրված վնասված պոմպերը:</p>

ՆՇՅ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում

Հաշվարկման մեթոդ՝

$$IBI OR1 = \frac{\sum_{i=1}^n P_i}{P_{total}} \times 100 (\%)$$

որտեղ՝

- n -ը տեղադրված պոմպերի քանակն է, որոնք, պայմանագրային տարվա ընթացքում շահագործվելով, ենթարկվել են զննման և սպասարկման,
- P_i -ը շահագործման ընթացքում զննված և սպասարկված i պոմպի կՎ-երով արտահայտված նոմինալ հզորությունն է,
- P_{total} -ը տեղադրված պոմպերի ընդհանուր նոմինալ հզորությունն է կՎ-երով:

Սահմանումներ՝

Նոմինալ հզորություն (P)

Տեղադրված պոմպերի նոմինալ հզորությունը դա պոմպերի նոմինալ հզորությունն է՝ սահմանված համապատասխան արտադրողի կողմից:

Հեռացված պոմպի նոմինալ հզորությունը դա պոմպերի նոմինալ հզորությունն է՝ նշված դիզայնի վերաբերյալ համապատասխան փաստաթղթում:

Տեղադրված պոմպեր

Տեղադրված պոմպերն այն պոմպերն են, որոնք (i) տեղադրված են և շահագործվում են, (ii) տեղադրված են, բայց դեռ չեն շահագործվում՝ լինելով պատրաստ շահագործման համար (iii) տեղադրված, բայց վնասված կամ ջարդված պոմպերը և (iv) շահագործման համար ոչ ենթակա հեռացված պոմպերը:

Բացառություններ՝

Բացառությունները պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր կոնկրետ հեռացված պոմպի դեպքում, օրինակ, երբ համապատասխան պոմպակայանի հնարավորությունները շատ ավելին են, քան իրական կարիքները: Վարձակալը պետք է հստակորեն արձանագրի և հիմնավորի նման դեպքերը:

Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի OR1-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՇՅ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR1-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

ՆՀՑ OR1՝ Պոմպերի զննում և սպասարկում
<ul style="list-style-type: none"> • Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում, • Վարձակալի կողմից OR1-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և • OR1-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

(3) ՆՀՑ OR3: Կոյուղու զննում և սպասարկում

ՆՀՑ OR3-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-7-ում:

Աղյուսակ 6-7՝ ՆՀՑ OR3-ի Հաշվարկման մեթոդաբանություն (Կոյուղու զննում և սպասարկում)

ՆՀՑ OR3՝ Կոյուղու զննում և սպասարկում
Վկայակոչում՝ IWA-wOp1
<p>Նկարագիր՝ OR3-ն արտացոլում է զննված կոյուղու ցանցի տոկոսային հարաբերությունը ընդհանուր կոյուղու ցանցի երկարության նկատմամբ:</p>
<p>Նպատակ՝ Վարձակալը պետք է կատարի կոյուղու ցանցի պարբերական զննումներ, որպեսզի՝</p> <ul style="list-style-type: none"> • բացահայտի թերությունները (վնասներ կամ խցանումներ), • ժամանակին կանխի հնարավոր վնասները, • նվազեցնի հողաջրերի և ջրերի ներթափանցումը այլ չնախատեսված տեղերից, • նվազեցնի հողաջրերի աղտոտվածությունը և • իրականացնի արդյունավետ շահագործման և վերանորոգման աշխատանքներ:
<p>Հաշվարկման մեթոդ՝</p> $IBI OR3 = \frac{L_{inspected}}{L_{total}} \times 100 (\%)$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> • $L_{inspected}$ –ը Պայմանագրային տարում զննված կոյուղու ցանցի երկարությունն է, • L_{total} –ը կոյուղու ցանցի ընդհանուր երկարությունն է Պայմանագրային տարվա վերջի դրությամբ:

<p>ՆՇՑ OR3՝ Կոյուղու զննում և սպասարկում</p>
<p>Սահմանումներ՝</p> <p><u>Ձևնում</u>– Ձևնումները պետք է ներառեն(i) մեխանիկական օպտիկական զննումներ,(ii) առցանց զննումներ հեռակառավարվող սարքերով և (iii)հեռուստատեսային զննումներ: Վարձակալը պետք է նաև զննումներ կատարի պարզելու համար խցանումների պատճառները:</p> <p>Վարձակալը պետք է հստակորեն արձանագրի զննումները, ինչպես նաև գրանցի թերությունները, օրինակ, վնասները և խցանումները: Արձանագրությունում պետք է առնվազն նշվի վնասների, խցանումների և զննումների օրը, տեղը, տեսակը, վայրը և կցվի լուսանկարը: Վարձակալը նաև պետք է անմիջապես նախաձեռնի արձանագրված թերությունների վերանորոգման աշխատանքները:</p>
<p>Բացառություններ՝ բացառություններ չպետք է արվեն:</p>
<p>Պահանջներ՝</p> <p>1) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ընթացքում Վարձակալը պետք է նախապատրաստի սպասարկման տարածքի հիդրավլիկ մոդելներ, որոնք համատեղելի են կոյուղու ցանցի ընթացիկ GIS-ի հետ: Հիդրավլիկ մոդելները պետք է ընդգրկեն սպասարկման տարածքի բոլոր համապատասխան ակտիվները և պետք է հիմնվեն GIS-ում մուտքագրված տվյալների վրա:</p> <p>2) Պայմանագրային առաջին (1), երկրորդ (2) և երրորդ (3) տարիների ընթացքում վարձակալը պետք է նախապատրաստի GIS աշխարհագրական տվյալների բազա:</p>
<p>Հաշվետվություն՝</p> <p>Վարձակալը պետք է ներկայացնի OR3-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՇՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p>Անկախ տեխնիկական աուդիտորի ներգրավվածությունը Անկախ տեխնիկական աուդիտորը պետք է իրականացնի OR3-ի հետ կապված հետևյալ գործողությունները:</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացված ՆՇՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում, • Վարձակալի կողմից OR3-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և • OR3-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

(4) **ՆՀՑ OR4՝ Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում**

ՆՀՑ OR4-ի Հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-8-ում:

Աղյուսակ 6-8՝ **ՆՀՑ OR4-ի (Ենթակառուցվածքների ընդհանուր սպասարկում, վերանորոգում և նորոգում)** հաշվարկման մեթոդաբանություն

ՆՀՑ OR4: Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում
Վկայակոչում՝ չկա
<p>Նկարագիր՝ Այս ցուցիչով չափվում է ընդհանուր շահագործումը, այդ թվում, վարձակալի կողմից իրականացվող ենթակառուցվածքների նորոգման և վերանորոգման աշխատանքները: Ուսումնասիրության պետք է ենթարկվեն ընդհանուր սպասարկումը, պատուհանները, ցանկապատները, դարպասները, սեպտիկ բաքերը, դռները և ցուցանակները:</p>
<p>Նպատակ՝ Այս ցուցիչը պետք է դրդի վարձակալին պահպանել տեղանքը մաքուր, կեղտ ու փոշուց զատ, ինչպես նաև իրականացնել ենթակառուցվածքների ընդհանուր սպասարկման, վերանորոգման և նորոգման աշխատանքներ:</p>
<p>Հաշվարկման մեթոդ՝</p> $IBI OR4 = \frac{\text{Վատից բարձր գնահատված ենթակառուցվածքների քանակը}}{\text{Ենթակառուցվածքների ընդհանուր քանակ}} \times 100 (\%)$
<p>Սահմանումներ՝</p> <p><u>Ենթակառուցվածք</u> Ենթակառուցվածք են համարվում՝</p> <ul style="list-style-type: none"> • պոմպակայանները, • ամբարները, • ջրամաքրման կայանները և • կեղտաջրերի մաքրման կայանները: <p><u>Վատ</u>– Վատ վիճակում է գտնվում այն ենթակառուցվածքը, որտեղ առկա են հետևյալ գործոններից երկուսը՝</p> <ul style="list-style-type: none"> • կեղտ ու փոշի,

ՆՀՑ OR4: Ենթակառուցվածքների ընդհանուր շահագործում և նորոգում
<ul style="list-style-type: none"> • վնասված կամ գոյություն չունեցող պաշտպանիչ ցանկապատներ, • վնասված կամ գոյություն չունեցող պաշտպանիչ դարպասներ, • ջարդված պատուհաններ և դռներ, • ջարդված կամ գոյություն չունեցող զուգարաններ, • վնասված կամ լցված սեպտիկ բաքեր և • ջարդված կամ գոյություն չունեցող ցուցանակներ:
Բացառություններ՝ բացառություններ չպետք է արվեն:
<p>Հաշվետվություն՝ Վարձակալը պետք է ներկայացնի OR4-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p>Անկախ տեխնիկական աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR4-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում, • Վարձակալի կողմից OR4-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և • OR4-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

(5) ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը

ՆՀՑ OR5-ը չափվում է համաձայն Կառավարության Ն883-Ն որոշման, ընդունված 2014թ.-ի օգոստոսի 14-ին: ՆՀՑ OR5 հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-9-ում:

Աղյուսակ 6-9՝ ՆՀՑ OR5 հաշվարկման մեթոդաբանությունը (ջրամատակարարման ընդհատումների քանակը)

ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը
Վկայակոչում՝ IWA-OS13
Նկարագիր՝ Այս ցուցիչով չափվում է ջրամատակարարման չնախատեսված ընդհատումների քանակը:
<p>Նպատակ՝ Այս ցուցիչը պետք է դրդի վարձակալին պարբերաբար իրականացնել սպասարկման և գնման աշխատանքներ՝ կանխելու համար ջրամատակարարման խոշոր և երկարատև</p>

ՆՀՑ OR5՝ Ջրամատակարարման ընդհատումների քանակը
ընդհատումները:
<p>Հաշվարկման մեթոդ՝</p> $IBI\ OR5 = \sum_{i=1}^n I_i$ <p>որտեղ՝</p> <ul style="list-style-type: none"> • n-ը ջրամատակարարման ընդհատումների քանակն է, • I_i-ը ջրամատակարարման ընդհատումներն են:
<p>Սահմանումներ՝</p> <p><u>Ջրամատակարարման ընդհատումներ (Ը)</u> Ջրամատակարարման ընդհատումները մատակարարման այն ընդհատումներն են, որոնք նախատեսված չեն և որի արդյունքում խողովակներում հոսքը դադարում է:</p> <p><u>Ջրամատակարարման նախատեսված ընդհատումներն</u> այն ընդհատումներն են, որի ժամանակ հանրությունը տեղեկացվում է ջրամատակարարման ընդհատման մասին առնվազն մեկ (1) շաբաթ առաջ:</p>
<p>Բացառություններ՝</p> <p>Ջրամատակարարման նախատեսված ընդհատումները պետք է հաշվարկից հանել:</p>
<p>Հաշվետվություն՝</p> <p>Վարձակալը պետք է ներկայացնի OR5-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:</p>
<p>Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR5-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> • Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում, • Վարձակալի կողմից OR5-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատական և • OR5-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

(6) **ՆՀՑ OR2՝ Զրաչափերի փոխարինում և ստուգաչափում**

ՆՀՑ OR2-ի հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-10-ում:

Աղյուսակ 6-10՝ ՆՀՑ OR2-ի հաշվարկման մեթոդաբանությունը (Զրաչափերի փոխարինում և ստուգաչափում)

ՆՀՑ OR2՝ Զրաչափերի փոխարինում և ստուգաչափում
Վկայակոչում՝ IWA-Op8
Նկարագիր՝ Պայմանագրային տարվա ընթացքում նոր տեղադրված կամ ISO 4064 ջրաչափերի ճշտության դասին հավասար, կամ ավելի բարձր դասի, ստուգված և ստուգաչափված ջրաչափերով ցանցերին միացած բնակչության տոկոսը:
Նպատակ՝ Այս ՆՀՑ-ի նպատակն է դրդել Վարձակալին բարելավել առկա ջրաչափերի չափման ճշտությունը՝ նվազեցնելու համար ջրի կորուստը և համապատասխան չհաշվառվող ջուրը (ՉՋ):
Հաշվարկման մեթոդ $KPI\ OR2 = \frac{C_{replaced\ or\ calibrated}}{C_{total}} \times 100\ (\%)$ որտեղ՝ <ul style="list-style-type: none">• $C_{replaced\ or\ calibrated}$ –ն Պայմանագրային տարվա ընթացքում (i) նոր բաժանորդների համար տեղադրված ջրաչափերի և (ii) առկա բաժանորդների համար ստուգաչափված ջրաչափերի գումարն է,• C_{total} – ն Պայմանագրային տարվա վերջի դրությամբ բաժանորդների տվյալների բազայում գրանցված բաժանորդների ընդհանուր քանակն է: ՀԿՑ արժեքը պետք է կլորացնել մինչև մեկ տասնորդական:
Սահմանումներ՝ <u>Զրաչափի դաս</u> նշանակում է ISO 4064-ով նախատեսված ջրաչափի դաս <u>Ստուգաչափված ջրաչափ</u> Առկա ստուգաչափված ջրաչափը այն ջրաչափն է, որն ստուգվել է և, անհրաժեշտության դեպքում, ստուգաչափվել հոսքի այնպիսի ճշտության չափ ունենալու համար, որ հավասար

ՆՇՑ OR2՝ Ջրաչափերի փոխարինում և ստուգաչափում

Կամ ավելի բարձր է ISO 4064 դասով նախատեսված սահմանային արժեքից:

Բաժանորդների ջրաչափերի ստուգաչափումը պետք է կատարվի սարքավորումների միջոցով: Վարձակալը պետք է արձանագրի յուրաքանչյուր բաժանորդի ջրաչափը նշելով առնվազն հետևյալ ցուցանիշները՝

- համապատասխան բաժանորդի մոտից ջրաչափի հանման օրը,
- ջրաչափի համարը և տեսակը,
- համապատասխան բաժանորդի հղման համարը բաժանորդների տվյալների բազայում,
- ստուգաչափման օրը և ժամը,
- ստուգաչափումից առաջ չափված ճշտությունը և
- ստուգաչափումից հետո չափված ճշտությունը:

Նոր ջրաչափ

Նոր ջրաչափը պետք է ունենա այնպիսի չափման ճշտություն, որ հավասար կամ ավելի բարձր լինի ISO 4064 դասով նախատեսված սահմանային արժեքից:

Բացառություններ՝ բացառություններ չպետք է արվեն:

Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի OR2-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՇՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի OR2-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

- Վարձակալի կողմից մշակված և կատարված ջրաչափերի փոխարինման և ստուգաչափման պլանի և ռազմավարության ուսումնասիրություն,
- ջրաչափերի փոխարինման և ստուգաչափման պլանի և ռազմավարության վերաբերյալ բարելավումների առաջարկություններ, անհարաժեշտության դեպքում,
- Վարձակալի կողմից հաշվարկված նախնական արժեքների և դրանց վերահաշվարկի աուդիտ,
- ներկայացված ՆՇՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհարաժեշտության դեպքում,
- վարձակալի կողմից OR2-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատական և
- OR2-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

ՆՇՑ CF3՝ Գործառնական ծախսերի ծածկույթ
պատրաստված ֆինանսական հաշվետվության մեջ: <i>Ընդհանուր գործառնական ծախսերը</i> պետք է արտացոլեն գործառնական ծախսերը ֆինանսական աուդիտորի կողմից պատրաստված ֆինանսական հաշվետվության մեջ:
Բացառություններ՝ Կոյուղու ցանցի միջոցով կեղտաջրերի հեռացման ծառայություններում բացառություններ նախատեսված չեն:
Հաշվետվություն՝ Վարձակալը պետք է ներկայացնի հաշվետվություն CF3-ի վերաբերյալ, ինչպես նաև մանրամասն բացվածք համապատասխան հաշվարկների վերաբերյալ:
Ֆինանսական աուդիտորի ներգրավվածությունը՝ Ֆինանսական Աուդիտորը պետք է աուդիտի ենթարկի հասույթը և վարձակալին տրամադրի տարեկան ֆինանսական աուդիտի հաշվետվություն յուրաքանչյուր պայմանագրային տարվա համար՝ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատված կտրվածքով:

- (9) **ՆՇՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները**
ՆՇՑ CS1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը ներկայացված է Աղյուսակ 6-13-ում:

Աղյուսակ 6-13՝ ՆՇՑ CS1-ի Հաշվարկման մեթոդաբանությունը (Բողոքներ և վարձավճարների հետ կապված հարցումներ)

ՆՇՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումներ
Վկայակոչում՝ IWA-QS28, QS29, QS30, QS31, QS32, QS33 և QS34
Նկարագիր՝ Բոլոր բաժանորդների ընդհանուր թվին ընկնող գրանցված բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումների միջին թիվը:
Նպատակ՝ Այս ցուցիչը պետք է բարելավի բաժանորդների բավարարվածության մակարդակը վարձակալի կողմից իրականացվող գործառնությունների նկատմամբ:
Հաշվարկման մեթոդը՝ $IBI\ CS1 = \frac{\text{Գրանցված բողոքների և վարձավճարների հետ կապված հարցումների ընդհանուր թվաքանակ}}{\text{Բաժանորդների ընդհանուր թվաքանակ}}$

ՆՀՑ CS1՝ Բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումներ

Սահմանումներ՝

Գրանցված բողոքներ և վարձավճարների հետ կապված հարցումները դրանք այն բողոքներն ու հարցումներն են, որոնք ստացվել են գրավոր, էլեկտրոնային եղանակով կամ հեռախոսով և որոնք գրանցվել են ջրամատակարարման ընկերության կողմից: Հաշվարկի մեջ մտնող բողոքների տեսակներն են՝

- ջրամատակարարման անընդհատության և ճնշման հետ կապված բողոքներ, օրինակ՝ (ցածր ճնշում, ջրամատակարարման բացակայություն, ջրամատակարարման ժամանակացույցի փոփոխություններ և այլն),
- ջրի որակի վերաբերյալ բողոքներ,
- ընդհատումների վերաբերյալ բողոքներ (վարարում, խցանում, ծորում ջրամատակարարման և կոյուղու համակարգերում),
- վարձավճարների հետ կապված բողոքներ կամ հարցումներ և
- ջրամատակարարման կամ ջրահեռացման նոր միացումների հետ կապված բողոքներ:

Բաժանորդների ընդհանուր թիվը՝ Բաժանորդների ընդհանուր թիվը համապատասխան Պայմանագրային տարվա վերջի դրությամբ բաժանորդների ընդհանուր թիվն է:

Բացառություններ՝ Բացառություններ չպետք է արվեն:

Պահանջներ՝

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում Վարձակալը պետք է նախապատրաստի և իրականացնի Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ուսումնասիրի այդ պլանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի բարելավման համար ուղղված առաջարկություններ:

2) Պայմանագրային երրորդ (3) տարվանից սկսած Վարձակալը պետք է ստանա և գրանցի բոլոր բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները արդեն իսկ գործող Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:

Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի CS1-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի CS1-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

ՆՀՑ CS2՝ Գրավոր բողոք դիմումների արձագանքման ժամանակը

- Բաժանորդի հիմնական տվյալները (անուն, հասցե և այլն),
- Բաժանորդի հղման համարը վերցված Բաժանորդների տվյալների բազայից,
- բողոքի տեսակը,
- բողոքի օրն ու ժամը,
- բողոքի լուծման համար պատասխանատու բաժինը,
- բողոքի լուծման համար պատասխանատու բաժնի հետ կապ հաստատելու օրն ու ժամը,
- Բաժանորդին արձագանքելու օրն ու ժամը և
- բողոքի լուծման օրն ու ժամը:

Բացառություններ՝ Բացառություններ չպետք է արվեն:

Պահանջներ՝

1) Պայմանագրային առաջին (1) և երկրորդ (2) տարիների ընթացքում վարձակալը պետք է նախապատրաստի և իրականացնի Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն: Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է ուսումնասիրի այդ պլանը և, անհրաժեշտության դեպքում, ներկայացնի բարելավմանն ուղղված առաջարկություններ:

2) Պայմանագրային երրորդ (3) տարվանից սկսած Վարձակալը պետք է ստանա և գրանցի բոլոր բողոքները և վարձավճարների հետ կապված հարցումները արդեն իսկ գործող Բաժանորդների սպասարկման կենտրոն(ներ)ի միջոցով:

Հաշվետվություն՝

Վարձակալը պետք է ներկայացնի CS2-ի վերաբերյալ Բազիսային տարվա տվյալների հաշվետվությունում, ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ինչպես նաև հաշվետվություն՝ ՆՀՑ արժեքների և համապատասխան հաշվարկների մանրամասն բացվածքի վերաբերյալ:

Անկախ Տեխնիկական Աուդիտորի ներգրավվածությունը՝ Անկախ Տեխնիկական Աուդիտորը պետք է իրականացնի CS2-ի հետ կապված հետևյալ գործողությունները՝

- Ներկայացված ՆՀՑ արժեքների և դրանց վերահաշվարկի տարեկան աուդիտ, անհրաժեշտության դեպքում,
- Վարձակալի կողմից CS2-ի վերաբերյալ ներկայացված հաշվետվության գնահատում և
- CS2-ի հաշվետվության պատրաստմանը վերաբերող առաջարկություններ:

3.Տուժանքներ հաշվետվությունների և աշխատանքների ուշացումների համար

Վարձակալը տուժանք է վճարում վարձատուին՝ ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում նշված հաշվետվությունների համար նախատեսված պահանջների մեջ չտեղավորվելու համար:

Տուժանքը վճարվում է Վարձակալի կողմից՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ 7-ում նշված հաշվետվությունների համար նախատեսված պահանջների հետևյալ դրույթների մասով հաշվարկի՝

(1) Հաշվետվություն

Եթե վարձակալը խախտում է անհրաժեշտ նյութերի և հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետը, նախատեսված ՀԱՎԵԼՎԱԾ7-ով, կամ չի կատարում հաշվետվությունների համար նախատեսված պահանջները՝ համաձայն ՀԱՎԵԼՎԱԾ7-ի, ապա կիրառվում են հետևյալ տուժանքները՝

ա) Աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրվա համար՝ 15 օրից ավել ուշացնելու դեպքում

բ) Հաջորդ Պայմանագրային տարվա Բիզնես պլան (ներառյալ ուսուցման պլանը)՝

110 000 (հարյուր տաս հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրացույցային օրվա համար՝ 15 օրացույցային օրից ավել ուշացնելու դեպքում

գ) Հաջորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը

110 000 (հարյուր տասը հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր ուշացրած օրացույցային օրվա համար՝ 15 օրացույցային օրից ավել ուշացնելու դեպքում

դ) Հատուկ դեպքերի համար հաշվետվություններ արտակարգ իրավիճակների,

ատահարների, վթարների դեպքում՝ 550 000 (հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տուգանք 3 օրից ավել ուշացնելու համար

ե) Ամսական հաշվետվություններ՝

27 500 (քսանյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

զ) Եռամսյակային հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

է) Կիսամյակային հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

ը) Տարեկան հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու

թ) Միանվագ հաշվետվություններ՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ տուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

ժ) Հիդրավլիկ մոդելներ և GIS տվյալների բազա՝

275 000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամտուգանք յուրաքանչյուր օրացույցային օրվա համար՝ ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվության հանձնման վերջնաժամկետը խախտելու համար

ՀԱՎԵԼՎԱԾ7-ով նախատեսված հաշվետվությունների ուշացման դեպքում տուժանքների առավելագույն չափը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար չպետք է գերազանցի Վարձակալի հասույթի 0.5%-ը:

Հասույթը համապատասխան Պայմանագրային տարվա համար (i) ջրամատակարարման բաշխիչ ցանցի միջոցով Բաժանորդներին մատակարարվող ջրի և (ii) ջրահեռացման համակարգի միջոցով Բաժանորդների կեղտաջրերի հեռացման դիմաց Ջրամատակարարման ընկերության կողմից գանձված ընդհանուր գումարն է առանց ԱԱՀ-ի: Ֆինանսական Աուդիտորը պետք է ստուգի Հասույթը և հասույթերը առանձին զեկուցի համապատասխան Պայմանագրային տարվա ֆինանսական հաշվետվության զեկուցում:

(2) Աշխատանքների ուշացումներ

Այն դեպքերում, երբ Վարձակալն է պատասխանատվություն կրում Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից հաստատված ՄՖԿ գնումների հետ կապված աշխատանքների ուշացման համար, վարձակալը հանձնառության վճար է վճարում ՀՀ Ֆինանսների նախարարության հատուկ հաշվեհամարին, նշված Հավելված 1-ում որպես Վարձակալի Վճար (ՀԱՎԵԼՎԱԾ 1.1.4)՝ վարկի ուշացված գումարների չվճարման համար:

4. Տուժանքների ծանուցում

Յուրաքանչյուր Պայմանագրային տարի Անկախ Տեխնիկական Աուդիտորը Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի նախագծին կից հավելվածով Կողմերին ներկայացնում է նախորդ Պայմանագրային տարվա տուժանքների հաշվարկը: Կողմերը պետք է ստուգեն տուժանքների հաշվարկը: Վարձակալի կողմից վճարման ենթակա տուժանքի գումարի վերաբերյալ ցանկացած անհամաձայնության դեպքում, Կողմերը պետք է իրենց առարկությունները 15 օրվա ընթացքում ներկայացնեն Անկախ Տեխնիկական Աուդիտորին: Վարձակալի կողմից վճարման ենթակա տուժանքի գումարի վերջնական չափը սահմանվում է Անկախ Տեխնիկական Աուդիտորի կողմից՝ Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի ավարտական զեկուցի համաձայն:

Վարձակալի կողմից տուժանքների վճարումն իրականացվում է երեսուն աշխատանքային օրվա ընթացքում՝ Տեխնիկական, կառավարման, շահագործման և պահպանման տարեկան աուդիտի ավարտական զեկուցի ստացման օրվանից: Վարձակալը պետք է փոխանցի վճարման համար անհրաժեշտ գումարը Վարձատուի համապատասխան բանկային հաշվեհամարին:

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայացվող Հաշվետվություններ

Վարձակալը Վարձատուին ստորև բերված հաշվետվությունները պարտավոր է ներկայացնել հետևյալ հաճախականությամբ.

(1). Մեկանգամյա հաշվետվությունների ներկայացում

Վարձակալի կողմից միանգամյա ներկայացման հաշվետվությունները ներառում են հետևյալ փաստաթղթերը՝

- (ա) Ճնշման մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո.
- (բ) Ջրի որակի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո.
- (գ) Ջրի արտադրության մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո.
- (դ) Բաժանորդների բողոքների կառավարման պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո.
- (ե) Կեղտաջրերի և մաքրված կեղտաջրերի մոնիտորինգի պլան և ռազմավարություն՝ ամենաուշը Մեկնարկային օրվանից վեց ամիս հետո.
- (զ) Բազիսային տարվա տվյալների հաշվետվություն՝ ամենաուշը մինչև 2018 թվականի մարտի 31-ը:

Այս պլաններն ու ռազմավարությունները պետք է վերլուծվեն, ուսումնասիրվեն Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից և ենթակա են հաստատման Անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

(2). Հիդրավլիկական մոդելներ և ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազաներ

Վարձակալի կողմից պետք է մշակվեն և պարբերաբար թարմացվեն հետևյալ հիդրավլիկական մոդելները և ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազաները՝

- (ա) Ջրամատակարարման ցանցերի հիդրավլիկական մոդել՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում.
- (բ) Ջրահեռացման ցանցերի հիդրավլիկական մոդել՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում.
- (գ) Ջրամատակարարման ցանցերի ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազա՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում.
- (դ) Ջրահեռացման ցանցերի ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազա՝ ամենաուշը Պայմանագրային 3-րդ Տարվա վերջում.

(3). Տարեկան հաշվետվություններ

- (ա) Վարձակալն իր յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար Վարձատուին պարտավոր է ներկայացնել աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները՝ Կիրառվող օրենսդրությանը և ՖՀՄՍ-ների համաձայն՝ հաջորդ ֆինանսական տարվա երկրորդ եռամսյակի ավարտին:
- (բ) Վարձակալը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա համար պարտավոր է ներկայացնել Տարեկան Հաշվետվություն: Վարձակալի հաշվետվությունը պետք է ներառի կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով տարեկան առաջընթացը, Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով տարեկան առաջընթացը, ինչպես նաև տուժանքների հաշվարկները՝ համաձայն Հավելված 6-ի: Վարձակալի կողմից տարեկան հաշվետվությունները պետք է ներկայացվեն համապատասխան Պայմանագրային տարվա ավարտից հետո 90 օրյա ժամկետում և պետք է ներառեն նաև 4-րդ եռամսյակի պահանջվող հաշվետվությունը: Տարեկան հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում: Վարձակալը պետք է Անկախ տեխնիկական աուդիտորի հետ համաձայնեցնի հաշվետվությունների ձևաչափերն ու բովանդակությունը, իսկ Անկախ տեխնիկական աուդիտորը մոնիտորինգի է ենթարկելու տեխնիկական հարցերի մասով հաշվետվողականության ճշգրտությունը:
- (գ) Վարձակալը յուրաքանչյուր տարվա սկզբից 60 օր առաջ պարտավոր է ներկայացնել հաջորդ Պայմանագրային տարվա Բիզնես պլանը՝ ներառյալ ուսուցման պլանը:
- (դ) Վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր տարվա սկզբից 60 օր առաջ ներկայացնել հաջորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիրը, իսկ Պայմանագրային առաջին տարվա համար՝ Մեկնարկային օրվանից 90 օր հետո:
- (ե) Վարձակալը պարտավոր է յուրաքանչյուր Պայմանագրային տարվա մինչև Հուլիսի 1-ը ներկայացնել նախորդ Պայմանագրային տարվա Պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագրի /ՊԿԱԾ/ իրկանացման հաշվետվությունը:

(4). Կիսամյակային հաշվետվություններ

- (ա) Վարձակալը յուրաքանչյուր Պայմանագրային տարվա նախորդ վեց ամիսների համար պարտավոր է ներկայացնել հավաքագրման, վճարումների և ծախսերի տվյալները /ներառյալ ՊԿԱԾ-ով կատարված/: Տվյալները պետք է ներկայացվեն ըստ Բաժանորդների խմբերի և տեղեկություններ պարունակեն սոցիալապես անապահով խմբի Բաժանորդների վերաբերյալ:

(5). Եռամսյակային հաշվետվություններ

- (ա) Յուրաքանչյուր Պայմանագրային տարվա առաջին երեք եռամսյակների հաշվետվությունները Վարձակալի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան եռամսյակների ավարտից հետո 45 օրյա ժամկետում, որտեղ 1-ին եռամսյակը սահմնվում է որպես հունվարի 1-ին սկսվող և մարտի 31-ին ավարտվող, 2-րդ եռամսյակը՝ ապրիլի 1-ին սկսվող և հունիսի 30-ին ավարտվող, իսկ 3-րդ եռամսյակը՝ հուլիսի 1-ին սկսվող և սեպտեմբերի 30-ին ավարտվող ժամանակահատված: Վարձակալի եռամսյակային հաշվետվությունը պետք է ներառի

կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով համապատասխան եռամսյակի ընթացում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով եռամսյակային առաջընթացը: Եռամսյակային հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում:

(6). Ամսական հաշվետվություններ

(ա) Վարձակալը ամսական հաշվետվությունները պետք է ներկայացնի յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 20 օրյա ժամկետում: Վարձակալի ամսական հաշվետվությունը պետք է ներառի կորպորատիվ, տեխնիկական և ֆինանսական առումով համապատասխան ամսվա ընթացում արձանագրված առաջընթացը, ինչպես նաև Հավելված 6-ում ներկայացված հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ) և Հավելված 6-ում ներկայացված ներքին համեմատական ցուցանիշների (ՆՀՑ) գծով ամսական առաջընթացը: Ամսական հաշվետվությունների գծով հաստատում չի պահանջվում:

(7). Հատուկ դեպքերի համար հաշվետվություններ

Վարձակալը պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել Վթարների, դժբախտ պատահարների և տեղի ունեցած այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք կարող են վնաս հասցնել Վարձատուին որպես ջրային տնտեսության համար պատասխանատու պետական մարմին: Վթարների մասին Վարձակալը պարտավոր է անմիջապես (առանց անտեղի ձգձգման) հեռախոսազանգի միջոցով տեղեկացնել Վարձատուին և գրավոր հաշվետվություն ներկայացնել 3 օրվա ընթացքում:

(8). ՄՖԿ գնումների իրականացման, սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման հաշվետվություններ

- (ա) Վարձակալը ՄՖԿ գնումների վերաբերյալ պարտավոր է հաշվետվություններ ներկայացնել՝ համաձայն ՄՖԿ գնումների ընթացակարգերի պահանջների:
- (բ) Շրջակա Միջավայրի վերաբերյալ Հաշվետվությունները պետք է ներկայացվեն՝ համաձայն Կիրառվող օրենսդրության և համապատասխան ՄՖԿ կիրառելի ստանդարտների, եթե վերջիններին համապատասխանությունը պահանջվում է ՄՖԿ կողմից:
- (գ) Սոցիալական ազդեցության մոնիտորինգ. Վարձակալը պարտավոր է սոցիալական ազդեցության մոնիտորինգի տարեկան ծրագիր կազմել, որը պետք է ներառի. կայուն, բարձրակ, 24-ժամյա ջրամատակարարման ապահովման ուղղությամբ գրանցված առաջընթացը, ջրամատակարարման ծառայությունների հասանելիությունը բոլոր սոցիալական խմբերի համար, և շտկիչ գործողությունների նկարագրություն այն դեպքերի համար, երբ ծրագրի նպատակները բավարար կերպով չեն իրագործվել:

Ներկայացվող Հաշվետվությունների ձևաչափը

Վարձակալը պարտավոր է Վարձատուին առաջարկել տարբեր հաշվետվությունների համար նախատեսված ձևաչափերը Վարձակալության Մեկնարկային ժամկետից հետո ամենաուշը 60 օր հետո: Վարձատուն պարտավոր է 30 օրվա ընթացքում հաստատել առաջարկված ձևաչափերը կամ չհաստատելու դեպքում Վարձակալին տեղեկացնել ձևաչափերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: Վարձատուն կարող է անհրաժեշտության դեպքում Վարձակալին առաջարկել վերանայել համապատասխան ձևաչափերը՝ հաշվի առնելով Անկախ տեխնիկական աուդիտորի կարծիքը՝ այդ մասին տեղեկացնելով Վարձակալին:

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՀԱՅՏԱՏՈՒԻ ՀԱՅՏ

ՀԱՎԵԼՎԱԾ 9. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՁԵՎ

ՀՀ գյուղատնտեսության նախարարության Զրային տնտեսության պետական կոմիտեին.

Հարգելի տիկնայք և/կամ պարոնայք,

Սույն երաշխիքը վերաբերում է Երևանում Վարձակալության պայմանագրին (*այսուհետք՝ Պայմանագիր*), որը կնքվել է (ամսաթիվը) Ձեր (նշել Հայրապետի անունը) և (նշել Վարձակալի անունը) միջև: Մենք հավաստում ենք, որ սույն գրության մեջ մեծատառով նշված տերմինները համապատասխանում են Պայմանագրում մեծատառով նշված տերմիններին:

Սույն նամակով մենք՝ ներքոստորագրյալներս (Բանկի անվանումը), բանկը (կամ ընկերություն), որը գրանցված է (նշել երկրի անունը) օրենսդրության ներքո, որը գրանցված/հիմնական գրասենյակ ունի (նշել Երևանում գրանցված բանկի հասցեն), սույնով անվերապահորեն երաշխավորում ենք Պայմանագրի համաձայն Վարձակալի կողմից Ձեզ վճարման ենթակա գումարները՝ մինչև [...] ՀՀ դրամ գումարով՝ համաձայն Պայմանագրի ԸՊ 7.13 հոդվածի: Մենք ընդունում ենք, որ այս գումարը, եթե ու այնքանով, որ այն չի օգտագործվել երեք անընդմեջ օրացուցային տարիների ընթացքում, Վարձատուից և Վարձակալից համատեղ պատշաճ ծանուցման առկայության պարագայում կարող է նվազեցվել մինչև սկզբնական մեծության 50 (հիսուն) տոկոսը: Ժամկետի ավարտից մեկ տարի առաջ Կատարողական երաշխիքի գումարը պետք է լինի հավասար սկզբնական մեծության 100 (հարյուր) տոկոսին:

Մենք պարտավորվում ենք սույն Կատարողական երաշխիքի համաձայն վերը նշված գումարի սահմաններում վճարել նախատեսված որևէ գումար կամ գումարներ, եթե Հայտատուն կամ Վարձակալը որևէ պատճառով ի վիճակի չլինեն իրականացնելու Պայմանագրի պահանջները կամ որևէ կերպ խախտեն Պայմանագրով նախատեսված պարտականությունները՝ Ձեր կողմից այդ մասին ստացված առաջին գրավոր պահանջի հիման վրա, որը ստորագրված կլինի Ձեր լիազորված ներկայացուցչի կողմից, և որին կցված կլինի նաև Անկախ Տեխնիկական Աուդիտորի հայտարարագիրն առ այն, որ Հայտատուն և Վարձակալը Պայմանագրով նախատեսված պարտականությունների առումով խախտումներ ունեն, առանց Ձեր կողմից դրա հիմքերի կամ պատճառների ներկայացման անհրաժեշտության, և առանց Հայտատուին կամ Վարձակալին իրավունք տալու վիճարկել կամ քննարկել այդ պահանջը: Սույնով մենք հայտնում ենք, որ Դուք անհրաժեշտություն չեք ունենա Հայտատուից կամ Վարձակալից որևէ գումար պահանջել՝ նախքան մեզ նման պահանջ ներկայացնելը:

Սույն Կատարողական Երաշխիքի ներքո մենք պարտավորվում ենք վճարել հետևյալ երկու գումարներից նվազագույնը՝ Ձեր պահանջած գումարը, կամ սույն Կատարողական Երաշխիքով սահմանված գումարը, սույն Կատարողական Երաշխիքի գործողության ժամկետի ընթացքում համապատասխան կարգով ներկայացված պահանջի առկայության դեպքում՝ առանց իրավունք վերապահելու ճշտել վճարման պահանջի օրինականությունը:

Սույն Կատարողական Երաշխիքը գործում է (նշել ամսաթիվը, երբ է սկսվում երաշխիքի գործողությունը՝ համաձայն ԸՊ Հոդված 1.1.-ի) մինչև (նշել ամսաթիվը, երբ կավարտվի երաշխիքի գործողությունը՝ համաձայն ԸՊ Հոդված 3.2-ի) : Սույն Կատարողական Երաշխիքի

վավերականությունն ու իրագործումը կարգավորվում և մեկնաբանվում են Միացյալ Թագավորության օրենսդրությամբ:

Սույն Կատարողական երաշխիքից բխող կամ դրան առնչվող բոլոր վեճերը Բանկի և Վարձատուի միջև պետք է ներկայացվեն միջնորդ դատարանի պարտադիր քննարկմանը մինչև Լոնդոնի Միջազգային միջնորդ դատարանի կանոններով նախատեսված միակ միջնորդ դատավորի ընտրությունը: Միջնորդ դատարանի կողմից քննությունը կղեկավարվի Լոնդոնի միջազգային միջնորդ դատարանի կանոններով: Նշված քննությունների դեպքում հաղթող ճանաչված Կողմն իրավունք ունի մյուս Կողմից հատուցում ստանալ տվյալ դատավարության հետ կապված իրավապաշտպանի և այլ ծախսերի դիմաց: Բացառությամբ սույն գրության մեջ նախատեսված դեպքերի՝ միջնորդ դատարանի քննարկումները պետք է իրականացվեն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող ՄԱԿ-ի Միջազգային Առևտրային Օրենքի Հանձնաժողովի (UNCITRAL) կողմից սահմանված կանոնների համաձայն: Եթե որևէ պատճառով որևէ միջնորդ դատավոր ի վիճակի չէ իրականացնել իր պարտականությունները, ապա նշանակվում է փոխարինող միջնորդ դատավոր նույն այն եղանակով, ինչպես նշանակվել էր առաջին դատավորը: Միջնորդ դատավորը չպետք է Հայտատուի կամ Վարձակալի հայրենի երկրի կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինի: Այս իմաստով հայրենի երկիր նշանակում է հետևյալը. 1. Վարձակալի կամ Հայտատուի գրանցման երկիրը, 2. այն երկիրը, որտեղ գտնվում է Վարձակալի կամ Հայտատուի գործունեության հիմնական վայրը, 3. Վարձակալի կամ Հայտատուի բաժնետերերի կամ փոխկապակցված անձանց մեծամասնության քաղաքացիության երկիրը: Եթե Կողմերն այլ համաձայնության չեն գալիս, լսումները տեղի կունենան Միացյալ Թագավորության Լոնդոն քաղաքում, և անգլերենը կլինի պաշտոնական լեզուն բոլոր նպատակներով:

Բացառությամբ սույն գրությամբ նախատեսվող փաստաթղթերի, որևէ այլ փաստաթուղթ կամ գործողություն չի պահանջվի,՝անկախ որևէ կիրառվող օրենքից և կանոնակարգող փաստաթղթից:

Սույն Կատարողական Երաշխիքի ներքո մեր պարտավորությունը գործողության ավարտից անմիջապես հետո իրավական ուժ չի ունենա՝ անկախ նրանից այն կվերադարձվի, թե ոչ, և որևէ պահանջ չի կարող ներկայացվել գործողության ավարտից հետո կամ Ձեր պահանջով մեր կողմից վճարված գումարների ամբողջական գումարը ստորև երաշխավորված գումարին հավասարվելիս՝ կախված այն բանից, թե որն ավելի վաղ կլինի:

Սույն Կատարողական Երաշխիքի ներքո բոլոր ծանուցումները պետք է տրվեն գրանցված փոստային (ավիափոստ) ծառայության միջոցով՝ հետևյալ հասցեում գրանցված հասցեատիրոջը կամ որևէ այլ եղանակով, որի վերաբերյալ Երաշխիքի կողմերը համաձայնության կգան:

Մենք սույնով համաձայնվում ենք, որ Պայմանագրի որևէ մասը կարող է փոփոխվել, թարմացվել, երկարաձգվել, ձևափոխվել, զիջվել, բաց թողնվել կամ դուրս հանվել Ձեր և Վարձակալի միջև փոխադարձ համաձայնությամբ, որի հետ կապված սույն Կատարողական Երաշխիքը կարող է փոխանակվել կամ հանձնվել առանց որևէ կերպ ազդելու մեր պարտավորությունների վրա, առանց մեզ տեղեկացնելու անհրաժեշտության, կամ մեր կողմից լրացուցիչ համաձայնության, հաստատման կամ երաշխիքի տրամադրման անհրաժեշտության: Այդուհանդերձ, երաշխավորված գումարը չպետք է ավելանա կամ պակասի:

Որևէ կիրառվող օրենսդրության ներքո որևէ գործողություն, դեպք կամ պայման չի կարող ազդել սույն Երաշխիքով մեր պարտավորությունների կատարման վրա, և մենք հրաժարվում ենք մեր կողմից

նման օրենքների օգտագործման մեր իրավունքից, անյպես որ բոլոր առումներով Երաշխիքի ներքո մեր պարտավորությունները մնան ոչ պայմանական և ոչ ետ կանչման ենթակա:

Հարգանքով՝
[Բանկի անունը]

Լիազոր ներկայացուցչի ստորագրությունը

ՀԱՎԵԼՎԱԾ 10. ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

ՀԱՎԵԼՎԱԾ 11. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԵՐԵՎԱՆ ԶՈՒՐ», «ՀԱՅԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ», «ԼՈՌԻ-ԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ»,
«ՇԻՐԱԿ-ԶՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ԵՎ «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՈՒ ՊԱՀՊԱՆՎՈՂ
ԶՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

23-ը սեպտեմբերի, 2016թ.

Հանդիպման արձանագրություն

ՀՀԳՆ ՋՏՊԿ-ՄԵԾՁԲ-N15/1 մրցույթի Գնահատող հանձնաժողովը՝ «Վեոլիա» ընկերության Ֆինանսական առաջարկը բացելուց հետո, ս.թ. հուլիսի 26-ի նիստի որոշմամբ (N19) «Վեոլիա» ընկերությանը ճանաչել է որպես մրցույթի հաղթող:

Քանի որ «Վեոլիա»-ի կողմից առաջին պայմանագրային տարիների համար առաջարկված սակագինը ներկայիս սակագնից ավելի բարձր էր, հուլիսի 29-ին «Վեոլիա» ընկերությանը բանակցությունների հրավեր ներկայացվեց՝ սակագնի կորը վերանայելու նպատակով:

Կողմերը Երևանում բանակցությունների երեք փուլ վարեցին.
1-ինը՝ 2016թ.-ի օգոստոսի 2-5-ն ընկած ժամանակահատվածում,
2-րդը՝ 2016թ.-ի օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում,
3-րդը՝ 2016թ.-ի սեպտեմբերի 20-23-ն ընկած ժամանակահատվածում:

Նշված բանակցությունների արդյունքում կազմվեց սույն Հանդիպման արձանագրությունը, որը, համաձայն Վարձակալության պայմանագրի սահմանման, հանդիսանում է որպես Պայմանագրի անբաժան մաս:

1. Գերշահույթ (Հոդված 9.3)

«Վարձակալության պայմանագրի» 9.3 հոդվածի կապակցությամբ՝ Կողմերը համաձայնում են յուրաքանչյուր տարի գերշահույթը հաշվարկել միջին տարեկան զուտ շահույթի հիման վրա՝ ըստ հետևյալ բանաձևի.

$$P_{ai} = (P_1 + P_2 + \dots + P_i) / I,$$

որտեղ P_{ai} –ը I տարվա տարեկան միջին զուտ շահույթն է, իսկ (P_1, P_2, \dots, P_i) –ն՝ (1, 2, ..i, ..) պայմանագրային տարիների, դրական կամ բացասական, տարեկան զուտ շահույթներն են:

Վարձակալի և Վարձատուի միջև բաշխվող գերշահույթը, և երբ այն դրական է, համարժեք կլինի հետևյալին՝ $P_{ai} - 10\% * TO_i$,

որտեղ՝ TO_i –ը Վարձակալի շրջանառությունն է I տարվա համար:

2. Սակագնի ճշգրտման կիրառման հետաձգում

Լիցենզիայի Հավելված 3-ի 16-րդ կետը Կողմերին հնարավորություն է տալիս հետաձգել սակագնի ճշգրտվող մասը:

«Վեոլիա»-ն բարձրացրեց այն հարցը, որ Լիցենզիայի Հավելված 3-ի 16-րդ կետով նախատեսված սակագնի ճշգրտման հաշվարկը չի ներառում համապատասխան բոլոր բաղադրիչները:

Քանի որ նման հարցը հնարավոր չէ ամրագրել բանակցությունների ժամանակացույցում, Կողմերը համաձայնեցին դրա կարգավորումը հետաձգել ՀՕԿՀ-ի հետ Մեկնարկային օրվանից հետո՝ Վարձատուի կողմից համապատասխան լիազորություն ստանալու դեպքում:

3. Գույքի նկարագիրը

Կողմերը համաձայնում են ներառել.

- Նոր՝ (2) պարբերություն Հավելված 3-ում:

«Վարձակալը պետք է իրականացնի Հավելված 3-ում նշված գույքի լրացուցիչ տեխնիկական աուդիտ, որը կսահմանի յուրաքանչյուր գույքի բնույթը, քանակը, տեխնիկական և շահագործման կարգավիճակը: Սույն տեխնիկական աուդիտի արդյունքները պետք է ներկայացվեն ԱՏԱ-ի վերանայմանը: Անհրաժեշտության դեպքում՝ Հավելված 3-ի գույքի ցանկը կփոփոխվի»:

- Նոր՝ (ա) պարբերություն 6.7.1 (1) ենթակետում.

«Գույքի ցանկի վերանայում Վարձակալի հետ (Վարձակալության պայմանագրի Հավելված 3)՝ անհրաժեշտության դեպքում»:

4. Հողի իրավունք (Հողված 2.2 (5))

Կողմերը համաձայնեցին հանել հետևյալ բառերը. («անհրաժեշտության դեպքում՝ Երրորդ անձանց համաձայնությամբ»):

5. ՀԿՑ-ներ

Կողմերի ըմբռնումը ՀԿՑ-ների կապակցությամբ նկարագրված է սույն Հանդիպման արձանագրության Հավելված 1-ում:

6. Անկախ տեխնիկական աուդիտորի (ԱՏԱ) նշանակում

Կողմերը համաձայնում են, որ Վարձակալության պայմանագրի 6.7.1 կետի կապակցությամբ, նախքան ԱՏԱ-ի ընտրության մրցույթին ընթացք տալը, Վարձատուն Վարձակալին պետք է ներկայացնի նախաորակավորված աուդիտորների ցանկ: Վարձակալը պետք է իրավունք ունենա առարկել մեկ կամ ավելի նախաորակավորված ԱՏԱ-ների թեկնածությունները, որի դեպքում Վարձակալը Վարձատուին պետք է տրամադրի համապատասխան ողջամիտ հիմնավորում:

Այնուհետև, Կողմերը համաձայնեցին, որ Վարձատուն և Վարձակալը պետք է ստորագրեն եռակողմ պայմանագիր ԱՏԱ-ի հետ:

7. Գործող օրենքի փոփոխություն (Հոդված 3.8.7)

Կողմերը համաձայնում են 3.8.7(5) կետի վերջում ներառել հետևյալ պարբերությունը.

«Կողմերը, այնուամենայնիվ, չեն նախաձեռնի արբիտրաժի միջոցով հարցի լուծման ընթացակարգը՝ համաձայն 3.8.7(5) կետի, նախքան Վարձատուի կողմից ֆինանսական փոխհատուցման հարցի կարգավորման նպատակով բոլոր սպառիչ քննարկումների ավարտը: Ի դեպ, նման քննարկումները պետք է տեղի ունենան սույն ենթակետում սահմանված ժամկետում»:

8. Արբիտրաժ (Հոդված 12)

Կողմերը համաձայնում են փոփոխել 12-րդ հոդվածը՝ համաձայն սույն Հանդիպման արձանագրության Հավելված 2-ի համապատասխան կետերի:

9. Մանրաձախ բազիսային սակագին

Կողմերը համաձայնեցին սույն Հանդիպման արձանագրությանը կից Հավելված 3-ում նկարագրված մանրաձախ բազիսային սակագներին:

Կազմված՝ 2016թ.-ի սեպտեմբերի 23-ին, ք. Երևանում

Պարոն Արամ Հարությունյան

Ջրային տնտեսության պետական կոմիտեի (ՋՏՊԿ) անունից

Տիկին Մալիկա Գենդուրի

«Վեոլիա»-ի անունից

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

23-ը սեպտեմբերի, 2016թ.

Ծրագրի խորհրդատուի կողմից վերանայված պարզաբանումներ

<i>Համաձայնեցված ձևակերպումը</i>		<i>Կարգավիճակը</i>
<p>QS1: Ջրամատակարարման շարունակականություն</p>	<p>Համաձայնեցված</p>	<p>Համաձայնեցված</p>
<p>Երևանի մեթոդաբանությունը հաստատող նոր սահմանում</p>	<p>«Պայմանագրային տարվա կտրվածքով օրական միջին չափված ժամերի քանակն է, որի ընթացքում ջուրը մատակարարվել է որպես ըստ բաժանորդի կշռյալ, հիմնվելով ծորակի մոտ ջուր ստացող բաժանորդների քանակի վրա՝ յուրաքանչյուր չափման միջև ընդմիջումների ընթացքում (չափման ինտերվալում)»:</p>	<p>Համաձայնեցված</p>
<p><u>Չափումների միջև</u> <u>ընդմիջումները</u> Լոգերների պլան</p>	<p>Ճնշման լոգերներով չափումների միջև ընդմիջումները պետք է լինեն մեկ ժամից ոչ ավելի: Վարձակալը պետք է ԱՏԱ-ի հետ համաձայնեցնի սպասարկման տարածքների օպտիմալ ծածկույթը ըստ ճնշման լոգերների: Սպասարկման տարածքները համարվում են «ջրամատակարարման տարածք/գոտի»: Սույն տերմինը նախատեսված չէ ընկալելու այնպես, ինչպես մեկնաբանվում է «Համապարփակ տվյալների հաշվետվությունում» և այլ փաստաթղթերում օգտագործված «ջրամատակարարվող տարածք/գոտի» տերմինը: Այս համատեքստում այն օգտագործվում է սույն ՀԿՑ-ն հաշվարկելու նպատակով: Սույն ՀԿՑ-ի առումով մի խումբ գյուղեր կարող են խմբավորվել որպես մեկ «ջրամատակարարման տարածք/գոտի»:</p>	<p>Համաձայնեցված</p>

	Համաձայնեցված ձևակերպումը	Կարգավիճակը
	<p>Հաշվի առնելով ճնշման մոնիթորինգի համակարգի արագ նախագծման համար առկա սահմանափակ տեղեկատվությունը, ինչպես նաև իրականացման համար սահմանափակ ծավալները՝ ընդունվում է, որ տվյալների աստիճանաբար հասանելիության դեպքում կարող են փոփոխություններ պահանջվել, և վերջիններս պետք է հաշվի առնվեն ԱՏԱ-ի կողմից ճնշման մոնիթորինգի համակարգի իրականացման աստիճանը գնահատելու ընթացքում:</p> <p>Չտերադրված լոգերների հետևանքով բացակայող չափումները կհամարվեն որպես անհամապատասխան:</p>	
<p>Մեծածախ ջրամատակարարում ստացող գյուղերի հաշվարկում</p>	<p>Մեծածախ ջրամատակարարման ծառայություն ստացող գյուղերը չեն ներառվում սույն ՀԿՑ-ի հաշվարկում:</p>	<p>Համաձայնեցված</p>
<p>Լոգերներով չչափված կամ բացակայող չափումներ</p>	<p>Պայմանագրային տարիների ընթացքում Երևան քաղաքից դուրս յուրաքանչյուր լոգերի կողմից չչափված կամ բացակայող չափումների առավելագույնը 10%-ը կարելի է բացառել հաշվարկումից՝ համարելով, որ այդ ժամանակն անհրաժեշտ է եղել համապատասխան ճնշման լոգերի սպասարկման համար:</p>	<p>Համաձայնեցված</p>
<p>QS2: Մատակարարվող ջրի որակը</p>		
<p>Ընդհանուր՝ նմուշառում և թեստեր</p>	<p>Եթե 1-ին պայմանագրային տարվա ընթացքում ջրի կոշտության չափումների օրական խմբաքանակի տատանումների գործակիցը (տատանում = ստ. շեղում/միջին*100) լինի 33%-ից պակաս, սա կհամարվի որպես հիմք՝ կոշտության չափումների նմուշառման հաճախականությունն օրականից ամսական նվազեցնելու համար:</p>	<p>Համաձայնեցված</p>
<p>Մնացորդային քլոր</p>	<p>Արտակարգ իրավիճակների և այն հիդրավիլիկական աշխատանքների իրականացման դեպքում, որոնք առավելագույն կոնցենտրացիայի մակարդակը գերազանցելու անհրաժեշտություն կառաջացնեն՝ համաձայն ԱՏԱ-ի կողմից հաստատման, Վարձատուն համաձայնում է նշված մակարդակը գերազանցելու համար սուղանքներ չկիրառել:</p>	<p>Համաձայնեցված</p>

	Համաձայնեցված ձևակերպումը	Կարգավիճակը
Պոտորություն և կոշտություն	Պոտորության և կոշտության բաղադրիչները չպետք է հաշվի առնվեն սույն ՀԿՑ-ի տուգանքի հաշվարկում, եթե առկա մաքրման կայաններն ու շահագործման նպատակով վարձակալված աղբյուրներն ի վիճակի չեն համապատասխանել կանոնակարգող ստանդարտներին:	Համաձայնեցված
KPI CF1: Չհաշվարկված ջուր Հարկում	Սույն ՀԿՑ-ում չհաշվարկված ջրի հաշվարկը բացառապես սույն Պայմանագրի կատարողական ցուցանիշի սահմանման նպատակով է և այն չի ներառում ճանաչված (ընդունված) օրինական սպառումներն ու ջրի համակարգի օպերատորի կողմից անխուսափելիորեն կրած կորուստները, հետևաբար այս ցուցանիշն այլ նպատակներով օգտագործվել չի կարող:	Համաձայնեցված

Հողված 12. Վեճերի կարգավորում

12.1. Բարյացակամություն

Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է հարգել մյուս Կողմի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և իրականացնել բոլոր միջոցառումները Պայմանագրի նպատակներն իրագործելու համար:

12.2. Պայմանագրի գործողությունը

Կողմերն ընդունում են Ժամկետի ընթացքում բոլոր հնարավոր պատահականությունների կանխատեսման անհնարինությունը և հաստատում են Պայմանագրի պահանջները բարեխղճորեն և առանց որևէ Կողմի շահերը վնասելու կատարելու իրենց մտադրությունը: Եթե Ժամկետի ընթացքում Կողմերից որևէ մեկի կարծիքով Պայմանագրի պահանջները կատարվում են ոչ բարեխղճորեն, ապա Կողմերը պարտավորվում են բոլոր միջոցները ձեռնարկել տվյալ անարդարության պատճառը կամ պատճառները վերացնելու համար, այդուհանդերձ սույն ԸՊ 12.2 կետով նախատեսված գործողությունների շուրջ համաձայնության չգալը կարող է հանգեցնել դատական կարգով լուծման ենթակա վեճի՝ համաձայն ԸՊ 12.4 կետի:

12.3. Միջնորդ

Կողմերին Պայմանագրի դրույթների խախտման վերաբերյալ վեճը բարեկամաբար լուծելու իրենց մտադրությունն իրագործելու հարցում աջակցելու նպատակով Կողմերը պարտավոր են հնարավորինս արագ կերպով որպես անկախ Միջնորդ ընտրեն ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում աշխատանքի զգալի փորձ ունեցող և անկախ Երրորդ անձի, որը Կողմերին կաջակցի վեճերը բարեկամաբար բանակցելու հարցում: Միջնորդն իրավունք ունի Կողմերի ցանկությամբ կամ Միջնորդի առաջարկությամբ ժամանակ առ ժամանակ առանձին-առանձին կամ համատեղ խորհրդակցել Կողմերի հետ: Միջնորդի կողմից արված առաջարկությունները պարտադիր չեն ոչ մի Կողմի համար: Կողմերը համաձայնում են, որ եթե բարեկամաբար լուծման մտադրությամբ բանակցությունները վեճի լուծման չեն հանգեցնում, ինչպես նախատեսված է սույն կետով, Միջնորդի դիտողությունները կամ առաջարկությունները կարող են չկիրառվել Կողմերից որևէ մեկի կողմից հետագա դատական վարույթների կամ արբիտրաժի քննության ընթացքում, և Կողմերը պարտավոր են դրանք գաղտնի պահել: Միջնորդի

ծառայությունների դիմաց ծախսերը հավասարապես բաշխվում են Վարձատուի և Վարձակալի միջև:

12.4. Արբիտրաժի իրավունք

Սույն Պայմանագրի մեկնաբանմանը, կատարողականությանը կամ խախտմանն առնչվող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ հայցերը (ներառյալ վերջինիս խախտումը, դադարեցումը կամ վավերական չլինելը), որոնք բարեկամաբար չեն լուծվում (30) օրվա ընթացքում.

(ա) մեկ Կողմի՝ մյուս Կողմից հարցը բարեկամաբար լուծելու խնդրանքի ստացման օրվանից հետո կամ

(բ) այն պահից սկսած, երբ ԸՊ 12.3 կետի համաձայն ընտրված Միջնորդը գրավոր տեղեկացրել է Կողմերին, որ Միջնորդի կարծիքով վեճը հնարավոր չէ բարեկամաբար լուծել խելամիտ ժամանակահատվածի ընթացքում,

կախված այն հանգամանքից, թե վերոնշյալներից որն է վերջինը տեղի ունեցել,

Կողմերից յուրաքանչյուրի պահանջի դեպքում դրանք կարող են ներկայացվել Արբիտրաժ՝ ԸՊ 12.5, 12.6 և 12.7 կետերի համաձայն: Սույն ԸՊ 12.4 կետում ներառված որևէ դրույթ նպատակ չունի որևէ կերպ փոփոխել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան կարգավորող այն մարմինների լիազորությունները, իրավասությունները կամ ընթացակարգերը, որոնք Կիրառվող օրենսդրության համաձայն Հայտատուի կամ Վարձակալի գործունեության նկատմամբ որևէ լիազորություններ ունեն, կամ էլ որևէ կերպ ազդել դրանց վրա: Որևէ կասկածից խուսափելու նպատակով՝ արբիտրաժի իրավունքը չի կիրառվում Պայմանագրից բացի որևէ այլ համաձայնագրի նկատմամբ:

12.5. Արբիտրաժի կարգավորումը

Սույն Պայմանագրի մեկնաբանմանը, կատարողականությանը կամ խախտմանն առնչվող բոլոր վեճերը, տարաձայնությունները կամ հայցերը (ներառյալ խախտումը, դադարեցումը կամ վավերական չլինելը) պետք է ի վերջո կարգավորվեն Հաշտեցման կանոնների կամ Փարիզի Առևտրի միջազգային պալատի (ԱՄՊ) (Արբիտրաժի կանոններ) համաձայն՝ այդ Արբիտրաժային կանոնների համաձայն նշանակված երեք (երեք) արբիտրերից կազմված արբիտրաժային տրիբունալի կողմից:

Եթե կողմերը համաձայնության են եկել, որ վեճը վերաբերվում է տեխնիկական խնդրի, նրանք կարող են համաձայնության գալ միանձնյա արբիտր նշանակելու:

մասին: Արբիտրաժային վարույթը նախաձեռնած Կողմի կողմից մյուս կողմին ուղարկված այդպիսի արբիտրի անունի վերաբերյալ մյուս Կողմին ուղղված առաջարկության ստացումից հետո 30 օրվա ընթացքում արբիտրի անձի վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ցանկացած Կողմ կարող է դիմել Առևտրի Միջազգային Պալատ (ԱՄՊ) թվով հինգից ոչ պակաս թեկնածուների ցուցակի համար, ու այդ ցուցակի ստացումից հետո հերթով կջնջեն այդ ցուցակից անուններ և վերջին մնացած թեկնածուն կլինի վեճը քննող միանձնայա արբիտրը: Եթե վերջին մնացած թեկնածուն չի որոշվում ցուցակի օրվանից 60 օրվա ընթացքում, ԱՄՊ-ն ցանկացած Կողմի պահանջով կնշանակի այդ ցուցակից կամ այլ կերպ միանձնյա արբիտրի այդ վեճի առարկայի համար:

12.6. Արբիտրաժի կանոնները

Եթե սույնով այլ բան նախատեսված չէ, դատավարությունն իրականացվում է Արբիտրաժի կանոնների համաձայն:

12.7. Գործի քննման վայրը, լեզուն

Սույն Պայմանագրի վերաբերյալ դատավարության կապակցությամբ.

- (1) դատավարությունը պետք է ընթանա Իտալիայի Հռոմ քաղաքում, եթե Կողմերն այլ կերպ չեն համաձայնվել,
- (2) դատավարության դեպքում պաշտոնական լեզուն անգլերենն է և
- (3) պետք է կիրառվի Գործող օրենսդրությունը:

BID PRICE FORM / ՀԱՅՏԻ ԳՆԻՔ ԶԵՎԱԿՐԱԾ



		Վարձատրության նախարարին նախընտրելի առկներ (I)														
	Name of base values (in number)	1 (2017)	2 (2018)	3 (2019)	4 (2020)	5 (2021)	6 (2022)	7 (2023)	8 (2024)	9 (2025)	10 (2026)	11 (2027)	12 (2028)	13 (2029)	14 (2030)	15 (2031)
1	Retail water supply base volume, mln CM	150	155	162	169	176	177	177	170	160	152	137	128	123	115	108
2	Retail water supply base volume, mln CM	123	127	131	135	139	143	148	151	155	159	162	165	168	171	174
4	Tariff share subject to adjustment for inflation	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%
5	Tariff share subject to adjustment for electricity tariffs	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%
6	Tariff share not subject to adjustment	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%
7	Bulk water supply base tariff*	30.0	31.0	32.4	33.8	35.2	35.4	35.4	34.0	32.0	30.4	27.4	25.6	24.6	23.0	21.6
8	Bulk Wastewater Base Tariff**	15.0	15.5	16.2	16.9	17.6	17.7	17.7	17.0	16.0	15.2	13.7	12.8	12.3	11.5	10.8
9	Yerevan Metro Tariff**	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0

Note: * AMD/CM
** Base Tariff for Yerevan Met * <=5 րում/ձ3
CM = cubic meters; mln CM = million ** <= րում/ձ3

ձ3=խորանարդ մետր
մլն ձ3 – միլիոն խորանարդ մետր